Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

J 35 9

ՇՈՀԵ

Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք.

Ռ. Կ. Կ.
13-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ
ՆԱԽՈՐԵՅԻՆ

ՀՈԴՎԱԾՆԵՐ	Ընկ. ընկ. Զինովյևի, Պրեոբրաժենսկու, Տրոցկու.
ԶԵԿՈՒՅՈՒՄՆԵՐ	Ընկ. ընկ. Զինովյևի, Ստալինի.
ԲԱՆԱՁԵՎԵՐ	Ռ. կ. կ. Քաղ-բյուրոյի և Վերստուգիչ Հանձնաժողովի.
ՀԱՎԵԼՎԱԾ	Ռ. կ. կ. X-րդ համագումարի «բանաձևը, բանվորական դեմոկրատիայի» մասին։

ՀԱՎԵԼՎԱԾ „ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ"-Ի № 287-Ի

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ Կ. Կ. Կ. ԿՈՄԻՏԵՑԻ
ԵՐԵՎԱՆ—1923
ՅՐԵՍՏԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

3 КП2
12 - 11

ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Մի շարք տեխնիքական պատճառներով, այս նյութերը հնարավոր չեղավ որ-և-է զետեղել «Խորհրդային Հայաստանում»։ Այժմ կուսակցական դիսկուսիային վերաբերվող բոլոր հիմնական նյութերը մի գրքով հրատարակելով ․մենք ընդառաջ ենք գնում որոշ պահանջին։

ԽՄԲ.

ՅԿՈՂ
Ռ-11
23 SEP 2006
14 NOV 2009

Ռ. Կ. Կ. 13-րդ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՆԱԽՈՐԵՅԻՆ

ՀՈԴՎԱԾՆԵՐ	Ընկ. ընկ. Զինովյեվի, Պրեոբրաժենսկու, Տրոցկու.
ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐ	Ընկ. ընկ. Զինովյևի, Ստալինի.
ԲԱՆԱՁԵՎԵՐ	Ռ. Կ. Կ. Քաղ-բյուրոյի և Վերստուգիչ Հանձնաժողովի.
ՀԱՎԵԼՎԱԾ	Ռ. Կ. Կ. X-րդ համագումարի «բանաձևը, բանվորական դեմոկրատիայի» մասին։

ՀԱՎԵԼՎԱԾ „ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ"-Ի № 287-Ի

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ Կ. Կ. Կ. ԿՈՄԻՏԵՏԻ
ՅԵՐԵՎԱՆ—1923

1484

24 JUL 2013

7359

ՏՐԵՍՏԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

ՀՍՍՀ-Арм.ССР
им. А. М...

4272-91

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՆՈՐ ՀԱՐՑԵՐ

Ինչ վիճակում է գտնում հեղափոխության վեցերորդ տարեդարձը մեր յերկրի բանվոր դասակարգին—այն դասակարգին, վորը Հոկտեմբերի հիմնաքարն է կազմում։

Շատ տեսակետներով գործը դեպի բարելավումն է գնացել։ Բանվոր դասակարգի ապադասակարգայնացման և ցրվածության պրոցեսը անկասկած դադարել է։ Պրոլետարիատի վորակական կազմը բարելավվել է։ Բանվորների կազմը դառնում է ավելի կայուն և նվազ հեղհեղուկ։ Մեր արդյունաբերական գլխավոր կենտրոններն են սկսում վերադառնալ հազարավոր և տասնյակ հազարավոր բանվորներ, վորոնք հեղափոխության առաջին տարիներում ցրվել եյին գյուղերը, և ով վորտեղ կարող եր, վորպեսզի ամենավատ ժամանակներին մի կերպ կարողանա գլուխ պահել։ Մեր գործարաններում նորից սկսում են յերևալ հին «արհեստավորը», իսկական բանվորը, «ժառանգական» պրոլետարը։ Մեր արդյունաբերական բանվորության հիմնական միջուկը նորից սկսում է հավաքվել մեր խորհրդային գործարանների տանիքի տակ։ Սրա մեջ է կայանում մեկը ամենաեյական նախադրյալներից մեր տնտեսության հետագա բարելավման։ Այդ իսկ յերևույթը նոր, քաղաքական նոր ու լայն հնարավորություններ է բացում մեզ համար։

Նրանք բոլորը, վորոնք կարողանում են դիտել մեր բանվոր դասակարգի ներքին կյանքում տեղի ունեցող ամենամանրիկ պրոցեսները, նրանց աչքին է զարնվում և հետևյալ հանգամանքը, վոր այս վերջին ամիսներում միջակի, անկուսակցական բանվորի կուլտուրական մակարդակը նշանակալից չափերով բարձրացել է։ Յերբեմն թվում է, վոր հոկտեմբերյան հեղափոխությունից հետո անցած այն վեց տարին վորպես մի ակնթարթ անցել է։ Յեվ իրոք, այս վեց տարիների ընթացքում արդեն կազմակերպվել է յերիտասարդ բանվորության մի ամբողջ նոր սերունդ, և միանգամայն կարողացել է աճել ու զարգանալ միջակ բանվորը։

Կար ժամանակ (1919,—20,—21 թ. թ.), յերբ մեր գործարաններում մնացել եյին գլխավորապես ավելի հասակավոր բանվորներն ու բանվորուհիները։ Պրոլետարիատի ամբողջ ծաղիկը գտնվում եր ճակատներում կամ ընդհանրապես ցրված եր Ռուսաստանի բոլոր անկյուններում։ Դեպի գործարաններ վերադարձող բանվորները մեզ մոտ գալիս են այնպես, ինչպես վոր գնացել եյին։ Յուրաքանչյուրը նրանցից այս վեց տարիների ընթացքում ապրել է այնքան, վորքան այլ պայմաններում այդքան ապրումներ չեն ունենում մի ամբողջ սերնդի ընթացքում։

Ցրված լինելով Ռուսաստանի բոլոր անկյուններում—բանակում, գյուղում և պարենավորման խմբերում—բանվորները սովորել են ըմբռնել տե-

գի ունեցող յերևույթները: Հեղափոխությունը բավականաչափ նյութական միջոցներ չուներ, վորպեսզի միանգամից բարելավեր բազմամիլիոն բանվորական մասսաների դրությունը: Սակայն կուլտուրական տեսակետից նա համենայն դեպս բանվորական մասսային բարձրացրել է մինչև այժմ չեղած բարձրության:

Բանվորական կյանքի բոլոր ուշադիր դիտողները, օրինակ, նկատում են հետևյալ յերևույթները: Այժմ, անկուսակցական բանվորների համագումարներում, հակառակ նախկին տարիներում գոյություն ունեցող յերևույթի,—յուրաքանչյուր հարցի առթիվ հրապարակ են գալիս մի քանի տասնյակ հռետորներ: Պրոֆմիությունների նահանգական ժողովներում, խորհուրդների գավառական ժողովներում ևայլն, տիրապետում է միանգամայն այլ տրամադրություն,—ավելի շատ գործնականություն և գիտակցություն, ավելի մեծ քանակությամբ անկուսակցական հռետորներ և այլն,—քան այդ կար նախընթաց տարիներում: Ընդ սմին այժմ արդեն խոսում են վոչ թե իրանց սեփական կարիքների մասին, ինչպես այդ մեծ մասամբ տեղի ուներ սկզբներում, այլ՝ ընդհանուր հարցերի մասին: Յեվ խոսում են լուրջորեն, գործին տեղյակ կերպով:

Բանվորական մասսաների կուլտուրական մակարդակը բարձրացել է: Այս հանգամանքը, վորպես սխեմա, պիտի յելակետ ունենալ: Կուսակցական կյանքի նոր հարցերը ուղիղ կերպով դրված կլինեն միայն այն դեպքում, յեթե մենք յելակետ կունենանք այս հիմնական փաստը:

Մեր բանվորական բջիջների սոցիալական կազմը վերջին ամիսներում անկասկած բարձրացել է: Պետրոգրադում և Մոսկվայում վերջին ժամանակները բանվորական բջիջները իրենց կազմությամբ կրկնապատկվել են: Յեթե դեռ մոտիկ անցյալում գործարանների մեր բջիջներն եյին մնում վատ վարձատրվող բանվորները,—ապա դեպի այն ամենավերջին ժամանակները նկատվում է նաև վորակյալ բանվորների հոսանք:

Ի հարկե, մեր բջիջները քանակի տեսակետից էլ դեռ բավականաչափ ուժեղ չեն: Սակայն այս դեռ դժբախտության կեսն է: Ամենաեյական խնդիրը կայանում է նրանում, վորպեսզի նրանց մենք բարձրացնենք վորակի տեսակետից:

Քիչ չեն այնպիսի դեպքեր, յերբ տվյալ գործարանում գտնվում են կրկնակի քանակությամբ անկուսակցական բանվորներ, վորոնք իրանց կուլտուրական մակարդակով, նույն գործարանի մեր բջիջների անդամների նկատմամբ վոչ միայն ցածր են, այլ և հաճախ բարձր: Նույնիսկ Պետրոգրադի գործարանների նկատմամբ այս յերևույթը մի շարք դեպքերում կարելի յե միանգամայն ապացուցված համարել: Յեթե վերցնենք, օրինակ, Պուտիլովի գործարանը, ապա այդտեղ հինգ հազարից ավելի բանվորության դիմաց մենք այժմ ունենք 200 մարդուց բաղկացած բջիջ: Սակայն Պուտիլովի գործարանում, անմիջապես այնտեղ աշխատող բոլոր ընկերների վկայությունների համաձայն, կգտնվին 400 մարդուց վոչ պակաս անկուսակցական բանվորներ, վորոնք կուլտուրական մակարդակի տեսակետից

ցածր չեն, այլև հաճախ բարձր են մեր բջիջների շարքային անդամներից: Սրանից մեկ-յերկու տարի առաջ այդ այդպես չեր, վորովհետև գործարանում գլխավորապես մնացել եյին միայն ծերունիներն ու կանայք. մինչդեռ Պուտիլովի հին բանվորների ծաղիկը ցրված էր ամբողջ յերկրում: Իսկ այժմ այդ այդպես է:

Հատկանշական է, վոր շատ տեսակետներով մեր կոմբջիջի շարքային անդամները միշտ էլ բարձր են անկուսակցական մասսաներից արդեն այն իսկ հասարակ պատճառով, վոր մեր բջիջների անդամները տարբերվում են իրանց կազմակերպված գործնեյությամբ: Զուտ սոցիալական բնագավառում մեր բջիջների անդամները միշտ էլ բարձր են կանգնած անկուսակցական մասսաներից: Սակայն յերբ խնդիրը վերաբերում է տնտեսական, կենսական, կուլտուրական և կյանքի հարցերին—այն ժամանակ հաճախ հակառակն է նկատվում: Տնտեսական ապարատում աչքի ընկնող աշխատողներից մեկը մոտ ժամանակներս մեզ տալիս էր.—

«Յերբ յես իմ տնտեսական աշխատանքների մասին գնում եմ զեկուցում տալու մեր կուսակցական բջիջների ժողովներին, գնում եմ առանց նախապես պատրաստվելու: Սակայն յերբ յես առիթ եմ ունենում նման զեկուցում անելու այս կամ այն գործարանի պատգամավորական ժողովներում կամ շրջանային անկուսակցական համագումարներում և այլն,—ապա յես պատրաստվում եմ ուժեղ կերպով: Վորովհետև յես գիտեմ, վոր ինձ կտրվեն մի շարք հարցեր, վոր իմ յուրաքանչյուր թեզը յես պիտի կարողանամ պաշտպանել, վոր քննադատությունը կլինի լուրջ և այլն»:

Անկուսակցական բանվորների լայն շրջանների կուլտուրական մակարդակի բարձրացումը, մեր կուսակցության և խորհրդային իշխանության համար՝ կարող է լինել գերագույն աղբյուր, սակայն այն դեպքում միայն, յերբ մենք իր ժամանակին հաշվի առնենք այդ վերին աստիճանի նշանակալից յերևույթը և կարողանանք նրանից կազմակերպչական յեզրակացությունների հանգել: Այլ դեպքում այս փաստը կարող է բազմաթիվ թյուրիմացությունների աղբյուր դառնալ մեր և անկուսակցական բանվորների միջև, և կարող է նույնիսկ, վորքան էլ սա առաջին հայացքից տարօրինակ թվա,—յեվ լիակատար իրավունքով,—այժմ իր գործարանի տնտեսական կյանքում մեծ մասնակցություն ունենալ, իր պրոֆմիության վրա մեծ ազդեցություն ունենալ և այն էլ վոչ խոսքով, այլ և գործով, օգտագործելով իր իրավունքները Բանվորական Պատգամավորական Խորհուրդներում: Ներկա զարգացումում մեր կուսակցության գըլխավոր խնդիրը կայանում է հենց նրանում, վորպեսզի կանգնենք անկուսակցական բանվորների այդ շարժման գլուխը, վորպեսզի կարողանանք նրանց հետ միասին գնալ լուրջ, գործնական ուղի բանվորների այդօրինակ ցանկությունը բավարարելու համար:

Մեր խոշորագույն ձեռնարկություններում գործարանային կոմիտեները 80—90 տոկոսով կազմված են կոմունիստներից: Այդ լավ է: Սակայն կոմունիստների միջին տոկոսը գործարանային կոմիտեների բոլոր պրոֆ-

միություններում դեռ բավականաչափ բարձր չէ։ Նույնիսկ այնպիսի մի կենտրոնում, ինչպիսին Պետրոգրադն է, կոմունիստների միջին տոկոսը գործարանային կոմիտեների բոլոր պրոֆմիություններում առ 1-ն փետրվարի 1923 թ. 18,5 էր, իսկ առ 1-ն սեպտեմբերի 1923 թ. 22,8 էր։ Ցեվ յեթե նույնիսկ զատենք 9 ինդուստրիական միությունները, ապա կպարզվի, վոր նրանցում կոմունիստների տոկոսը գործարանային կոմիտեներում՝ հավասար է միայն 32,5-ի։ Այլ բանվորական կենտրոններում, հա յանորեն, հարաբերությունը նվազ բարենպաստ է մեր կուսակցության համար։

Հաջորդականության կարգը, վորով ընտրությունների ժամանակ գործարաններում անցնում են կոմունիստները, մոտավորապես, այս է. 1) Բանվորական Պատգամավորական Խորհուրդներում կոմունիստները ընտրվում են հեշտությամբ. 2) գործարանային կոմիտեներում—արդեն մի փոքր դժվարությամբ. 3) պրոֆմիություններում լիազորներ—ավելի դըժվարությամբ. 4) իսկ գնահատող—կոնֆլիկտային հանձնաժողովում, կոմունիստներին բոլորովին դժվար է անցնել։ Ի՞նչ է սուում այս հանգամանքը. այն, վոր ընդհանուր քաղաքական խնդիրների ղեկավարությունը բանվորական մասսաները կոմունիստներին բավականին սիրով են վստահանում։ Սակայն յերբ խնդիրը վերաբերում է կազմակերպություններին, վորոնցից անմիջականորեն կախված է աշխատավարձը և բանվորների ամբողջ առօրյա կյանքը,—մասսաները կոմունիստներին արդեն ընտրում են վոչ այնքան սիրով։ Գործարաններում, կոմունիստներն այս բնագավառում տակավին բավականաչափ վստահություն չունեն

Ցեվ այստեղ, գործարաններում, մեր բջիջների համար բացվում է մինչև այժմ կուսական դրության մեջ մնացած աշխատանքի մի վայր։ Գործարաններում մեր կուսակցական բջիջները պետք հրաժարվեն բոլոր տնտեսական հարցերը միայն կոմբջիջներում վճռելուց։ Գործարանների մեր բջիջները իրենց վրա պետք սկսեն նայել վորպես ամբողջ գործարանի կոմունիստական ֆրակցիայի։ Այս վերաբերում է նաև գործարանային կոմիտեներին, պատգամավորական ժողովների և այլ կազմակերպությունների կոմունիստ անդամներին։ Կոմբջիջի հիմնական նպատակն է՝ հօգուտ կուսակցության վարել քաղաքական աշխատանք։ Հասկանալի յե, վոր եկոնոմիկան քաղաքականությունից մեքենայորեն զատել չի կարելի։ Մեր կոմբջիջը, վորպես քաղաքական կազմակերպություն, անկասկած «եկոնոմիկայի» բնագավառում իրանց քաղաքական շահերն ունի։ Սակայն պետք գիտենալ այդ շահերը պաշտպանել. Ամենից առաջ չպետք մոռանալ, վոր մենք գործարանի մի մասն ենք միայն։ Ժամանակ է սովորել պայքարելու սիստեմատիկ յեվ ստեղծագործական աշխատանք տանելով ամբողջ բանվորական մասսաների մեջ ազդեցություն ձեռք բերելու համար գործարանային կյանքի բոլոր բնագավառներում. Ժամանակ է, վոր ավյալ ձեռնարկության ամբողջ բանվորական ազգաբնակչության նկատմամբ մեզ զգայինք վորպես քաղաքական ֆրակցիա։ Ժամանակ է հասկանալու, վոր անկուսակցական բանվորները աճել-զարգացել են, և պետք ձգտել՝ հասնելու նրանց մակարդակին

Ցեխերում կոմկոլեկտիվների «միահեծանությունն» այժմ արդեն քայքայություն է։ Պետք ձգտել, վոր այդպիսի յերևույթները բոլորովին վերանան։

Այս բոլորից հետևում է, վոր մեր կոմբջիջների շարքային անդամների համապատասխան կուլտուրական մակարդակի բարձրացման հարցը մեր կուսակցության համար դարձել է կյանքի և մահվան խնդիր։ Վորովհետև յեթե մեր կոմբջիջը իր գլխով բարձր չի կանգնած, քան մնացած ամբողջ մասսան,—ապա նա յերբեք չի կարող ղեկավարել այդ մասսային, հետևապես չի կարող իրագործել նաև իր հիմնական նպատակները։ Ուսուցման գործում կառավարությունը նշանակալից նվաճումներ է կատարել։ Սակայն այդ բոլորը, տակավին, շատ թույլ է, և միայն մի կաթիլ է ծովում։ Քաղաքականապես զարգացնել կուսակցության բոլոր անդամներին, բարձրացնել նրանց, հասցնել ամբողջ բանվորական մասսաների համապատասխան կուլտուրական բարձրության— ահա կենտրոնական նպատակը։

Զարգացած անկուսակցական բանվորները ցանկանում են ավելի գործոն մասնակցություն ունենալ արտադրության մեջ, արհեստակցական և խորհրդային կյանքում։ Այս է հիմնական փաստը, վորից պետք յելնել։ Գործարաններն են վերադարձել վորակյալ, քաղաքականապես առողջ և շատ զարգացած բանվորները։ Անկուսակցականների մեջ կան անհատ շատ խոշոր դեմքեր, վորոնց հետ համեմատվել կարող են կոմունիստներից անհամեմատ խոշոր դեմքերը միայն։ Պետք է գտնել ձևը սկզբում այդ անկուսակցական բանվորներից անհամեմատ խոշոր դեմքերին և ապա բանվորական ավելի լայն մասսաներին ներս առնելու արտադրության մեջ, արհեստակցական, խորհրդային և հետագայում նաև կուսակցական կյանքի մեջ։

Ինչպես միշտ, յերբ առաջ է մղվում բանվորական լայն շրջանների տրամադրությունների հետ հարակցված վորևէ խոշոր հարց, իսկույն և յեթ նորից ու նորից հրապարակ է գալիս մեր պրոֆմիությունների դերի հարցը։ Ամենից բնականն այն կլիներ, ի հարկե, վոր մեր պրոֆմիությունները ամենից առաջ իրենց հյուրընկալ դռները բանային անկուսակցական բանվորների այդ մասնանշված խմբերի առաջ։ Ամենից բնականն էր, վոր մեր պրոֆմիությունների միջոցով կատարվեր պրոլետարական նոր ուժերի ներհոսումը մեր տնտեսական, խորհրդային և այլ ապպարատների մեջ։ Մեր պրոֆմիությունների առաջ այդ նպատակն գործնական ուղղի վրա պետք դրվի։ Պետք մի անգամ էլ ուղղությամբ ճանաչել [illegible] մի կողմից գործարանային կոմիտեների յեվ կոմբջիջների— յեվ մյուս կողմից գործարանային կոմիտեների յեվ պրոֆմիությունների փոխհարաբերության հարցերը։ Պրոֆմիությունները մեր տնտեսական օրգանների աշխատանքների մեջ չափազանց քիչ մասնակցություն են ցույց տալիս։ Հանցավորներ չփնտրենք և անցյալի վրա կանգ չառնենք։ Սակայն մոտիկ ապագայում մեր պրոֆմիությունները անկասկած պետք ավելի մոտ կանգնեն մեր արտադրությանը, քան այդ յեղել է մինչև այժմ։ [illegible] կարող

ենք չենք պետք կարողանանք պրոֆմիությունների՝ նրանց ուսանողների նկատմամբ ու նրանց վերահսկողության համար համապատասխան ձև գտնել: Այդ վերահսկողությունը վոչ մի արժեք չի ունենա, յեթե նա սովորական բյուրոկրատական վերահսկողության ձև ընդունի: Սակայն այդ վերահսկողությունը գին չի ունենա, յեթե նա կհիմնվի զարգացած և կուլտուրապես բարձրացած անկուսակցական բանվորներին,—վորոնց մասին մենք վերը խոսեցինք — դեպի այն աշխատանքը գրավելով:

Մեր սեփական ներկուսակցական կյանքում վերջին ժամանակներս, անկասկած, նկատվում է չափազանց մեծ խաղաղություն, շատ տեղերում նույնիսկ՝ ուղղակի դադար: Վորպեսզի մի փոքր բավարար կերպով լուծենք վերը մատնանշված խնդիրները. վորպեսզի ըմբռնենք ու հաղթահարենք այն միջազգային դեպքերը, վորոնք այժմ կլանում են մեր ամբողջ ուշադրությունը, պետք է վոր մեր ներկուսակցական կյանքը լինի շատ ավելի ինտենսիվ, պետք է վոր ներկուսակցական բանվորական դեմոկրատիան, վորի մասին մենք այժմ շատ ենք խոսում, մարմնանա լեվ միս ու արյուն դառնա:

Հաճախ մեր դժբախտությունը գլխավորապես կայանում է նրանում, վոր համարյա բոլոր կարևորագույն հարցերը գնում են վերից վար կանխորոշված կերպով: Այս հանգամանքը սահմանափակում է կուսակցության բոլոր անդամների ստեղծագործությունը, նվազեցնում «խոնարհ խավերի»— կոմբջիջների ինքնագործունեությունը: Հասկանալի յե, վոր վորոշ չափերով այդ՝ առայժմ անխուսափելի յե: Մեր կուսակցությունը կառուցված է դեմոկրատական կենտրոնացման սկզբունքների վրա: Կառավարելով այնպիսի մի յերկիր, վորպիսին մերն է, Ռուսաստանի Կոմունիստական կուսակցությունը չի կարող չլինել խիստ կենտրոնացած կազմակերպություն: Սակայն այս վերին աստիճանի նշանակալից փաստը բացատրվում է նաև նրանով, վոր կուսակցության բոլոր անդամների կուլտուր-քաղաքական մակարդակը խիստ կերպով ցածր է դրան ղեկավարող խավերի մակարդակից: Մեր լավագույն աշխատակիցներից շատերը, կուսակցության վորոշմամբ, ամբողջովին զբաղված են տնտեսական կամ վարչական աշխատանքներով, չունեն, կամ համարյա թե հնարավորություն չունեն, բանվորական լայն խավերի շրջաններում կուսակցական մասսայական աշխատանքի մեջ խորասուզվելու: Ընկերների մի մասը, վորոնք բացառապես գտնվում են կուսակցական աշխատանքների մեջ, վոչ միշտ կանգնած են լինում այն նոր խոշոր պահանջներին համապատասխան բարձրության վրա, վորոնց ներկայացնում է մասսաների աճող կարիքները: Կուսակցությունը պիտի մեծ ուշադրություն ընծայի այս խնդիրներին, վորոնք այժմ գերիշխող նշանակություն են ստացել:

Մեր յեզրակացությունները մոտավորապես սրանք են.

1. Անհրաժեշտ է էլ ավելի ուժեղացնել կուսակցության շարքային ընկերների կուսակցական դաստիարակության աշխատանքը:

Վորովհետև կուլտուրապես զարգացած բանվորական լայն մասսաներին մեր կազմը գրավելու հիմնական նախադրյալը հանդիսանում է կուսակցության շարքային անդամների դաստիարակության մակարդակի ավելի բարձր լինելը:

2. Անհրաժեշտ է ընդառաջել բարձրագույն աստիճանի զարգացման հասած անկուսակցական բանվորների՝ իրենց ձեռնարկությունների արտադրական կյանքում գործոն մասնակցություն ունենալու և պրոֆմիությունների ու խորհուրդների մեջ աշխատելու որինական ցանկությանը:

3. Անհրաժեշտ է, վոր պրոֆմիությունները ավելի մոտ լինեն արտադրությանը, վորից նրանք, հակառակ կուսակցության համագումարի վորոշման— կտրվել են:

Պետք է համապատասխան կազմակերպչական ձև մշակել, պրոֆմիությունների կողմից տրեստների վերահսկողությանը մասնակցելու համար:

4. Անհրաժեշտ է, բանվորական շարժման արդի դրության հիմունքների վրա, նորից դնել և լուծել մի կողմից՝ գործարանային կոմիտեների և կոմբջիջների, և մյուս կողմից՝ գործարանային կոմիտեների և պրոֆմիությունների փոխհարաբերությունների հարցը:

5. Անհրաժեշտ է սիստեմատիկ խիստ կռիվ մղել ընդհանրապես առանձին տրեստավորների և տնտեսավարների գեղծարարությունների դեմ, ինչպես և այսպես ասած՝ «ավելորդությունների» դեմ:

6. Անհրաժեշտ է սիստեմատիկ աշխատանք սկսել մեր կուսակցության շարքերը գրավելու այն անկուսակցական բանվորներին, վորոնք բուռն կերպով ձգտում են հասարակական կյանքում գործոն մասնակցություն ունենալու, վորոնք, ինչպես ասած, հոգով մեզ շատ մոտ են:

7. Բանվորական դեմոկրատիայի սուրբ սկզբունքների մասին առանց ավելորդ բարձրաձայն խոսքերի, անհրաժեշտ է ներկուսակցական բանվորական դեմոկրատիան գործնականի մեջ կիրառել,— կուսակցության մեջ ուժեղացնել մտքերի ազատ փոխանակությունը (դիսկուսիա)՝ ընդհանուր քաղաքական, տնտեսական և այլ հարցերի նկատմամբ: Առանձնապես մեր կուսակցության շարքային անդամների ուշադրությունը հրավիրել արտադրական կյանքի այրող հարցերի վրա:

Տողերիս գրողը միանգամայն հասկանում է, վոր այս հոդվածով այս հարցերը միայն հրապարակ են դրվում, սակայն չեն լուծվում. այս հարցերն իրանց իսկական լուծումը կստանան միայն կուսակցության մեջ՝ մտքերի փոխանակության հետևանքով:

Գումարելով մեր կուսակցության կոլլեկտիվ փորձը, մենք կգտնենք այն գործնական միջոցները, վորոնք մեզ կհասցնեն նպատակի: Իսկ նրանց գտնելով, մենք ամենից լավ կերպով կչեզոքացնենք այն գաղափարական այլանդակությունները, վորոնք իրանցից ներկայացնում են «բանվորական խմբակցությունը» կամ «բանվորական պրավդան»: Այս վերջինների մասին այլ անգամ:

Գ. Զինովյեվ

Խմբագրության կողմից.— Զետեղելով ընկ. Զինովևի հոդվածը, խմբագրությունը դիսկուսիայի չի դնում այնտեղ շոշափված հարցերը։ Խմբագրությունը թախանձանոք առաջարկում է կոմբջիջներին, գործարանային կոմիտեներին, պրոֆմիությունների ընկերներին մասնակցություն ունենալ այս դիսկուսիայի մեջ։

Խմբագրությունը սիրով տեղ կտա նաև անկուսակցական բանվորների նամակներին, հոդվածներին և նկատողություններին։

ՄԵՐ ՆԵՐՔԻՆ-ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Պրավդայի» էջերում ընկ. Զինովևի հոդվածի («Կուսակցու-
թյան նոր խնդիրները», «Պրավդա», № 253) հետևանքով սկսված
մեր կուսակցության ներքին դրության քննությունն անշուշտ զբ-
բաղեցնելու յե մեր մամուլ մինչև կուսակցական համագումարի
գումարումը։ Վորպեսզի այդ քննությունը մաքսիմալ կերպով ար-
դյունավետ լինի, պետք է սկզբից եվեթ աշխատել, վոր հարցը ու-
ղիղ կերպով դրվի և մասնակի ու մանր խնդիրներով չզբաղվել։
Այդ մասնակի հանգամանքներն էլ են օգտավետ և խնդրի քննու-
թյան մեջ համապատասխան տեղ են գրավելու, յեթե խնդրի ա-
ռանցքն սկզբից եվեթ ուղիղ դրվի։ Այդ տեսակետից ինձ թվում է,
վոր Զինովևի հոդվածում խնդիրն անբավարար կերպով է դրված.
նա կենտրոնացրել է իր ուշադրությունը մի քանի առանձին (ճիշտ
է, կարևոր) պրոբլեմների, բայց վոչ հիմնական պրոբլեմի վրա։
Մինչդեռ խնդրի եյությունն այն է, վոր հենց այդ իսկ պրոբլեմը
իր ամբողջությամբ ուղիղ կերպով գիտակցվի և դրվի։

Այն խնդիրը, վոր կուսակցությունն իր առաջ պետք է դնի և
վոր նա իրոք արդեն շոշափում է, առայժմ նրա այս կամ այն
կողմը առաջ քաշելով, հետևյալն է. ուղի՞ղ է յեղել արդյոք մինչև
այժմ կուսակցության տարած հիմնական գիծը ներքին-կուսակ-
ցական շինարարության մեջ յեվ ներքին կուսակցական և քաղաքա-
կանությունը տնտեսական նոր քաղաքականության շրջանում, թե
վոչ։ Պրոբլեմին (փաստորեն առանձին պրոբլեմներին) մոտենալ
այնպես, ինչպես այդ ընկ. Զինովևն է անում, կարելի յե միայն
իմ առաջադրած խնդրին դրական պատասխան տալու դեպքում։
Իսկ ինչ ինձ է վերաբերում, յես անձնապես անհրաժեշտ եմ հա-
մարում, վոր կուսակցությունը քննության առնի, ամենից առաջ,
հենց այդ խնդիրը, վորովհետև մինչև վոր այդ խնդրի պատաս-
խանը չտացվի—բոլոր մյուս մասնակի խնդիրների լուծումն էլ է
անհնար լինելու։

Ինքս իմ առաջադրած խնդրին բացասական պատասխան եմ

տալիս։ Ցես կարծում եմ, թե կուսակցությունն յերկու տարի յե [illegible], վոր իր ներքին կուսակցական քաղաքականության մեջ հիմնականում սխալ գիծ է տանում։ Այդ քաղաքականությունը նեպի առաջադրած խնդիրներին կատարելապես հակասում է։ Կուսակցության սխալն այժմ որ-որի վրա ավելի ակնհայտ է դառնում. տվյալ դեպքում խնդիրն այն չէ, վոր համառենք ու չընդունենք այդ սխալը, այլ այն, վոր ժամ առաջ ընդունենք և հնարավոր համերաշխությամբ ընդնշմարենք կուսակցական նոր կուրսի ուղիներ ։

Ո՞րն են փաստերը, վորոնք են այն օբյեկտիվ ապացույցները, վորոնցից պետի պարզվի, վոր մեր ներքին-կուսակցական գիծը նեպի վերջին յերկու տարիների ընթացքում ուղիղ չէ յեղել։

Փաստերը, դժբախտաբար, ավելի քան շատ են։ Տնտեսական նոր քաղաքականության միջոցին սոցիալական հարաբերությունները ծայրահեղորեն բարդ են, խայտաբղետ, խառն, սոցիալ-տնտեսական բաղխում տեղի յեն ունենում արագ փոփոխություններ, առաջանում են նոր կազմակերպություններ, աճում են սոցիալական հակասությունները և միաժամանակ սոցիալական տարերքը ամենատարբեր տեսակների մահափորձեր է կատարում կուսակցության վոգու և մարմնի վրա։ Ծայրահեղորեն խճճված այս իրադրության պայմաններում ուղիղ գիծ ընտրելու համար— մի իրադրություն, վորը շատ ավելի բարդ է, քան ռազմական կոմմունիզմի և նույնիսկ ցանկացած զուտ կապիտալիստական յերկրի ներքին իրադրությունը (բանվորի տեսակետով) — մեր կուսակցական կազմակերպություններում պետք եր այլ կյանք ստեղծել, քան այն, վոր գոյություն ուներ ռազմական պայքարի ժամանակ։ Պետք եր լիկվիդացիայի յենթարկել միլիտար (զինվորական) մեթոդները կուսակցության ներսում, վերականգնել մասամբ 1917—1918 թվերի տիպի կուսակցական կյանքը և ազատ թողնել կազմակերպությունների ու առանձին անդամների ներգործնությունն ու ինքնագործունեությունը՝ կուսակցական կյանքի բոլոր հիմնական հարցերը առաջադրելու և քննության առնելու խնդրում. կուսակցության ամեն մի անդամի պետք եր բոլոր հիմնական կուսակցական և քաղաքական խնդիրներում ավելի ակտիվ և գիտակից մասնակցություն ունենալու հնարավորություն տալ. բջիջի ամեն մի անդամին պետք է հնարավորություն տվեր

քննության դնելու նրան հուզող ամեն մի խնդիր,—իսկ այդպիսի խնդիրներ նեպը հարյուրներով է հարուցում—առանց այն բանի, վոր բջիջի բյուրոյում քո վրա դժգոհ կերպով նայեն և ամբոխավար, մենշևիկություն անող, տատանվող, «խուսափողական» և այլն անվանեն։ Կուսակցության ամեն մի անդամին պետք է հնարավորություն տվեր ընկերների առաջ բացել իր բոլոր կասկածները, ներքին տատանումները, անբավականությունը և ստանալ ընկերների խոհական պատասխանը, վորը համոզում է, բայց չի գրգռում և հարցեր առաջադրելու տրամադրությունը չի սպանում—մի բան, վոր տեղի չի ունենում, յերբ ի պատասխան այդ բոլոր կասկածների ու հարցերի՝ դրության լրջությանը չհամապատասխանող ծեծված ֆրազների, սերտած պատասխանների, հասարակացրած ֆորմուլների տարափն է տեղում։

Գործնականում այդպիսի բան տեղի չեր ունենում։

Բնորոշ է այն, վոր յերբ մեր շուրջն ամենուրեք ռազմաճակատ եր, կուսակցական կյանքը ավելի յեռուն ու կենդանի և կազմակերպությունների ինքնագործունեությունն ավելի մեծ եր։

Ցեվ յերբ վոր վոչ թե միայն ներքին կուսակցական կյանքը կենդանացնելու և նրան նոր պահանջներին հարմարեցնելու օբյեկտիվ հնարավորություններ առեղծվեցին, այլև կուսակցության համար այդ բանի հրամայական պահանջ առաջացավ, մենք վոչ մի քայլ առաջ չգնացինք զինվորական կոմունիզմի շրջանի համեմատությամբ՝ ընդհակառակը, ուժեղացրինք բյուրոկրատիզմը, կայյոնշչինան, վերից նախորոշված հարցերի քանակը, ուժեղացրինք զինվորական շրջանում նշմարվող կուսակցության բաժանումը՝ վորոշումներ անողների և պատասխանատվություն կրողների մեկ կողմից, և այդ կուսակցական վորոշումների մշակմանը չմասնակցող կատարածուների մասսաների՝ մյուս կողմից։ Կազմակերպությունների կոլլեկտիվ ինքնագործունեության և կուսակցության բոլոր անդամների գիտակցության մակարդակը բոլոր ներքին—կուսակցական վճիռներին կենդանի մասնակցություն ցույց տալու պրոցեսում բարձրացնելու կուրս բռնելու փոխարեն, յերբ ամեն մեկը պետք է գիտակցեր, վոր պատասխանատու յե, մենք այդ վորոշումներից յուրաքանչյուրի համար լավ ապարատ յեվ լավ կուսակցական չինովնիկ ունենալու կուրս ենք բռնել։ Ապարատը մենք լավացրել ենք, դա անվիճելի յե, բայց

այդ պլյուսը ձեռք է բերված ավելի մեծ ծավալ ունեցող մինուսի գնով, ներքին-կուսակցական կյանքը մարելու և կազմակերպության փոքրաթիվ ակտիվ մասը կրավորական-կուսակցական կամ կիսակրավորական մեծամասնությունից կտրելու գնով:

Ներքին-կուսակցական քաղաքականության մեջ կատարած մեր այդ հիմնական սխալը առաջացրեց մի շարք հետևանքներ. դրանց վրա յե ասա, վոր կանգ է առնում կուսակցական միտքը.. Համառոտ կերպով թվենք այդ հետևանքները:

Ներքին-կուսակցական կյանքի ընդարմացումը: Զուտ աա-բերային լռության դավադրության ուժեղացումը կուսակցության մեջ: Այդպիսի լռության ցայտուն օրինակ կարող է համարվել կենտ-կոմի կողմից աշնանը հրավիրված նահանգական կոմիտեների քարտուղարների խորհրդակցությունը: Շատերը մոռացել են ինքնուրույն մտածելը և կուսակցության առաջ իրենց կարծիքը բարձրաձայն ասելը: Շատերը վարժվել են ինքնուրույն կերպով այս կամ այն դրության հանդեպ վերաբերմունք ունենալը և կարգադրությունների յեն սպասում վերից: Կուսակցական կյանքի արժատական խնդիրներին նվիրված դիսկուսիաները դադարել են: Բնորոշն այն է, վոր այս դիսկուսիան ներկայումս դարձյալ վերի նախաձեռնությամբ է սկսվում:

Նույնն է կատարվում նաև ստորին կարգի կազմակերպությունների մեջ: Գոյություն ունեցող վարքագծի հիման վրա բջիջների մեծ մասի մեջ համոզմունք է առեղծվել, վոր կարևորագույն համակուսակցական և տնտեսական հարցեր քննելն իրանց գործը չի: Իբրև հետևանք այդ ամենի, կուսակցությունը զրկվել է ամենավնասաբեր հակակուսակցական հոսանքների դեմ պայքարելու համար իր տրամադրության տակ գտնված գաղափարական կարելիությունները զարգացնելու հնարավորությունից: Այդ հոսանքները յերբեմն գրավում են շատ լավ սոսկական կոմունիստ բանվորներին միայն այն պատճառով, վոր բջիջները չեն օգնում նըրանց ազատ կոլեկտիվ քննության միջոցով իրանց կասկածները ցրել «մարդկանց ներկայությամբ», ընկերական շրջանում: Այդ տատանվողներից և չարացածներից շատերը յերբեք չեյին համարձակվի կուսակցության դեմ կոնսպիրատիվ աշխատանք տանել, յեթե նրանց հնարավորություն տրվեր իրանց կարծիքները կուսակցական ժողովներում բացարձակ կերպով պաշտպանել: Յեթե

այդպիսիները նույնիսկ չհամոզվեյին, յեթե նույնիսկ տապալվեյին նրանց առաջարկները,—գոնե նրանց մեջ մի համոզմունք կմնար, վոր կուսակցությունը լսեց նրանց կարծիքը և վոչ թե դժգոհությամբ փակեց իր ականջները նրանց հարուցած հարցերի առաջ: Այդ բանը կուսակցությունից բարոյապես հեռանալու փաստական դրության չեր հասցնի, վորից մինչև կուսակցությունից ձևականորեն հեռանալը կամ չարացած գաղտնի խմբավորումներ ըստեղծելը միայն մի քայլ է:

Կուսակցությունից բարոյականապես հեռանալու վիճակ է սպասում նաև հին պատասխանատու աշխատավորներից շատերին, վորոնք ինչպես նորերս ինձ հետ խոսելիս մի հին կուսակցական բանվոր, իսկ այժմ տնտեսավար,—ասաց. «այժմ իրանց այդ հարցերով և առաջարկներով չգիտեն թե ում դիմեն»: Խորհրդային և տնտեսական աշխատանք տանող հին բոլշևիկների մի ահագին կազմ բոլորովին զրկված է կուսակցական կյանքի վրա փաստական ազդեցություն գործելուց, նրանց փորձառությունը կոլեկտիվ կուսակցական մշակման չի արժանանում, մինչդեռ կազմակերպությունների մեջ անմիջական կուսակցական աշխատանքը տանում են հաճախ այնպիսի ընկերներ, վորոնք կուսակցությունն ավելի պակաս են՝ ճանաչում և պակաս չափով կուսակցականորեն պատասխանատու յեն, քան ՌԿԿ-ի այդ ձևական անդամներ՝ բայց փաստորեն նրանից հեռացածները:

Դեպի նշանակովի քարտուղար և դեպի կուսակցության ապարատի կադրային կազմը դարձրած կուրսը հասցնում է այնպիսի հետևանքի, վոր այդ ապարատը գործում է, մտածում (այնքան, վորքան մտածում է) և պատասխանատվություն է կրում ամբողջ կուսակցության, իսկ առանձին կազմակերպությունների մասսաբով—այդ կազմակերպության ամբողջ կոլեկտիվի փոխարեն: Այդ բանը միանգամայն անխուսափելի կերպով հետևեցնում է այն, վոր ի հաշիվ այդ խավի ազդեցության և իշխանության աճման կուսակցության մեջ, կուսակցության բանվորական մասի կազմակերպությունների մեջ նվազում է ինչպես այնպիսիների դերն ու նշանակությունը, վորոնք խորհրդային աշխատանքի մեջ են սուզվել, այնպես էլ այնպիսիներինը, վորոնք գործարաններում են աշխատում (ստանոկների բանվորները): Վերջիններս կարող են կուսակցության կյանքին մասնակցել միայն բջիջի միջոցով, իսկ

բջիջների աշխատանքի ներկա պայմաններում, յերբ միայն ի տեղեկություն և ի կատարում են ընդունվում վերից նախորոշված խնդիրները — այդ մասնակցությունը համարյա թե զերոյի յե հավասարվում: Կասկածից դուրս է, վոր հենց այդ հողի վրա յեն ուժեղանում մախայեյան տրամադրությունները մեր կուսակցության վորոշ խավերում:

Այժմ անցնենք հետևյալ հարցին: Տեսնենք, թե կուսակցական քաղաքականության գոյություն ունեցող կուրսը վորքան է նպաստել կուսակցական պատասխանատու աշխատավորների նոր կադրեր նախապատրաստելուն:

Յես կարծում եմ, վոր արդյունքն այստեղ ել ընդհանրապես բավական բացասական է: Իր անդամներին մարքսիստական խմբակների, կուսխորհրդային դպրոցների, դասընթացների և այլ միջոցներով տեսական դաստիարակություն տալու ասպարեզում այս յերկու տարվա ընթացքում կուսակցությունը հսկայական առաջադիմություն է արել: Բայց չնայած այդ տեսական աճմանը, կուսակցության յուրացրած կուրսի հետևանքով, կուսակցության գործնական կյանքին կուսակցականների մասնակցությունը վոչ թե ուժեղացել, այլ թուլացել է:

Քանի շատ եր աճում կուսակցության անդամների և մանավանդ յերիտասարդության տեսական պատրաստությունը, այնքան ավելի պակաս եր մասնակցում նա իսկական կուսակցական կյանքին, այնքան ավելի պակաս եր կրում կուսակցության աշխատանքի պատասխանատվությունը, իր սխալներից դաս առնելով. այնքան ավելի եյին հրամցնում նրան նախորոշված հարցեր. այնքան ավելի յեր աճում այդ տարիներին կուսակցության ապարատային կադրերի դերը: Մինչդեռ տեսական պատրաստությունն առանց այդ թեորիան գործնական աշխատանքի միջավայրում ոգտագործելուն, ակադեմիկ աճում է նշանակում և վոչ թե իսկական-մարքսիստական պատրաստություն. վոչ թե աճել, այլ թեորիան հեղափոխական նպատակների համար «լենինական» ոգտագործման յենթարկելու դանդաղումն է նշանակում:

Կուսակցության յերիտասարդ անդամների տեսականի աճման և կուսակցական գործերի լուծման նկատմամբ նրանց փաստական իրավազրկության միջև յեղած դիսպրոպորցիան վոչ թե նվազել է, այլ աճել է և աճում է: Կուսակցության հին կուրսի շարունակումը այդ կողմից ել կարող խիստ վտանգավոր բարդություններ ստեղծել մեզ համար, մասնավորապես նրանով, վոր կուժեղանա անբավականությունը (վորի մեղքն ամբողջապես մեր վրա յե ընկնելու) դեպի կադրային հին բոլշեվիկները:

Զինովյեվը նշել է, վոր մեր կուսակցական բջիջների պատրաստության մակարդակը հաճախ վար է առաջադեմ անկուսակցական աշխատավորների պատրաստության մակարդակից: Յես դժվարանում եմ ասել, թե վորքան արդարացի յե այս պնդումն իր ամբողջությամբ. Բայց յեթե այդ ճիշդ է, ապա դա ամբողջապես մեր այժմյան ներքին կուսակցական քաղաքականության կուրսի դեմ է:

Յեթե անկուսակցական բանվորները իրանց պատրաստության մակարդակով բարձր են այն կոմունիստներից, վորոնք գործարանում նույն պայմաններում են գտնվում, ինչ և առաջինները (հասարակական և, մասնավորապես կուսակցական աշխատանքից հոգնած և պարապելու համար ազատ ժամանակ չունեցողների մասին յես չեմ խոսում), պետք է կարծել, վոր դա, ամենից առաջ, կախված է նրանից, վոր անկուսակցականները հնարավորություն ունեն ինքնուրույն կերպով քննել բանվորական մասսան և յերկիրը հուզող բոլոր խնդիրները և ինքնուրույնորեն լարել իրանց ուղեղը, մինչդեռ կուսակցականները մոռանում են ինքնուրույն մտածելը. վախենում են վորևէ բան ասել (ДЯПНУТЬ) վերի ցուցմունքից առաջ. պատրաստի լուծումների և նույնիսկ այդ լուծումների պատրաստի փաստարկման են սպասում:

Վերից կանխորոշված խնդիրները արդի կուսակցական կուրսի անմիջական արդյունքն են: Բայց դրանք միաժամանակ արդյունք են նաև արդի տնտեսական ղեկավարության ասպարեզում տիրող քաղաքականության:

Հասկանալի յե, վոր վերից պատրաստի կերպով տրվող վորոշումներից շատերը կարելի յեր կուսակցական կազմակերպությունների նախնական քննությանը հանձնել, և հապճեպ խմբագրված դեկրետներից շատերը հետո չեղելու և լրացնելու հարկը չեր զգացվի, յեթե տեղերի ունեցած փորձը հաշվի առնվեր վոչ թե դրանց կազմելուց հետո, այլ դրանից առաջ: Բայց մյուս կողմից մեր վողջ տնտեսական քաղաքականության մեջ պլանային սկզբ-

4272-91

քունքի թուլության և տնտեսական պրոբլեմները դեպքից դեպք լուծելու պատճառով, մեր ղեկավար կենտրոններն հաճախ իրանք էլ չեն ըմբռնում այսօր, թե շտապողական և գլխապատառ կարգով վաղն ինչ խնդիր են լուծելու։

Իսկ յեթե այդ այդպես է, պարզ է, որ նրանք, որքան էլ ցանկան, չեն կարող կուսակցության քննության նյութ դարձնել այնպիսի հարցեր, վորոնք նույնիսկ իրանց համար անսպասելի կերպով են լույս ընկնում։ Պլանազուրկ քաղաքականությունը միշտ այդպիսի անակնկալների յե հասցնում։ Այսպիսով պարզվում է, որ կուսակցական քաղաքականության ասպարեզում կատարելիք բարենորոգումը կապված է տնտեսական քաղաքականության ասպարեզում բարենորոգում կատարելու անհրաժեշտության հետ, վորի մասին, սակայն, հարց պետք է բարձրացնել կուսակցական համագումարի նախօրեյին, այլ, ավելի կարևոր, պատճառներով։

Հետևյալ արդյունքը ներքին կուսակցական ինֆորմացիայի ասպարեզում գոյություն ունեցող լայն ճեղքն է, որ թուլացնում է կուսակցության գիծը նրա վորոշումները կյանքում կիրառելիս, թուլացնում է նրա կապը անկուսակցական մասսաների հետ և տեղական կազմակերպությունները, մանավանդ սովորական աշխատավորներին, ամենադժվար, հաճախ էլ պարզապես հիմար դրության մեջ է դնում բանվորների առաջ։ Այսօր նրանք ագիտացիա յեն մղում՝ ասենք թե՝ այն մասին, որ բանվորները ի հաշիվ իրանց աշխատավարձի պարտավոր են վոսկու փոխառության ոբլիգացիա վերցնել։ Իսկ վաղը կենտրոնում արդեն հակառակ վճիռ է հասունանում, որը կարծես յերկնքից է գլորվում նրանց գլխին, և մեր կոմունիստները հարկադրված են լինում մասսաներին ասել իրանց յերեկվա ասածի հակառակը, մինչդեռ այդ յերեկվա ասածը համոզիչ դարձնելու համար իր ժամանակ խաչ եյին բարձրանում։

Այդ բանը գցում է կուսակցական կազմակերպությունների հեղինակավորությունը բանվորների աչքում, վորոնք այդպիսի դեպքերում կամ պարզապես ծաղրի յեն յենթարկում բջիջների անդամներին, կամ իրանք են վրդովվում, որ առաջիններն իրավազուրկ և անտեղյակ են խորհրդային իշխանության վորոշումների և ծրագրերի նկատմամբ։

Այդ վրդովմունքի տեսակարար կշիռը մենք կհասկանանք, յեթե հիշենք, թե ինչ գործոն մասնակցություն եյին ցույց տալիս իր ժամանակ անկուսակցականները կուսակցության դաժան գործին և ինչպես են նրանք հետաքրքրվում յերկիրը կառավարող կուսակցության կյանքով։

Պրոֆմիությունական օրգանների բանվորական մասսաներից կտրված լինելը մի կողմից, բյուրոկրատիզմի ուժեղանալը խորհրդային ապարատում—մյուս կողմից, նույնպես նկատելի չափով կապ ունեն գոյություն ունեցող ներքին-կուսակցական կուրսի հետ, վորն ուժեղացրել է բյուրոկրատիզմը նույնիսկ կուսակցության մեջ, այսինքն, իրոք թուլացրել է մեր ամենակարևոր և վճռական նշանակություն ունեցող զենքը՝ ամեն տեսակի բյուրոկրատիզմի դեմ մղելիք մեր պայքարում։ Մեծ տրամաբանություն պետք չէ, վորպեսզի մարդ հասկանա, թե ընկ. Լենինի բանվորագյուղացիական տեսչության և խորհրդային ապարատի բյուրոկրատացման դեմ գրած նշանավոր հոդվածները, իրանց վողջ փաստարկումով, ամբողջապես ներկայիս կուսակցական կուրսի դեմ են դառնում, յեթե ապացուցվի (իսկ այդ բանն արդեն ապացուցված է անցյալ յերկու տարիների փորձով), վոր այդ կուրսը վոչ թե թուլացրել, այլ տարերայնորեն ուժեղացրել է խորհրդային և պրոֆմիությունական ապարատի բյուրոկրատականությունը։

Յես այլևս այժմյան կուրսի ծնած, ավելի յերկրորդական, հետևանքների մասին չեմ խոսում, վորպիսիք են կուսակցության մեջ ծառայականության պատասխանատվության ու կարիերիզմի աճելը, գործին կողմնակի վերաբերմունք ցույց տալը, կուսակցության պերիֆերիայի նկատմամբ ապարատների անպատասխանատվության աճելը, առաջներում բնորոշ յեղած կուսակցական պաշտոնների նշանակված անձերի գործով չարդարացված ինքնավստահության և ինքնագոհության ուժեղանալն և այլն։

Այս ամենն ավելի հանգամանորեն կպարզվի սկսված դիսկուսիան։ Սահմանափակվենք մեր ասածով, վորովհետև այդ ասածն էլ, կարծեմ, բավական է ապացուցելու համար հոդվածիս սկզբում դրված թեզիսն այն մասին, վոր ներքին-կուսակցական դաշտում մենք սխալ քաղաքականություն ենք վարում և այդտեղ բացասական հաշվեկշիռ ենք ստանում։ Այդ ապացույցը հիշատակում է նաև դիսկուսիայի տված առաջին իսկ արդյունքներով,

քանի վոր այդ նյութի շուրջը մինչև որս տպված բոլոր հոդվածներից, դիտողություններից և բանաձևերից վոչ մեկը կուսակցության ներկա վիճակը բավարար չհամարեց։

Բախտի ծաղր եր կարծես, վոր մեր կուսակցությունը, վոր 10-րդ համագումարում վորոշում եր հանում միլիտար մեթոդներից ներքին-կուսակցական ռամկավար մեթոդներին անցնելու մասին, գործնականում սկսեց տրամագծորեն հակառակ քաղաքականություն բանեցնել։ Դրա պատճառն այն ժամանակ, ճիշտ ե, Կրոնշտադի ցնցումներն եյին և Նեպին անցնելու շրջանում, դուցե, ոբյեկտիվ կերպով անխուսափելի յեր այդ։ Բայց յերբ անցումը կատարվել ե, այն ել հազվագյուտ համերաշխությամբ և միանգամայն կազմակերպված ձևով, վրա յե հասել մի դրություն, յերբ 10-րդ համագումարի բանաձևի կյանքում կիրառելը վոչ թե միայն քաղաքականապես հնարավոր, այլ և անհրաժեշտ ե դառել։ Անցումը ժամանակին չեն արել։ Կուսակցության քաղաքականության մեջ տիրապետող հանդիսացել մեկ անգամ ընդունված կուրսի մեքենայականությունը, նա ձևավորվել և օրինականություն ե ստացել մի շարք պատճառների զուգադիպությամբ հենց այն ժամանակ, յերբ պետք ե դրա փոփոխման հարցը դրվեր։ Մենք ակնհայտ կերպով ուշացել ենք այս գործում։ Այնքան ավելի շուտ և այնքան ավելի մեծ համերաշխությամբ պետք ե իրականացնենք անհրաժեշտ թեքումն այսոր։

Ի յեզրափակումն ասածներիս — մի դիտողություն։ Մեր կուսակցության մեջ կան ընկերներ — և դրանց թվում նույնիսկ ամենապատասխանատու ընկերներ, — վորոնք հաճույքով կհամաձայնվեն «ներքին-կուսակցական ռամկավարության» վրա 10-րդ համագումարի վոգով փոքր ինչ խնդալ։ Այս ամենը, նրանց կարծիքով, մանր-բուրժուական հավասարիչ հակումների ազդեցության արդյունք ե. այս ամենը, վերջիվերջո, հակասում ե պրոլետարական դիսցիպլինին և բարձր զարգացման հասած տեխնիկայի տենդենցներին։

Չխոսելով այն մասին, վոր այդ ընկերները հոգեբանորեն գտնվում են վոչ թե բարձր զարգացման հասած տեխնիկայի ազդեցության տակ, այլ տպավորականորեն արտացոլում են իրենց ուղեղում պետական ապարատի բյուրոկրատական բարձր գանգատան ազդեցությունը, վորի խորհրդային բազայի վրա կառուցանելուն նրանք մասնակցել են—թողնում ենք, վոր նրանք գործնականորեն ապացուցեն, թե կոնկրետ կերպով ինչպես են առաջարկում այժմյան կուսակցական կուրսի հիման վրա և առանց կուսակցական «ռամկավարության»՝ լուծել կուսակցության նոր կադրերի պատրաստման պրոբլեմը, ինչպես և այդ կադրերն իրապես սոցիալիստական շինարարության խնդիրներին համապատասխանող ձևով ընդարձակելու հարցը։

Յե. Պրեոբրաժենսկի

ՆՈՐ ԿՈՒՐՍ

(ՆԱՄԱԿ, ՈՒՂՂՎԱԾ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻՆ)

ԹԱՆԿԱԳԻՆ ԸՆԿԵՐՆԵՐ.

Ես հաստատ հույս ունեի, որ այսօր-վաղը կարող կլինեմ մասնակցել կուսակցության ներքին դրության հարցերի և նոր խնդիրների քննության: Սակայն հիվանդությունը վրա հասավ այս անգամ միանգամայն անժամանակ, քան երբևիցե և ավելի երկարատև եղավ, քան սկզբում բժիշկները նախատեսել էին: Ինձ այլևս ոչինչ չի մնում անել, եթե ոչ իմ մտքերն արտահայտել այս նամակով:

Քաղբյուրոյի բանաձևը կուսակցական շինարարության մասին ունի հատուկ նշանակություն: Նա նշում է, որ կուսակցությունն իր պատմական ուղիում մտնելու է լուրջ թեքումի: Թեքումների ժամանակ, ինչպես արդարացիորեն մատնանշված է շատ ժողովներում, հարկավոր է զգուշություն, բայց զգուշության հետ միասին հարկավոր է հաստատակամություն և վճռականություն: Սպասողականությունը, անձևությունը թեքումների ժամանակ անզգուշության ամենավատ տեսակը կլինի:

Մի քանի կոնսերվատիվ տրամադրությամբ տարված ընկերներ, որ հակված են վերագնահատելու ապարատի դերը, բայց վերջնականապես չգնահատելու կուսակցության ինքնագործունեությունը, քննադատորեն են վերաբերվում Քաղբյուրոյի բանաձևին: Նրանք ասում են.— Կենտկոմը անիրագործելի պարտականություն է վերցնում իր վրա, որ բանաձևը միայն կեղծ իլյուզիա կսերմանի ու բացասական արդյունքի կհասցնի: Պարզ է, որ այդպիսի մոտեցումը ամբողջովին ծծված է բյուրոկրատական անվստահությամբ դեպի կուսակցությունը: Կենտկոմի բանաձևով հայտարարված նոր ընթացքը կայանում է հենց նրանում, որ ծանրության կենտրոնը, որը հին կուրսի ժամանակ մղված էր ապարատի կողմը, այժմ, նոր կուրսի ժամանակ պետք է քաշվի դեպի կուսակցության՝ պրոլետարիատի կազմակերպված առաջապահի՝ գործնականության, քննական ինքնագործունեության և ինքնաղեկավարման կողմը: Նոր կուրսը բոլորովին չի նշանակում, թե կուսակցական ապարատի վրա պարտականություն է դրվում այսքան ժամանակամիջոցում դեկրետացնել, ստեղծել կամ սահմանել դեմոկրատիայի ռեժիմ: Ոչ: Այդ ռեժիմն իրականացնել կարող է կուսակցությունը: Խնդիրը համառոտակի կարելի է ձևակերպել այսպես.— **կուսակցությունն իր**

ապարատը պետք է ենթարկի իրեն, ոչ մի րոպե չդադարելով կենտրոնացած կազմակերպություն լինելուց:

Վերջերս վիճաբանությունների և հոդվածների մեջ հաճախ մատնանշվում է այն բանը, որ «մաքուր», «զարգացած», «իդեալական» դեմոկրատիան անիրագործելի է և որ դեմոկրատիան մեզ համար ինքնանպատակ չէ: Դա միանգամայն անվիճելի է: Բայց ճիշտ նույն հիմունքով և իրավունքով կարելի է ասել, որ մաքուր կամ աբսոլյուտ կենտրոնականությունն անիրագործելի է և մասսայական կուսակցության համար անմիաբանելի և որ ոչ կենտրոնականությունը, ոչ կուսակցական ապարատը ոչ մի դեպքում ինքնանպատակ չեն: Դեմոկրատիան և կենտրոնականությունը կուսակցական շինարարական կյանքում իրենց ներկայացնում են երկու կողմ: Խնդիրը նրանումն է, որ այդ երկու կողմերը ամենաուղիղ, այսինքն պայմաններին համապատասխանող ճանապարհով դառնան հավասարակշիռ: Վերջին շրջանում այդ հավասարակշռությունը չկար: Ծանրության կենտրոնը սխալ կերպով մղված էր դեպի ապարատը: Կուսակցության ինքնագործունեությունը հասցրած էր մինիմումի: Դա առաջ էր բերում ղեկավարելու ունակություն և յեղանակ, որն արմատապես հակասում է պրոլետարիատի հեղափոխական կուսակցության ոգուն: Կուսակցության ինքնագործունեության հաշվին կենտրոնականության ապարատի չափազանց ուժեղացումը կուսակցության մեջ առաջ բերեց **տկարություն**: Նա ծայրահեղ թևում չափազանց հիվանդագին արտահայտություն ստացավ. մինչև կուսակցության մեջ կոմունիզմին միանգամայն թշնամի տարրերի ղեկավարությամբ խմբակցություններ կազմվելը: Միևնույն ժամանակ ամբողջ կուսակցության մեջ ապարատային սիստեմով խնդիրները վճռելու դեմ քննադատական վերաբերմունքը մեծացավ: Ըմբռնումը կամ, համենայն դեպս, զգալը, որ կուսակցական բյուրոկրատիզմը սպառնում է կուսակցությունը փակուղու մեջ դցելու, դարձավ համարյա ընդհանուր: Բարձրացան նախազգուշացնող ձայներ: Առաջին պաշտոնական և մեծ չափով նշանավոր արտահայտությունը, կուսակցության մեջ առաջացած բեկման մասին, նոր կուրսի մասին յեղած բանաձևն է: Նա կյանքում կիրականանա այն չափով, ինչ չափով որ կուսակցությունը, այսինքն նրա 400 հազար անդամները՝ կցանկանան և կարող կլինեն այն իրականացնել:

Մի շարք հոդվածներում համառորեն այն միտքն է տարվում, որ կուսակցության կենդանացման հիմնական միջոցն այն է, որ նրա շարքային անդամների կուլտուրական մակարդակը բարձրացվի, որից հետո մնացյալը, այսինքն բանվորական դեմոկրատիան, արդեն բնական ճանապարհով կգործադրվի: Որ մեզ հարկավոր է մեր կուսակցության գաղափարական և կուլտուրական մակարդակը բարձրացնել, մեր առաջ կանգնած հսկայական խնդիրների պատճառով դա միանգամայն անվիճելի է. բայց հենց այդ իսկ պատճառով հարցի այդպիսի **մանկավարժական, խրատական** դասավորումը միանգամայն անբավարար, հետևապես և սխալ է և եթե այդ

բանում համառենք, նա միմիայն կրիզիսի լարվածություն առաջ կբերի։ Կուսակցությունն իր մակարդակը կբարձրանի վորպես կուսակցություն, միայն լրիվ և ամբողջությամբ կատարելով իր հիմնական խնդիրները, բանվոր դասակարգի կոլլեկտիվ, ինքնագործունեության ղեկավարությամբ և բանվոր դասակարգի կառավարության միջոցով։ Հարկավոր է վոչ թե **մանկավարժական, այլ քաղաքական** մոտեցում։ Չի կարելի հարցն այնպես դնել, իբր կուսակցական դեմոկրատիայի գործադրումը պետք է կախված լինի (մեր կողմից) կուսակցության անդամների «պատրաստականության» աստիճանից։ Կուսակցությունը կուսակցություն է։ Կարելի յե շատ խիստ պահանջներ ներկայացնել ամենքին, ով ցանկանում է մտնել մեր կուսակցության մեջ և մնալ նրա մեջ, բայց ընդունվածն արդեն դառնում է կուսակցական վողջ աշխատանքի ակտիվ մասնակիցը։

Սպանելով ինքնագործունեությունը, բյուրոկրատիզմը դրանով արգելք է հանդիսանում կուսակցության մակարդակի բարձրացման։ Յեվ դրա մեջ է՝ նրա գլխավոր հանցանքը։ Քանի անխուսափելիորեն կուսակցական ապարատի մեջ են մտնում ավելի փորձառու և փաստակավոր ընկերներ, այնքան ապարատի բյուրոկրատիզմը ավելի ծանր է անդրադառնում կուսակցության նոր սերնդի իդեական-քաղաքական աճման վրա։ Հատկապես դրանով է բացատրվում այն փաստը, վոր յերիտասարդությունը՝ կուսակցության ամենաճիշտ բարոմետրը՝ ամենից քիչ է ներգործվում կուսակցական բյուրոկրատիզմով։

Սակայն սխալ կլիներ մտածել, վոր կուսակցական հարցերի լուծման չափազանց շատ ապարատային մեթոդն աննկատելի յե անցնում կուսակցության քաղաքական փորձառությունն ու նրա հեղափոխական տրադիցիաները մարմնացնող հասակավոր սերնդի համար։ Վոչ, վտանգը շատ է մեծ նաև այս բևեռում։ Խոսել՝ վոչ միայն ռուսական, այլ և համաշխարհային մասշտաբով՝ հասակավոր սերնդի ահագին նշանակության մասին մեր կուսակցության համար, կարիք չկա, դա հանրածանոթ է և ճանաչված բոլորի կողմից։ Սակայն կոպիտ սխալ կլիներ այդ նշանակությունը գնահատել վորպես **բացարձակ գոհացնող** փաստ։

Միայն հասակավոր յեվ յերիտասարդ սերունդների փոխազդեցությունը կուսակցական դեմոկրատիայի շրջանակում կարող է իրեն գվարդիան պահպանել վորպես հեղափոխական ֆակտոր։ Այլապես ծերունիները կարող են ընդարմանալ և իրենց համար աննկատելի, դառնալ ապարատային դեմոկրատիայի վերջացած արտահայտություն։

«Հին գվարդիայի» վերածնունդը պատմության մեջ շատ անգամ է նկատվել։ Վերցնենք պատմական թարմ և ցայտուն օրինակ. II Ինտերնացիոնալի ղեկավարներին ու կուսակցությունները։ Մենք արդեն գիտենք, վոր Վիլհելմ Լիբկնեխտը, Բեբելը, Զինգերը, Վիկտոր Ադլերը, Կաուցկին, Բերնշտայնը, Լաֆարգը, Գեդը և ուրիշները յեղել են Մարքսի ու Էնգելսի հարազատ և անմիջական աշակերտները։ Բայց և մենք գիտենք, վոր բոլոր այդ ղեկավարները՝ մեկը մասամբ, մյուսն ամբողջապես՝ պարլամենտական

ռեֆորմի և կուսակցության ու պրոֆեսիոնալ ապարատի ճնշող զարգացման հանգամանքներում դարձան օպորտունիզմի կողմը։ Մենք ավելի ցայտուն կերպով տեսնում ենք հատկապես իմպերիալիստական պատերազմի նախօրյակին, ինչպես սոցիալ-դեմոկրատական հզոր ապարատը, ծածկված հասակավոր սերնդի հեղինակավորությամբ, հեղափոխության զարգացման ամենամեծ նարգելիչն հանդիսացավ։ Ու մենք,— հատկապես մենք «ծերունիներս»,— պիտի ասենք, վոր մեր սերունդը, կուսակցության մեջ բնականորեն ղեկավար դեր խաղալով, բայց և այնպես իր մեջ չի բովանդակում վոչ մի **գոհացուցիչ** ապահովություն ընդդեմ պրոլետարական և հեղափոխական վոգու աստիճանական և աննկատելի թուլացման, յեթե ընդունենք, վոր կուսակցությունը յեթարկվի ապարատային—բյուրոկրատական քաղաքականության մեթոդների հետագա զարգացման ու ամրապնդման, վորն յերիտասարդ սերունդը դարձնում է դաստիարակման պասիվ նյութ և ապարատի ու մասսայի, ծերունիների ու յերիտասարդների մեջ մտցնելով անխուսափելի օտարացում։ Այդ անվիճելի վտանգի դեմ վոչ մի այլ միջոց չկա, բայց յեթե կուրսի լուրջ, խորը, ռադիկալ փոփոխությունը՝ դեպի կուսակցական դեմոկրատականությունը, կուսակցության մեջ ավելի ու ավելի գրավելով ստանկի մոտ մնացած պրոլետարիատին։

Ցես այստեղ կանգ չեմ առնի կուսակցական դեմոկրատիայի այս կամ այն իրավաբանական (կանոնադրական) սահմանափակումների և բնորոշումների վրա։ Վորքան էլ կարևոր լինեն դրանք, սակայն դրանք յերկրորդ հերթի հարցեր են։ Մենք այդ հարցը քննության կառնենք յեղած փորձառության հիման վրա և ինչ վոր պետք է, փոփոխություն կենթարկենք։ Բայց ամենից առաջ պիտի փոխենք այն վոգին, վոր տիրում է կազմակերպությունների մեջ։ Հարկավոր է, վոր կուսակցությունը, հանձինս իր բջիջների, ու միությունների վերադարձնի, իրեն կոլլեկտիվական նախաձեռնությունը, ընկերական ազատ քննադատության իրավունքը,— առանց վախի ու հետադարձության,— կազմակերպչական ինքնորոշման իրավունք։

Անհրաժեշտ է թարմացնել ու նորոգել կուսակցական ապարատը, ստիպելով նրան զգալ, վոր նա հսկա կոլլեկտիվի կատարողական մեխանիզմն է։

Կուսակցական մամուլում վերջերս բերված են բազմաթիվ օրինակներ, բնույթագծող կուսակցական բարքերի ու հարաբերությունների շատ հեռու գնացած բյուրոկրատիզմի այլասերումը։ Քննադատությանն ի պատասխան տրվում է.—«ցույց տվեք ձեր կուսակցական տոմսը»։ Մինչ կենտկոմի նոր կուրսի մասին հայտարարելը, ապարատի բյուրոկրատացած ներկայացուցիչները կուսակցական ներքին քաղաքականության փոփոխության անհրաժեշտության մասին հիշատակությունը համարում էին հերձվածություն, ֆրակցիոներականություն և դիսցիպլինայի խախտում։ Այժմ էլ նրանք ձևականորեն պատրաստ են նոր կուրս առնել «ի գիտություն», այսինքն **բյուրոկրատականորեն վոչնչացնել այն։**

կուսակցական ապարատի վերանորոգումը, ի հարկե կանոնադրության պարզորոշ շրջանակում պետք է տեղի ունենա բյուրոկրատացածներին ու կայոննիտացածներին փոխարինելով թարմ ուժերով, վորոնք սերտ կապված են կոլեկտիվի կյանքին կամ ընդունակ այդպիսի կապն ապահովելու։ Յեվ ամենից առաջ կուսակցական պոստերից պետք հեռացվեն այն տարրերը, վորոնք քննադատության, բողոքի, հակաճառության առաջին ձայնին իսկ հակամետ են կուսակցական տոմս պահանջելու ռեպրեսիաների նպատակով։ Նոր կուրսը պետք է սկսվի նրանից, վոր ապարատի մեջ բոլորը վարից վեր՝ զգան, վոր վոչ վոք չի կարող կուսակցությունը տեռորի յենթարկել։

Բավական չէ, վոր յերիտասարդությունը կրկնի մեր ֆորմուլաները։ Հարկավոր է, վոր յերիտասարդությունը հեղափոխական ֆորմուլաները վերցնի պայքարով, մսի ու արյուն դարձնի այն, մշակե իր սեփական կարծիքը, հարազատ դեմքը և ընդունակ լինի պայքարելու իր սեփական կարծիքի պաշտպանության համար այն քաջությամբ, վորը ստացվում է անկեղծ համոզմունքով և բնավորության անկախությամբ։ Պասսիվ յենթակայությունը, իշխանավորների մեքենայորեն հավասարվելը, անդեմությունը, ստորաքարշությունը, կարիերիզմը կուսակցությունից դեն պետք շպրտել։ Բոլշևիկը վոչ միայն դիսցիպլինայի մարդ է, վոչ, դա մի մարդ է, վորը խորը դույլ կոխելով, ամեն անգամ մշակում է իր համար հաստատուն կարծիք, քաջաբար և անկախորեն պաշտպանում է այն վոչ միայն թշնամու հետ ունեցած պայքարում, այլև իր սեփական կազմակերպության մեջ։ Նա այսոր իր կազմակերպության փոքրամասնությունն կկազմի։ Նա յենթարկվում է, վորովհետև դա իր կուսակցությունն է։ Բայց, անշուշտ, ամեն անգամ այդ չի նշանակում, վոր նա իրավացի չէ։ Նա գուցե ուրիշներից ավելի շուտ է տեսել կամ հասկացել նոր խնդիրը կամ թեքման անհրաժեշտությունը։ Նա համառորեն բարձրացնում է հարցը և յերկրորդ, յերրորդ ու տասներորդ անգամ։ Դրանով նա ծառայություն է մատուցում կուսակցությանը, օժանդակելով նրան նոր խնդրին հանդիպելու պատրաստված կամ կատարելու անհրաժեշտ թեքումը առանց կազմակերպչական ցնցումների ու ֆրակցիոնական ջղաձգումների։

Այո, մեր կուսակցությունը չէր կարող կատարել իր պատմական միսիան, յեթե նա բաժանվեր ֆրակցիոնական խմբավորումների։ Այդ չի կատարվի, չպիտի լինի։ Դրան դեմ է կուսակցությունն ամբողջությամբ, վորպես ինքնագործ կոլեկտիվ։ Բայց կուսակցությունը կարող է հաղթահարել ֆրակցիոնությունը, միայն զարգացնելով, ամրապնդելով և ապահովելով բանվորական դեմոկրատիան։ Հենց ապարատային բյուրոկրատիզմը ֆրակցիոնության մի կարեվորագույն աղբյուրն է։ Նա խեղդում է քննադատությունը և անբավականությունը խորացնում։ Նա հակամետ է ֆրակցիայի յարլիկը կպցնել յուրաքանչյուր անհատական կամ կոլեկտիվ քննադատական կամ նախազգուշացման ձայնին։ Մեխանիկական կենտրոնացումը լրացնում է անխուսափելի ֆրակցիոնականությունը, վորը

միևնույն ժամանակ չարախնդիր ծաղրանկարը և քաղաքական վտանգ է կուսակցական դեմոկրատիայի համար։

Վաղը պայմանների ճշգրիտ ըմբռնումով կուսակցությունը կկատարի անհրաժեշտ թեքումը մեր առաջ կանգնած հարցի առաջացրած խորության հաստատակամությամբ և վճռականությամբ։ Դրանով իսկ կուսակցությունը ավելի բարձր աստիճանի կհասցնի իր հեղափոխական միությունը, վորպես գրավական այն բանի, վոր նա կարող կլինի հաղթահարելու անչափելի նշանակություն ունեցող տնտեսական և միջազգային խնդիրները։

Յես վոչ մի խնդրով չսպառեցի հարցը։ Յես գիտակցաբար հրաժարվեցի քննելու նրա կարևորագույն շատ կողմերը, վախենալով շատ ժամանակ խլել ձեզնից։ Բայց հույս ունեմ, վոր կարող կլինեմ շուտով հաղթահարել մալերիան, վորը՝ դատում եմ ինձնով՝ բացարձակ օպպոզիցիա է կուսակցական նոր կուրսին և այն ժամանակ կփորձեմ ավելի պարզ բանավոր խոսքով լրացնել ու նորացնել այն, ինչ վոր չեմ ասել նամակում։

Ընկերական բարևներով՝ Լ. Տրոցկի

8 դեկտեմբերի, 1923 թ.

Հետ գրություն։ Օգտվելով այն հանգամանքից, վոր այս նամակը տպագրվում է «Պրավդայում» յերկու օր ուշ, կամենում եմ մի քանի լրացուցիչ նկատումներ անել։

Ինձ հայտնեցին, վոր մի քանի ընկերներ, շրջանային ժողովներում իմ նամակը հայտարարելու ժամանակ, վախ են հայտնել, վոր իմ խոսքերը «հին գվարդիայի» և նոր սերնդի փոխհարաբերությունների նկատմամբ կարող են օգտագործվել յերիտասարդությունը ծերերին հակադրելու (!) համար։ Հեռվից հեռու կարելի յե յերաշխավորել, վոր նման մտածմունք կարող է առաջանալ այն ընկերների գլուխներում, վորոնք դեռ յերկու-յերեք ամիս առաջ սարսափով յետ էին ընկրկում ընթացքի անհրաժեշտ փոփոխության հարցի հրապարակ իսկ բերելուց։ Համենայն դեպս նման վտանգի առաջին պլան քաշելը ներկա պայմաններում յեվ ներկա տրամադրությունների ժամանակ կարող է առաջ գալ միայն իրական վտանգների ու նրանց հերթականության անճիշտ գնահատությունից միայն։ Յերիտասարդության ներկայիս տրամադրությունը, վորը ունի, ինչպես պարզ է կուսակցության ամեն մի մտածող անդամի համար, չափազանց սիմպտոմատիկ բնույթ, առաջացել է «անհողդողդության» այն մեթոդների շնորհիվ, վորի դատապարտությունը Քաղբյուրոյի միաձայն ընդունած բանաձևն է։ Այլ խոսքով ասած, հենց «անհողդողդությունն» էր իր մեջ պարունակում կուսակցության ղեկավար շերտի և նրա ավելի յերիտասարդ անդամների՝ այսինքն նրա ճնշող մեծամասնության մեջ աստիճանաբար մեծացող ստվարացման վտանգը։ Կուսակցական ապարատի ցանկությունը մտածել ու վորոշել կուսակցության փոխարեն, իր զարգացման ու ձգման մեջ տանում է ղեկավար շրջանների հեղինակության ամրապնդման միջոց տրադիցիո-

վրա հիմնված: Դեպի կուսակցական տրադիցիան ունեցած հարգանքն անյերկբայելի է, որ կուսակցական զարգացման ու միաձուլման անհրաժեշտագույն բաղկացուցիչ էլեմենտն է, բայց այդ էլեմենտը կենսունակ և դիմացկուն կլինի այն դեպքում, յեթե նա մշտապես սնվում և ամրապնդվում է կուսակցական տրադիցիայի ինքնուրույն և ակտիվ վերստուգմամբ, կուսակցական քաղաքականության այսօրվա կոլեկտիվ մշակման ճանապարհով: Առանց այդ ակտիվության և ինքնագործունեության, տրադիցիայի հարգանքը կարող է դառնալ կազյոննի ռոմանտիկա կամ ուղղակի մերկ կազյոնշչինա, այսինքն՝ **ձեվ առանց բովանդակության**. Ավելորդ է ասել, որ սերունդների նման կապը միանգամայն անբավարար է ու անկայուն: Արտաքնապես նա կարող է ամուր համարվել միայն հինգ րոպե առաջ այն բանից, յերբ նրա մեջ առաջանում են ճեղքեր:

Հատկապես սրա մեջ է ապարատային կուրսի վտանգը, որը հենված է կուսակցության մեջ «անհողմության» վրա: Յեվ որքան հեղափոխականորեն պահպանված, չորքունիացած ներկայացուցիչները հասակավոր սերնդի, այսինքն՝ ինչպես հաստատ համոզված ենք մենք՝ նրա ճնշող մեծամասնությունը իրանց պարզ հաշիվ տան վերը բնութագծված վտանգի հեռանկարների մասին, և, կանգնելով քաղբյուրոյի կենտկոմի բանաձևի վրա, բոլոր ջանքերը թափեն այն բանի համար, որպեսզի օժանդակեն կուսակցությանը այդ բանաձևը կյանքի մեջ իրականացնելու, նույն չափով կվերանա կուսակցության մեջ զանազան սերունդների հակադրության վտանգի գլխավոր աղբյուրը: Յերիտասարդության այս կամ այն «ավելորդաբանությունը» կամ վոգևորությունը այդ ընթացքում այն ժամանակ ավելի դյուրին կլինի հաղթահարել: Սակայն նախ և առաջ պետք ստեղծել նախադրյալներ այն բանի համար, որ կուսակցական տրադիցիան չկենտրոնանա ապարատի մեջ, այլ ապրի ու նորոգվի կուսակցության կենդանի փորձառության մեջ: Դրանով խուսափած կլինենք նաև մի այլ վտանգից.— ամենահասակավոր սերնդի բաժանումը «ապարատականի», այսինքն «անհողմությունը» պահպանելու պիտանիների և վոչ-ապարատական տարրերի: Պետք չէ ասել, որ կուսակցության ապարատը, այսինքն, նրա կազմակերպչական կմախքը դուրս գալով ինքնաճանաչիչ փակվածությունից, վոչ թե կթուլանա, այլ կամրապնդվի: Իսկ այն մասին, որ մեզ հարկավոր է ուժեղ կենտրոնացած ապարատ, մեր կուսակցության մեջ յերկու կարծիք լինել չի կարող:

Գուցե դեռ կարելի յե հակաճառել, որ նամակում բերված սոցիալ-դեմոկրատիայի ապարատային այլասերումը ճիշտ չէ — ժամանակաշրջանների խորը տարբերության՝ այն ժամանակի ճահճացած-ռեֆորմիստական և ներկայիս հեղափոխական լինելու շնորհիվ: Հասկանալի յե, որ օրինակը միայն օրինակ է և վոչ նույնություն: Սակայն ժամանակաշրջանների այդ խմբական հակադրությունը ինքնին դեռ վոչինչ չի վորոշում: Իզուր չէ, որ մենք մատնանշում ենք միջազգային հեղափոխության **ձգձգված** բնավորության հետը սերտորեն կապված նեպի վտանգավորության վրա:

Մեր պետական-փորձառական ամենօրյա աշխատանքը, վորն ավելի մանրակրկիտանում և մասնագիտանում է, ինչպես ցույց է տված կենտկոմի բանաձևի մեջ, իր մեջ թաքցնում է հորիզոնի նեղացման, այսինքն ապարատային այլասերման վտանգ: Միանգամայն պարզ է, վոր այդ վտանգներն ավելի սուր են դառնում, քանի վոր կուսակցական ղեկավարությունը փոխարինվում է փակված «քարտուղարային» հրամանատարությամբ: Մենք վատ հեղափոխականներ կլինեյինք, յեթե հույս դնեյինք այն բանի վրա, թե բոլոր և ամենից առաջ ներքին դժվարությունները հաղթահարելու կօգնի «ժամանակի հեղափոխական բնույթը»: Պետք է, ինչպես հարկն է, օգնել «ժամանակին», Քաղբյուրոյի կենտկոմի հայտարարած **միաձայնությամբ** ընդունված կուսակցական նոր կուրսի ուղիղ իրականացումով:

Ի յեզրափակումն մի նկատողություն ևս: Յերկու-յերեք ամիս առաջ, յերբ ներկայիս դիսկուսիայի նյութ կազմող հարցերը դեռ նոր եյին մտցնում, այսպես ասած, կուսակցության օրակարգի մեջ, մի քանի գավառական պատասխանատու ընկերներ հակամետ եյին բարեհամբույրորեն ուսերը թոթվել, թե — այդ ամենը Մոսկվայի հնարածներն են, վոր գավառում ամեն ինչ բարեհաջող է: Այժմ էլ գավառական մի քանի թղթակցություններում լսվում է նույն նոտան: Վարակված կամ խառնաշփոթված Մոսկվային խաղաղ և խելացի գավառը հակադրելը իրենից ներկայացնում է վոչ այլ ինչ, յեթե վոչ նույն բյուրոկրատիզմի, թեկուզ և գավառական հրատարակությամբ, ցայտուն արտահայտությունը: Իրոք մեր կուսակցության Մոսկվայի կազմակերպությունը ամենաընդարձակն է, կենսունակը և կարող ուժերով հարուստը: Նույնիսկ, այսպես կոչված, «անհողմության» (շատ արտահայտիչ բառ է և չի կարող չմտնել մեր կուսակցության պատմության մեջ) ամենախուլ մոմենտին, Մոսկվայի կազմակերպության մեջ ինքնուրույն կյանքը և ակտիվությունն ավելի բարձր է յեղել, քան վորևէ այլ տեղ: Յեթե Մոսկվան այժմ վորևէ բանով զանազանվում է վորևէ այլ կետից, այն նրանով, վոր իր վրա առավ կուսակցական ընթացքի քննության ինիցիատիվան: Դա նրա բացը չէ, այլ արժանիքը: Ողջ կուսակցությունը, Մոսկվայի ընթացքով, կանցնի անցյալ շրջանի վորոշ արժեքների վերագնահատման անհրաժեշտ ստադիան: Գավառական կուսակցական ապարատը քանի քիչ հակառակի դրան՝ այնքան ավելի ծրագրված կանցնեն նրանք քննադատության և ինքնաքննադատության անխուսափելի ու պրոգրեսիվ ստադիան:

Արդյունքը կլինի կուսակցության ավելի կենսունակ միաձուլվածությունը և կուլտուրայի մակարդակի բարձրացումը:

Լ. Տ.

ԸՆԿ. ԶԻՆՈՎՅԵՎԸ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(ԸՆԿ. ԶԻՆՈՎՅԵՎԻ ԶԵԿՈՒՅՈՒՄԸ ՊԵՏՐՈԳՐԱԴԻ XIX ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԻՆ)

Կուսակցությունը կարծիքների պարլամենտ չի յեղել վոչ էլ դիսկուսիոն ակումբ։ Որվա հերթական հարցը ներքին կուսակցական դեմոկրատիայի կենդանացումն է։ Կուսակցական լայն մասսան բավարար չափով կուլտուրական չէ։ — Դեմոկրատիայի սկզբունքներն այն չափով են պետական, վորքան նրանք ոգտակար են հեղափոխության համար։ — Կուլտուրան մենք կարող ենք նվաճել ներքին կուսակցական դեմոկրատիայի միջոցով։ — Տնտեսական ասպարեզում աշխատող կոմունիստների բուրժուական ազդեցություններով վարակվելու առաջն առնելու համար անհրաժեշտ է կուսակցական վերահսկողությունը յեվ կուսակցության խիստ աչքը։ Համակրանքը դեպի մեր կուսակցությունն աճում է։

ՀԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՆՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Թեյեւս, ընկերներ, յես վորոշ չափով սխալ եմ գործել, յերբ իմ հոդվածը, վորը դիսկուսիայի նյութ է ծառայում, «Մեր կուսակցության նոր խնդիրները» վերտառության տակ եմ գրել։

Հարցն այնքան նոր խնդիրների մասին չէ, վորքան նոր պայմանների մեջ հին խնդիրների լուծման մասին։ Բոլորովին ճշգրիտ լինելու համար պետք է ասել՝ խնդիրը կուսակցության այժմեյական հարցերի մասին է, թե դրանք հին են կամ նոր, դա կվորոշվի ապագայում։

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՈՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՆԵՊ-Ը

Յերկու տարի կուսակցությունն աշխատում է ՆԵՊ-ի պայմաններում։ Մեր կուսակցական համագումարում յես արդեն ասել եմ, թե պետք է տարբերել յերկու բան՝ նոր տնտեսական քաղաքականությունը և այն, ինչ վոր հասարակ կերպով մենք անվանում ենք ՆԵՊ։

Տնտեսական նոր քաղաքականությունը պատմականորեն անհրաժեշտ, համաշխարհային հեղափոխության համար մեր վարած պայքարի մեջ շատ լուրջ մի եջ է։ Դա համաշխարհային հեղափոխության գլուխներից մեկն է։

Այն ինչ, «ՆԵՊ» անվան տակ այլ դասավորում ենք մտցնում։ Այդ դեպքում մենք աչքի առաջ ենք ունենում արդեն նեպմանությունը, սպեկուլյատիվ ժանտախտը։

Մենք ապրել ենք յերկու տարի տնտեսական նոր քաղաքականության և միևնույն ժամանակ ՆԵՊ-ի պայմաններում, այսինքն բուրժուազիայի աճման, սպեկուլյացիայի ծավալման և դրանց զուգընթաց բոլոր անմխիթար յերևույթների պայմաններում։

Ի՞ՆՉ ՉԱՓՈՎ ԱՅԴ ՆԵՊ-Ը ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑԱՎ ՄԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Արդյոք ճշմարիտ չեն մեր այն հակառակորդները, վորոնք կասկածում ու կարծում են, վոր ՆԵՊ-ն անպայման մեր կուսակցությունը կդարձնի մանր բուրժուական։ Ճիշտ է արդյոք, վոր մենք դադարում ենք համաշխարհային հեղափոխության կուսակցություն լինելուց և դառնում ենք դեմոկրատական քաղքենի մի կուսակցություն։

Այդ հարցից վոչ մի կերպ չի կարելի խուսափել։

Ինձ թվում է, ընկերներ, վոր այդ հարցերի ամենալավ պատասխանը հետևյալն է—։

Գերմանական հեղափոխությունը զարգանում է, ինչպես յերևաց, շատ ավելի դանդաղ, քան մենք կարծում էինք։ Այն ժամանակամիջոցները, վոր մենք նշանակել էինք հակաեժերբերին այն տվյալների հիման վրա, վոր ունեյինք մեր ձեռքի տակ, չարդարացան։ Բայց այն, թե ինչպես անդրադարձան Գերմանիայում կատարվող դեպքերը մեր կուսակցության վրա, համենայն դեպս ամենալուրջ նշանակություն ունի։

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԻՑ ՎԱՐ, ՄԻՆՉԵՎ ԱՄԵՆԱՀԵՏԻՆ ՄԱՐԴԸ ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ ԱՅՆՊԵՍ, ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ԱՐՏԱՀԱՅՏՎԵՐ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ։

Կուսակցությունը ցույց տվեց, վոր յեթե Գերմանիայում դեպքերը պրոլետարիատի հեղափոխական հեղաշրջման կտանեյին, այն ժամանակ ինքը պատրաստ էր պրոլետարիատի հեղափոխական կուսակցության իր պարտականությունը, մինչև վերջ կատարել, անկախ այն բանից թե ինչ ուղղությամբ առաջ կգնային դեպքերը։

Այն փորձառությունը, վորի միջով անցել է մեր կուսակցությունը, գրավական է, վոր կուսակցությունը հիմնական գծերով առողջ է։ Ընդհակառակը, յեթե մեզ փորձեյին մեղադրել, այդ կարելի յեր անել թերևս դեպքերի գերագնահատության վերաբերմամբ, թե մենք դեպքերն արագացնում եյինք հակաեժերբերին, նոյեմբերին, դեկտեմբերին։ Բայց վոչ մի դեպքում մեզ չի կարելի մեղադրել այն բանի մեջ, թե մենք յենթարկվել ենք ՆԵՊ-ին, փորձել ենք խուսափել համաշխարհային հեղափոխության հեռանկարներից։

Այդպիսով վերջին շաբաթների քաղաքական դեպքերը, ինձ թվում է, մեզ մի ավելորդ ապացույց տվին, թե յերբ փողը հնչի, յերբ մեր կուսակցության անհրաժեշտությունն զգացվի բռնելու միջազգային պրոլետարիատի կարևորագույն դիրքը, մեր կուսակցությունը ընդունակ կլինի այդ դիրքը բռնել և պատվով կատարել իր պարտքը։ Դա յես համարում եմ միանգամայն ապացուցված։

ԱՆՃԻՇՏ ՀԱՅԱՑՔ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Այդ դեռ բոլորովին չի նշանակում, վոր մեր մոտ կուսակցության ներսում չկան թույլ կողմեր։ ՆԵՊ-ի հետևանքով մեզնում, ըստ իս, նըկատվում է ընդհանուր առմամբ, յերկու զարտուղություն, յերկու անճիշտ հայացքներ կուսակցության իսկական եյության վերաբերմամբ։ Մի կողմից նրանք, վորոնք վարում են պատասխանատու վարչական տնտեսական աշխատանք, հաճախ կուսակցության վրա նայում են, վորպես մի ոժանդակիչ հիմնարկության վրա՝ վարչական կամ տնտեսական աշխատանքը ավելի հաջող տանելու համար։ Մյուսներն ընկնում են այլ ծայրահեղության մեջ, նրանք նայում են կուսակցության վրա, վորպես մի ազատ դիսկուսիոն ակումբի վրա, վորպես կարծիքների պարլամենտի վրա։ Այս հայացքն էլ, այն հայացքն էլ ճիշտ չեն։

Ի՞ՆՉ Է ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Կուսակցությունը վոչ մի դեպքում հիմնարկություն չի։ Կուսակցությունը նա մի շատ ավելի բարձր բան է։ Միևնույն ժամանակ կուսակցությունը նաև կարծիքների պարլամենտ և դիսկուսիոն ակումբ չէ։ Վոչ այդ, վոչ մյուսը ճիշտ չեն։

Կուսակցությունը ինքնագործոն քաղաքական օրգանիզմ է, վորը հազարավոր թելերով կապված է բանվոր մասսաների հետ, ծծելով իր մեջ այդ մասսաների միջի լավագույն տարրերը, հաճախ նրանց միացնելով և իր ուժերով կառավարելով վարչական տնտեսական օրգանները։ Միևնույն ժամանակ կուսակցությունը գծում է վորոշ սահմաններ, վորոնցից այն կողմ մեզնից վոչ վոք չի կարող դուրս գալ։ Յեվ այդ իմաստով կուսակցությունը վոչ մի դեպքում չի նայում իր վրա, վորպես ազատ ակումբի, կարծիքների պարլամենտի վրա։

Ինչպես բոլորդ գիտեք, կուսակցության մեջ մենք մտնում ենք կամովին։ Ինքնակամ կերպով ենք մենք դնում մեր վրա վորոշ դիսցիպլինա։

Մեզնից յուրաքանչյուրը, մտնելով կուսակցության մեջ, շատ լավ գիտե, վոր կուսակցության մեջ մտնելով հաճախ ինքը կգործի անձնական կարծիքի համաձայն, կամ այդ կարծիքի յերանգավորմամբ։ Կուսակցությունն ավելի ևս չի կարող լինել դիսկուսիոն ակումբ կամ կարծիքների պարլամենտ պրոլետարիատի դիկտատուրայի ժամանակաշրջանում։

Մենք պետք է դեն գցենք և այս և՝ այն ծայրահեղությունը, և նայենք մեր կուսակցության վրա վորպես մի ինքնագործոն օրգանիզմի վրա, ինչպես վայել է բանվորական կուսակցության առաջավոր ավանգարդին, բոլշևիկներին, մի օրգանիզմի, վոր հազարավոր թելերով կապված է մասսաների հետ և առաջացրել է իրեն ամբողջ պետությունը կառավարելու հսկայական խնդիրը։ Ի հարկե, այստեղ թույլատրվում է մեր միջավայրում կարծիքների վորոշ ազատություն, բայց և միևնույն ժամանակ կատեգորապես մերժվում է ամեն մի հայացք, վոր կուսակցության վրա կնայի վորպես կարծիքների պարլամենտի վրա։

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ

Ամբողջ Ֆեդերացիայում կա 311 հազար կուսակցական անդամ և 92 հազար թեկնածու։ Դրան պետք էր ավելացնել նաև կոմյերիտմիությունը և այլն, բայց յես խոսում եմ կուսակցության կազմի մասին այդ խոսքի նեղ իմաստով։

Կուսակցության հիմնական խմբակցություններն հետևյալներն են՝ — դազգյահի առաջ կանգնող, ֆիզիկական աշխատանքով զբաղվող բանվորները մեր կուսակցության մեջ 54 հազար են։ Հացաբուծությամբ զբաղվող գյուղացիները 61 հազար են։ Այդ յերկու խմբակցությունները կազմում են 120 հազար։ Դատողությունները չխճճելու համար թեկնածուներին յես թողնում եմ մի կողմ։ Մնում է էլի 200 հազար։ Այդ 200 հազարը զբաղվում են Կարմիր բանակի ու տնտեսական, պետական և վարչական ապարատի մեջ։

Արդյոք նման փոխադարձ հարաբերությունը մեր կուսակցության մեջ կարող է նորմալ համարվել։

Յեվ այո, և վոչ։ Ըստինքյան հասկանալի յե և միանգամայն անխուսափելի, վոր մենք, պետությունը կառավարելիս, պետք է դուրս քաշենք և դուրս էլ քաշել ենք ֆաբրիկաներից և գործարաններից լավագույն, հասուն կոմունիստական ուժերին։ Հակառակ դեպքում չէինք կարող կազմակերպել Կարմիր բանակը, տնտեսական, վարչական և խորհրդային օրգանները։ Միանգամայն հասկանալի յե, վոր պետությունն կառավարող կուսակցությունը պետք է իր կազմի խոշորագույն մասը կենտրոնացնի հենց այդ հիմնարկներում։ Այնուամենայնիվ ինձ թվում է, ընկերներ, վոր յեթե հարկ յեղած վերաբերմունք յերևան բերենք դեպի գործը, մենք լուրջ շանսեր ունենք բարելավելու խմբակցությունների այդ փոխադարձ հարաբերությունը և ինձ թվում է, վոր կարևորագույն խնդիրներից մեկն հենց դրանումն էլ կայանում է։

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԵՆԴԱՆԱՑՈՒՄԸ

Մենք այժմ դնում ենք ներքին կուսակցական դեմոկրատիայի կենդանացման հարցը։ Ընկերները լիակատար իրավունքով մտահոգվում են, վոր այդ հարցը դրված էր կուսակցության 10-րդ համագումարին, վոր 10-րդ համագումարի բավական մանրամասն վորոշումները մշակվեցին և գործադրվեցին վոչ լրիվ, իսկ մի քանիսն էլ բոլորովին չգործադրվեցին։

ԻՆՉՈ՞Ւ ԱՅԴ ՀԱՐՑԵՐԸ ՊԻՏԻ ԴՆԵՆՔ ԱՅԺՄ

Այդ հարցերը մենք դրինք 1921 թվին, ներքին կուսակցական դեմոկրատիայի մասին մշակեցինք վոչ անբավարար վորոշում։ Ինչու այդ վորոշումները չգործադրվեցին կյանքի մեջ։ Դրա պատճառը վորոշ չափով օբյեկտիվ պայմաններն էյին։ Յիշենք այն ժամանակները թե ինչով էյին հետաքրքրվում Պետրոգրադի բանվորները,— մեր կուսակցության կարևորագույն կազմակերպություններից մեկն եմ վերցնում յես։ Իհարկե նրանք

հետաքրքրվում էին վոչ թե կուսակցական դեմոկրատիայով, այլ կարտոշկայով և նույնիսկ կարտոշկայի կլեպով։ Ահա ինչպիսի պայմանների մեջ էինք 1921 թվին։

ՆԷՊ-ին անցնելիս մենք սկսեցինք ձևակերպել նոր խնդիրներ։ Այն ժամանակ այդ խնդիրները չէր կարելի իրագործել, վորովհետև բանվոր դասակարգը ցրվում, ապադասակարգայնանում էր և վորովհետև որվա գլխավոր չարիքը, վոր արճիճի նման կախված էր ամեն մի բանվորի փեշերից—բաժնի, կարտոշկայի հարցն էր։ Այժմ մենք վերոհիշյալ հարցերը դնում ենք անհամեմատ ավելի բարենպաստ պայմաններում։

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԱՊԱԴԱՍԱԿԱՐԳԱՅՆԱՑՄԱՆ ՊՐՈՑԵՍԸ ԴԱԴԱՐԵԼ Է

Պրոլետարիատը նորից սկսում է կազմել կոմպակտ մասսաներ, նրա շարքերը լրացվում են, նրա տրամադրությունը առողջանում է։ Բավական է բերել փոքր օրինակ մեր շրջանից։ Մեզ մոտ Պետրոգրադում անցյալ տարի կար 33 հազար մետալիստ, իսկ այս տարի՝ 61 հազար։

Դա մի կարդինալ փաստ է, վոր փոխում է կացությունը։ Այն բանվորները, վորոնք թափառում էին վերջին տարիների ընթացքում, այժմ ձգվում են դեպի մեր ֆաբրիկաներն ու գործարանները՝ իրենց հետ բերելով կուտակված և տարիների ընթացքում բազմապատկված քաղաքական փորձ։ Նրանք տեսան մենք էլ տեսանք, առաջին հաջողությունները տնտեսական ճակատում,

ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԱԿԱՏՈՒՄ

Այդ հաջողությունները, ընկերներ, դեռ շատ մեծ չեն—չխաբվենք,- բայց նրանք մեզ համար թանգ են հենց նրա համար, վորովհետև մեր առաջին հաջողություններն են։

Այն տրամադրությունը, վոր մենք ձեռք ենք բերել տնտեսական առաջին հաջողությունները, անցնում է անկուսակցական բարեխիղճ բանվորների լայն մասսաներին։ Ամեն մեկը տեսնում է, վոր գործը յետ չի գնում, այլ առաջ,—դա արտադրական առողջ մթնոլորտ է ստեղծում, մի բան, վոր բացակայում էր անցյալում, առանց վորի բոլոր խոսակցությունները կուսակցական շինարարության մասին կառուցված են ավազի վրա։

ՄԵԶ ԹԱՓ ՉՏՎԻՆՔ

Ասացի վոր 1921 թվի վորոշումները չիրագործվեցին վորոշ չափով օբյեկտիվ պատճառների շնորհիվ։ Բայց չասացի, վոր կային նաև սուբյեկտիվ, մեզնից, մեր կազմակերպությունից կախում ունեցող պատճառներ։ Այդ սուբյեկտիվ պատճառները յերկու խմբի յեն բաժանվում։

Մեկը—դա մեր կազմակերպության մեքենայականությունն էր։

Շատ դժվար էր մեզ թափ տալը, հետ-ռազմական կոմունիզմից

նոր ժամանակաշրջանին անցնելը։ Մենք շատ յերկար գնացինք պատրաստի ռեյլսներով, իներցիայով, շատ դանդաղությամբ նոր ճանապարհներին անցնելով։

Պատճառների այլ խումբը դա՝

Մեր կուսակցության անդամների շարքային մասի անբավարար կուլտուրականությունն էր,—

Արմատական մի պատճառ, վորին դեմ ենք առնում ամեն քայլափոխում։

ԱՎԵԼԻ ԲԱՐԵՆՊԱՍՏ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Մենք բավարար չափով նախապատրաստված, բավարար չափով կուլտուրական չէինք, վոր, ինչպես հարկն է, մեր ձեռքն առնեինք կուսակցության բախտը և իրագործեինք վերոհիշյալ վորոշումները։ Այդ բոլոր կողմերից տվյալ մոմենտում գտնվում ենք ավելի բարենպաստ պայմաններում։ Տվյալ մոմենտում հաջողություն ձեռք բերելու ավելի մեծ շանսերով կարող ենք զբաղվել մասամբ այն հարցերով, վոր դրվել, բայց չեն վճռվել 1921 թվին, մասամբ էլ նոր հարցերով, վոր առաջադրվել են մեզ նոր կացության պայմաններում։

Այդպիսիներից մեկն է

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ՀԱՐՑԸ

Բանվորական դեմոկրատիայի հարցում բոլշևիզմը վոչ միշտ ունեցել է այն դիրքը, վոր ունի այժմ։

Կար ժամանակ, յերբ բոլշևիզմը հաշվի յեր առնում մեր յերկրի օբյեկտիվ կացությունը և արտահայտվում էր կուսակցության ներսում ընտրության սկզբունքին դեմ։ Այդ ժամանակը 1905 թվի հեղափոխությունից առաջ էր։ Մեր առաջին պառակտումը մենշևիկների հետ գլխավորապես այդ գծով էր, ընթանում։

Մենշևիկ. դեմագոգիա էին անում դեմոկրատիզմով և ընտրականությամբ այնպիսի պայմաններում, յերբ դրա մասին խոսք անգամ չէր կարող լինել։ Վեճը տեղի յեր ունենում 1905 թվի հունվարին՝ մենշևիկների և բոլշևիկների պայքարի ամենաթեժ շրջանում։ Մենշևիկները մեղադրում էին բոլշևիկներին և մասնավորապես ընկ. Լենինին այն բանի մեջ, վոր նրանք դեմ են ներքին կուսակցական դեմոկրատիզմին, վոր նրանք թույլ չեն տալիս բանվորներին կառավարել կուսակցությունը։ Ընկ. Լենինը դրան պատասխանեց մի հոդվածով՝ «Սոխակին—առակով չեն կերակրում» վերնագրի տակ, վորի մեջ ցույց տվեց, վոր դեմոկրատիզմը, այսինքն ընտրական սկզբունքի ընդհանուր կիրառումը, ռուս կոնսպիրատիվ կազմակերպությունների մեջ անհարիր է ինքնակալ վոստիկանական կարգ ու կանոնին։ Դա բոլշևիզմի հիմնական միտքն էր։

Հեշտ չէր պաշտպանել այդ դիրքը։ Մենշևիկները ստանում էին եժան դափնիներ, ինչպես և այժմ էլ կստանա մի վորևէ չակերտավոր դեմոկրատ,

վորը ներկայացրել դեմոկրատիայի բարիքները՝ հաշվի չառնելով կացությունն իր ամբողջությամբ։

Մենք պետք է պարզ հասկանանք, վոր յերբ դնում ենք ներքին կուսակցական դեմոկրատիայի հարցը, պետք է դնենք այն կոնկրետ կերպով, տվյալ պատմական դարաշրջանի վերաբերմամբ։ Մենք չենք խոսում ընդհանրապես դեմոկրատիայի մասին, այլ այժմ գոյություն ունեցող, պրոլետարիատի դիկտատուրայի ժամանակաշրջանի դեմոկրատիայի մասին։

Մեզ համար բարձրագույն օրենքը հեղափոխության շահն է և վոչ թե տառը, վոչ թե դոգման, վոչ թե այսպես կոչված սկզբունքը։

Հեղափոխության շահը պահանջում է, վոր մեր կազմակերպությունը կոնսպիրատիվ, խիստ ցենտրալիզացիայի յենթարկված լինի։ Յերբ կփոխվի կացությունը, այն ժամանակ կդնենք ներքին կուսակցական դեմոկրատիայի հարցը

Յեվ իսկապես, յերբ ընկավ ցարիզմը, այն ժամանակ մենք դրինք ներքին կուսակցական դեմոկրատիայի հարցը այլ կերպ։

1905—1907 թվականների ամբողջ շրջանը խայտաբղետ պատկեր եր ներկայացնում՝ լեգալի միացումն անլեգալի հետ. —դա ընդհանուր բանաձև եր—ներքին կուսակցական դեմոկրատիզմի սկզբնավորությունները և ներքին կուսակցական ամենախիստ կոնսպիրացիայի միացումը,—վորովհետև այդ եր պահանջում խայտաբղետ կացությունը։

Սկսվեցին հակահեղափոխության տարիները։ Կուսակցությունը դարձավ գաղտնի։ Ներքին կուսակցական դեմոկրատիզմի մասին այլևս քիչ եր խոսվում։

Յեկավ պատերազմը։ Կուսակցական ամբողջ կազմակերպությունը արտաքուստ ընդունեց գերխստագույն ցենտրալիզմի տիպը։

Ցարիզմի անկումից հետո, 1917 թվին, սկսեցինք կուսակցությունը նոր ձևով կազմակերպել։

Քաղաքացիական կռիվը պահանջում եր լարել վերջին մկանները։ Նա պահանջում եր, նաև դեմոկրատական սկզբունքների վորոշ շրջանակ։ Յես ասում եմ, վոր հարցը պետք է դնել հարկ յեղած շրջանակների մեջ, վորովհետև յերիտասարդության մեջ, վորը մեզ փոխարինելու յե, վորին մենք սիրում ենք, նկատվում է շատ պարզեցրած վերաբերմունք դեպի այդ հարցը։ Դեմոկրատիան-շատ լավ է։ Բանվորական դեմոկրատիան՝ ել ավելի լավ է։ Ընդլայնված դեմոկրատիան դրանից ել լավ է։

Ով ձեռք կտա դրան, նա բանվորների թշնամին է, նա պահպանողական է՝

Հեղափոխության շահը,—ասաց Պլեխանովը կուսակցության յերկրորդ համագումարին,—ահա բարձրագույնը։

Դեմոկրատիայի սկզբունքներն ինձ պետք են այն չափով, ինչ չափով դա շահավետ կլինի հեղափոխության համար։ Յերբ պետք է այդ դեմոկրատիան ճզմել, յես կճզմեմ նրան, յերբ կարիք կլինի այդպիսի մի կազմակերպության, յես կընդունեմ այդ ձևի կազմակերպությունը։

Մենք պետք է հարցին մոտենանք ավելի կոնկրետ կերպով, պետք է

հաշվի վրա նայենք պատմական տվյալ մոմենտում կիրառելի լինելու տեսակետով։ Միայն այդ կերպ մենք կարող ենք դնել հարցը։

ՄԵՐ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Յեղել են և կան արդյոք մեզնում կազմակերպության անմխիթար կողմեր։ Անկասկած, կան։

Ընկ. Պրեոբրաժենսկին մեր կուսակցության դրությունը քննադատեց։

Լավատեղյակ չլինելով կուսակցության դրությանը, նա ասում է.—Մեր կուսակցությունը այնքան անբախտ է, վոր նրա վրա չկա գոնե առողջ տեղ։

Ունինք, ճիշտ է, մենք նաև թույլ կողմեր, այդ պետք է նկատել։ Հուլիսի 15-ից մինչև նոյեմբերի 15-ը Ռուսաստանի Կոմյերիտմիությունը բաց է թողել 120 շրջաբերական։ Դա արդեն իսկ չափազանց է։ Դա ցույց է տալիս, վոր կազմակերպությունը թույլ է։

Յեթե մենք նայելու լինենք Գոմելի նահանգի զեկուցումներին, կտեսնենք, վոր 70-ից ավելի գյուղախմբերում (ВОЛОСТЬ) կոլեկտիվների բյուրոն և քարտուղարները նշանակված են իրեն, նահանգական կոմիտեի կողմից։ Դա արդեն չափազանց վատ է։

Մեզ մոտ կանոն եր՝ նշանակել կոլեկտիվների կազմակերպիչներ։ Այժմ կարծում եմ, կարելի յե ընդհակառակն անել՝ դարձնել դա բացառություն օրենքից։

Այնտեղ, ուր բջիջը հիվանդ է, պետք է առողջացնել նրան, բայց յերբ «նշանակելը» դառնում է օրենք, դա արդեն սխալ է։

Մեր Պիտերյան կազմակերպության մեջ ել կան բաներ, վոր պետք է ուղղել։

ԴԱԶԳՅԱՀԻ ԱՌԱՋ ԿԱՆԳՆԱԾ ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐԻ ԹԻՎԸ ՊԻՏԻ ԱՎԵԼԱՑՆԵԼ

Դազգյահի առաջ կանգնած անդամների թիվը մեր կուսակցության մեջ անհամեմատ քիչ է։

Այդ թիվը պիտի ավելացվի, ինչ էլ վոր լինի։ Յես ասացի, վոր մեզ մոտ, Պետերբուրգում 30 հազար նոր մետալիստներ կան։ Արդյոք բավական չափով ազդել է այս հանգամանքը կուսակցության կազմակերպության վրա։ Վոչ։ Բայց դա մի խոշոր յերևույթ է՝ 30 հազար նոր մետալիստներ, վորոնց մեջ կա հին, ժառանգական պրոլետարների բավական մեծ կորիզ, պետք է ազդեր մեր կազմակերպության վրա թարմ արյան ներհոսումով։ Այդ բանը չենք տեսնում։ Յեվ դա անհրաժեշտ է ուղղել։

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

Ելի պիտի կանգ առնել այն սահմանափակումների վրա, վոր մենք գիտակցաբար պիտի մտցնենք բանվորական դեմոկրատիայի մեջ։ Մենք

չենք խոսում բոլշևիկյան դեմոկրատիայի մասին ընդհանրապես, այլ տվյալ ժամանակաշրջանին համապատասխան բոլշևիկյան դեմոկրատիայի մասին: Մի շարք սահմանափակումներ իրենք իրենց են առաջ գալիս, և մի շարք սահմանափակումներ մենք մտցրել ենք: Մենք անցկացրինք կուսակցության զտումը, որ նշանակում էր, թե կուսակցության մի մասը, նրա ավելի պրոլետարական մասը, անհրաժեշտ համարեց՝ հեղափոխության շահերի համար, դուրս անել մյուս մասին, ավելի անվստահելի ուղեկիցներին, վորոնք խցկվել էին մեր շարքերը, չհասկանալով, թե ինչ է կոմունիստական կուսակցությունը: Կուսակցության զտումը դեմ է բոլշևիկյան դեմոկրատիայի սկզբունքներին, այդ բառի իսկական իմաստով:

Մի անգամ վորոշեցինք, վոր կուսակցության համագումարին, կարծեմ 10-րդ համագումարին, պատգամավոր կարող է ընտրվել կուսակցության վոչ ամեն անդամ, այլ վորոշ ստաժ ունեցողները միայն: Վերացական բոլշևիկյան դեմոկրատիայի տեսակետով դա դեմոկրատիայի բռնություն էր:

Մեզ պետք էր այդ սահմանափակումը հեղափոխության շահերի տեսակետով, հեղափոխության օգտի տեսակետով, վորպեսզի ընտրել տայինք նրանց, ովքեր կուսակցության իսկական գվարդիան են:

Յերկրորդ սահմանափակումով՝ նահանգական կոմիտեների, գավառական կոմիտեների, քարտուղարների ու նահանգական արհմիության նախագահների և այլոց վերաբերմամբ մենք դնում ենք կուսակցության ստաժի խնդիրը:

Դա դեմոկրատիայի լուրջ սահմանափակումն է:

Պե՞տք էր այդ այդպես անել, թե վոչ: Պետք էր անել: Հեղափոխության շահը,— ահա բարձրագույն օրենքը:

Յերրորդ սահմանափակում՝ քարտուղարները պետք է հաստատվեն ավելի բարձր կոլեգիայի կողմից: Դա դեմոկրատիա չէ, սակայն դա մենք անում ենք:

Չորրորդ սահմանափակումը կարմիր բանակի մեջն է: Այստեղ՝ քաղաքական աշխատանքը մենք տանում ենք քաղբաժինների գծով, այլ կերպ չի կարող լինել:

Կարելի՞ յե միթե դեմոկրատիայի շրջանում դրանից հրաժարվել: Վո՛չ: Ամեն մի հեղափոխական կասի՝ կորչեն բոլշևիկյան դեմոկրատիայի սրբազան սկզբունքները, միայն թե ունենանք իսկական Կարմիր Բանակ, վորը իսկապես կարողանա պաշտպանել հեղափոխության շահերը…

Ահա ձեզ սահմանափակումների ամբողջ մի շարք, վոր միանգամայն անխուսափելի կերպով բղխում են պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններից:

Բոլշևիկյան դեմոկրատիայի կարևորագույն սահմանափակումներից մեկը, դա այն է, վոր մենք արգելում ենք խմբակցություններ և Ֆրակցիաներ կազմելը:

«ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ»

Վերլուծենք այս հարցը՝ Ֆրակցիաների ազատությունը, խմբակցությունների ազատությունը. արդյո՞ք դրանք վերաբերում են բոլշևիկյան դեմոկրատիայի սկզբունքներին: Այո, անպայման վերաբերում են: Ֆրակցիաների այդ ազատությունը կար յերկրորդ ինտերնացիոնալի գոյության ամբողջ ընթացքում: Այնտեղ ստացվում էր այնպիսի պատկեր, թե սոցիալ-դեմոկրատների կուսակցության ներսում պայքարում էին յերկու կամ յերեք խմբակցություններ:

Յերբ սկսվեց կազմակերպվել կոմինտերնը, նրա առաջին խոսքը յեղավ՝ մենք այժմ ցանկանում ենք ունենալ վոչ թե կարծիքների պառլամենտ, վոչ թե փոստի արկղ, այլ ցանկանում ենք ունենալ ղեկավար օրգան, ցանկանում ենք ունենալ միակ, բոլորին ղեկավարող կուսակցություն, վորովհետև այլ կերպ մենք չենք կարող հաղթել բուրժուազիային:

Իսկ միակ բոլշևիկյան կուսակցություն ունենալու համար պետք է հրաժարվել Ֆրակցիոն պայքարի ազատությունից:

Վորպես բացառություն յերբեմն խմբերի պայքար է տեղի ունենում նաև կոմունիստական կուսակցության մեջ, բայց միայն վորպես բացառություն: Մենք յերբեմն գերադասում ենք դեն գցել կուսակցության շատ նշանավոր մի մասը, ինչպես այդ արվեց Նորվեգիայում, վորպեսզի կուսակցությունը իսկապես դառնա ամբողջական, միաձույլ կոմունիստական կուսակցություն: Այդ կատարվում է, ընկերներ, միջազգային մասշտաբով: Համառուսական մասշտաբով դա էլ ավելի պարզ է:

Կարո՞ղ ենք մենք ազատություն թույլատրել Ֆրակցիաներին և խմբակցություններին: Վո՛չ:

Յեթե մենք դիմացանք, չնայած այն բոլոր փորձանքներին, վոր թափվում էին մեր գլխին ամեն կողմից, դրա պատճառը միայն այն է, վոր մեր կուսակցությունը միաձույլ էր: Հիշենք կուսակցության 10-րդ համագումարի դիսկուսիան, հիշենք ինչպես հետո ընկ. Լենինը սկսեց հոդվածներ գրել, վորոնց մեջ ասում էր, թե կուսակցությունը հիվանդ է, վոր կուսակցությունը դողերոցքի մեջ է, ինչպես նա էր ասում, և յեթե բոլշևիկները անմիջապես միջոցներ ձեռք չեն առնի այդ դողերոցքային տեմպերատուրան իջեցնելու համար, այն ժամանակ վատ կլինի մեր գործը:

10-րդ համագումարը ընդունեց դիսկուսիայի և դատողությունների ազատություն կուսակցության մեջ: Բայց նույն 10-րդ համագումարը ընդունեց ընկ. Լենինի առաջարկը Ֆրակցիաների և խմբակցությունների արգելման մասին:

Պետք է խիստ կերպով տարբերել դիսկուսիաների և դատողությունների ազատությունը, պայմանները թույլատրելու սահմաններում, Ֆրակցիաների և խմբակցությունների ազատությունից: Դրանք միանգամայն տարբեր բաներ են:

Ի՞նչ է նշանակում Ֆրակցիաների պայքար պետական տնտեսության

մեջ: Այդ նշանակում է, վոր մի խմբակցություն, մի գործարան մի կողմ է քաշում, իսկ մյուսը՝ մի այլ կողմ: Նույնը կատարվում է նաև բոլոր այլ հիմնարկներում: Մենք պետություն ենք կառավարում: Յեվ յեթե մենք չենք կարող տանել ֆրակցիաների ազատության Կոմինտերնի մեջ և ընդհանրապես կոմունիստական կուսակցության Յեվրոպայի կազմակերպությունների մեջ, ուրեմն ավելի ևս չենք կարող հանդուրժել այդ Ռուսաստանում: Յեվ այդ այն պատճառով, վորովհետև Յեվրոպայում պատերազմից հետո այնքան բան չի փոխվել, այնտեղ հեղափոխությունը միայն գալիս է, բայց դեռ չի յեկել, այնտեղ իշխանությունը բուրժուազիայի ձեռքին է, այնտեղ առաջավոր կուսակցության հիմնական խնդիրը ագիտացիան ու պրոպագանդան է, այն ինչ մեզ մոտ—մեզ մոտ իշխանությունը մեր ձեռքին է, մենք ենք կառավարում պետությունը:

Ուրեմն և այն, ինչ վոր Յեվրոպայում վտանգավոր է կոմունիստական կուսակցության համար, մեզ համար վտանգավոր է յերկնիցս, յերիցս:

Պրոլետարական դիկտատուրան կայանում հենց նրանում, վոր նա միասնական է, միաձույլ: Յերկպառակված դիկտատուրան չոր ջուր է, դա արդեն դիկտատուրա չէ, այլ դիկտատուրայի կորուստ:

Պաշտպանելով 10-րդ համագումարի ռեզոլյուցիան՝ մենք մտածում ենք նրա վոր մասն է իրագործված և վոր մասը դեռ չի իրագործված և թե ինչու այժմյան կացությունը հույս է ներշնչում, վոր մենք կարող ենք այդ ռեզոլյուցիան իկատար ածել ավելի լրիվ կերպով:

ՇՏԿՈՒՄՆԵՐ ՊԵՏՔ ԵՆ

Յես պետք է բանավեճի մեջ մտնեմ ընկ. Սարգսի հետ, վորը գրել է յերկու հոդված—մեկը շատ ճիշտ է, իսկ մյուսը նույնքան անճիշտ է: Ճիշտ է յերկրորդը և անճիշտ է առաջինը բանվորական դեմոկրատիայի հարցի առթիվ:

Նրա հոդվածում ամեն բան հանգում է այն մտքին, թե կուսակցական կազմակերպության մեջ պետք չի վոչ մի շտկում մտցնել: Այդ ինարկե ճիշտ չէ և մեզ շտկումները պետք են: Բանվորական դեմոկրատիայի շրջանում մենք շատ բանով յետ ենք մնացել: Նոր կացության պայմաններում մենք պետք է անցնենք կազմակերպությունների և բջիջների ընտրովիության ներքևից, մենք պետք է նահանգական կոմիտեներ և ռայոնական կոմիտեներ ընտրելիս ավելի լայն ձայնավորություն մտցնենք:

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆՆԵՐԻ ՅԵՎ ԱՆԿՈՒՍԱԿՑԱԿԱՆՆԵՐԻ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ինչ վերաբերում է կուլտուրականության հարցին, յես համաձայն եմ ընկ. Սարգսի հետ: Յես ասացի, վոր քաղաքականապես մեր կոլեկտիվները ավելի բարձր են, քան անկուսակցական մասսաները հենց այն պատճառով, վոր նրանք ամբողջ կուսակցության մասնիկն են

կազմում: Բայց կուլտուրականության, կենցաղի, անձնական շրջաններում մենք յերբեմն նկատում ենք, վոր մեր կուսակցական աշխատավորների մի մասը յետ է մնում զանազան կողմերով անկուսակցականներից: Յեվ այս հանգամանքը վոմանց դուր չի գալիս:

Յերբեմն մամուլի մեջ փորձեր են յեղել հակադրել յերկու խնդիրները: Ասում են խնդիրը նրանում չի, վոր անկուսակցականը յերբեմն ավելի կուլտուրական է, խնդիրը մեր կուսակցության շարքային անդամի կուլտուրական մակարդակը բարձրացնելու մեջն է: Ինչ վերաբերում է մեր սեփական կուսակցության անդամի կուլտուրական մակարդակը բարձրացնելուն, դա խնդիրների խնդիրն է, դա ամեն բանի բանալին է և իզուր են իմ ասածն ինձ յետ դարձնում:

Յես մատնանշել եմ այս հանգամանքի վրա ամենավճռական կերպով: Իհարկե դա ամենակարևոր խնդիրն է, բայց հակադրել այդ յերկուսը իրար չի կարելի:

Յերբ մենք խոսում ենք կուլտուրայի մասին, ի նկատի ունենք այն կուլտուրան, վոր անհրաժեշտ է սոցիալիստական շինարարության համար:

Ի՞ՆՉՊԵՍ ԿԱՐԵԼԻ ՅԵ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ԱՅԴ ԿՈՒԼՏՈՒՐԱՆ

Կարելի՞ յե այն ձեռք բերել միայն գրքերով: Գիրքը լավ բան է, ձեռնարկները կարևոր նշանակություն ունեն: Բայց այնուամենայնիվ մեզ պետքական այդ կուլտուրան մենք կարող ենք ձեռք բերել միայն մեր անդամների ինքնագործուն և ակտիվ մասնակցությամբ հասարակական կյանքի մեջ՝ խորհրդային, արհմիության և կուսակցական ապարատներում, այսինքն ներքին դասակարգային դեմոկրատիայի միջոցով: Կուսակցության անդամը պետք է ակտիվ մասնակցություն ցույց տա մի շարք խնդիրների քննության ժամանակ,—առանց դրան նա չի ստանա այն գիտելիքները, վոր նրա համար անհրաժեշտ են: Այն ընկերները, վորոնք աշխատում են բջիջների մեջ, մեծ ջանքեր թափելով, շատ ծանր աշխատանք են կատարում:

Յես ինձ լրիվ հաշիվ եմ տալիս, թե վորքան ծանր է բջիջի կազմակերպիչի վիճակը, ինչ արգելքների դեմ նա պետք է կռվի, ինչ դժվար դրության մեջ է ընկնում նա, յերբ կուսակցությունը ստիպված է գործունեության ուղղությունը փոխել, իսկ նա չի կարողանում արագ համակերպվել: Սակայն սխալ կլիներ վիրավորվել, յեթե ասվում է, թե մենք մի քանի բաներով հետ ենք մնում անկուսակցականներից: Յեվ դա իր պատճառներն ունի:

Ի՞ՆՉՈՒ ՅԵՆՔ ՅԵՏ ՄՆԱՑԵԼ

Մենք յետ ենք մնացել շատ հասարակ պատճառով: Կուսակցությունը խլեց ֆաբրիկաների և գործարանների բջիջներից տասնյակ հազարավոր լավագույն ուժեր:

Իհարկե յերբ տասնյակ հազարավոր լավագույն բանվորներ խլված են բջիջներից, վերջինները քաղաքականապես կդառնան նվազ հասուն:

Սա մեր դժբախտությունն է և վոչ թե մեղքը: Մյուս մոմենտը ժամանակի բացակայությունն է: Այս կետում արդարացի կերպով մատնանշում են, վոր անկուսակցական բանվորը հաճախ ավելի ժամանակ ունի, քան մեր կուսակցական ընկերը, վորը հաճախ ծանրաբեռնված է ուժերից վեր: Նրա նյութական կացությունն էլ հաճախ ավելի վատ է, նրա ռոճիկից շատ են դուրս գալիս հօգուտ կուսակցության, արհմիության և այլն:

Նա հաճախ չի կարող իրեն թույլ տալ այն, ինչ վոր իրեն թույլ է տալիս անկուսակցականը:

Ահա թե ինչու չի առաջ գալիս այն, վոր մի քանի, բայց վոչ բոլոր տարբերակներում մենք իսկապես յետ ենք մնում:

ՅԵՎ ՄԵՆՔ ԴՐԱՆԻՑ ԱՆՈՒՄ ԵՆՔ ՅԵՐԿՈՒ ՀԵՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ

Նախ պետք է այն անկուսակցական բանվորներին, վորոնք անցել են աշխարհագրական խմբակը, պատմական մասնաճյուղը, քաղաքական գրագիտությունը և այժմ հեղափոխության յոթերորդ տարում մտել են մեզ, տեսնում են, վոր մենք արդարացի յենք, պետք է նրանց ընդունել կուսակցության մեջ:

Չպետք է այս դեպքում խստություններ գործադրել, ինչպես յերբեմն մենք գործադրում ենք: Դա առաջին յեզրն է:

Մյուս յեզրն այն է, վոր բոլոր ուժերով պետք է ունենք կուսակցական կազմակերպությանը ձեռք բերել կորցրածը, վոր նա կուլտուրապես ավելի բարձր կանգնած լինի անկուսակցական մասսաների մակարդակից: Այդ կետում մենք յետ ենք մնացել: Առանց դրան մենք չենք կարող ավելի առաջ շարժվել:

Վորոշ հաջողություններ այնուամենայնիվ մենք արել ենք: Բանֆակներում, կոմունիստական համալսարաններում, կուսակցական դպրոցներում սովորում է կուսակցական անդամների բավական մեծ թիվ: Բայց այդ քիչ է, դա մի կաթիլ է ծովի մեջ:

ՏՆՏԵՍԱՎԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ինչ վերաբերում է տնտեսավարներին, հաճախ շատերը կարծում են, թե տնտեսավարներին մենք համարում ենք կուսակցության յերկրորդ կարգի անդամներ:

Ի՞նչ է մեր իսկական վերաբերմունքը դեպի տնտեսավարները: Ինչպես յես, նույնպես և բոլորը գիտեն, վոր մեր կուսակցության մեջ յուրաքանչյուրը իրեն աշխատանք է ընտրում վոչ թե ինքը, այլ կուսակցությունն է տալիս նրան այդ աշխատանքը: Յեթե մեկին նշանակել են տնտեսության վրա, իսկ մյուսին դարձրել են շրջանային կազմակերպիչ, այդ այդպես է յեղել կուսակցության վճռով:

Նրանց այդ պաշտոններին նշանակել է կուսակցությունը, և վոչ թե իրենք են գնացել այդ գործին:

Տնտեսական աշխատանքների մեջ են հին հեղափոխականների, գերազանց աշխատավորների կեսը, վորոնք մի ամբողջ շարք աշխատանքների մեջ ցույց են տվել իրենց անձնվիրությունը: Տնտեսավարների հարկ յեղած թիվը դեռ մենք չենք գտել կուսակցությունից: Մենք փորձում ենք, շոշափում ենք, ընտրում ենք դեռ: Դա շատ կարևոր պատասխանատու գործ է: Աստիճանաբար ընտրվում է և կազմվում տնտեսավարների կադրը:

Չի կարելի տնտեսավարների վրա նայել, վորպես կուսակցության յերկրորդ կարգի անդամների վրա: Այդ խմբակն ունի վճռական նշանակություն, նրա հաջողությունից է կախված ամեն բան, նրա վարքով են մեր ընկերների մասին գաղափարություն տալիս անկուսակցականները:

Բայց, ընկերներ, կա մի այլ ծայրահեղություն: Տնտեսավարների մեջ կա մի այնպիսի տրամադրություն, թե ինչու է կուսակցությունը ինձ չափազանց շատ կոնտրոլի յենթարկում: Նրա վրա հսկում են և՛ դատախազը, և՛ նահանգական կոմիտեն, և՛ կազմբաժինը, վոր առանձնապես յերբեմն նրան դուր չի գալիս, և՛ ռայկոմն ու նրա բաժանմունքը, և՛ կոլեկտիվը, այդպիսով այստեղ ամենայնինչ վիզն էլ չի դիմանում: Դա էլ վտանգավոր հոգեբանություն է, ընկերներ: Յեթե դու տնտեսական գործ ես վարում, մի մոռացիր, վոր դա արել է կուսակցությունը, վորը ղեկավարում է բանվոր դասակարգին և բոլորին պարտականություններ է բաշխում: Ահա ինչու համար է նա քո վրա հսկում. աշխատիր հաշտվել դրա հետ, վորպես մի անհրաժեշտ իրողության հետ:

Ինչ մենք ասում ենք տնտեսավարներին, և ամեն մի ազնիվ տնտեսավար ինքը հասկանում է, դա այն է, վոր տնտեսավարը ՆԵՊ-ի պայմաններում յենթարկվում է կազմալուծման մեծ վտանգին:

Ամեն մի պրոֆեսիա ունի իր պրոֆեսիոնալ վտանգները: Ինչպես տպագրիչը ռիսկ է անում թոքախտով հիվանդանալու, դա նրա պրոֆեսիոնալ հիվանդությունն է, նույնպես և տնտեսավարները ՆԵՊ-ի գոյության յերրորդ տարում հաճախ ռիսկ են անում վարակվել բուրժուական ազդեցություններով: Կուսակցությունը պետք է այդ սոփ ուղղակի և վորոշ ու- ամեն մի իրեն հարգող տնտեսավար չի կարող այդ բացասել՝ դա փաստ է: Դրա դեմ կա միակ միջոց՝ կուսակցական վերահսկողություն, կուսակցական խիստ և արթուն աչք: Յեվ դրանից վախենալ պետք չի:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԲԱԺԱՆՈՒՄ ՉԿԱ

Մենք պետք է ասենք, վոր կուսակցության մեջ չեն կարող լինել ստորաբաժանումներ՝ տնտեսավարներ, պրոֆեսիոնալիստներ, զուտ կուսակցականներ և այլն:

Այդպիսի ստորաբաժանումն անթույլատրելի է: Ամեն մեկն անում է իր աշխատանքը, իսկ կուսակցությունը, միայն կուսակցությունն է, վոր բոլորին իրար հետ շաղկապում ու վերախմբավորում է բոլոր ուժերը:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՆ ԸՍՏ ՀԱՍԱԿԻ

Դա յել մեր կուսակցության կարևոր և հետաքրքիր պրոբլեմներից մեկն է։ Ինչպես է դասավորվել մեզնում գործը։ Կուսակցությունն իր յետևում ունի առնվազն 25 տարվա պատմություն, իսկ դրա հետ միասին նույն կուսակցությունը ունի մի անձնական կազմ, վորի $^{9}/_{10}$ ունի իր յետևում միայն 2—3 տարի, այսինքն կուսակցության մեջ է մտել 1920 թվից, ահա մեր հիմնական մասսան։

Այս հանգամանքն ստեղծում է ծայր աստիճան բնորոշ և յուրահատուկ դրություն, և այդ չի կարելի հաշվի չառնել։ Մեր հիմնական գրուպան, վոր ներկայացնում է կուսակցության 20—25 տարվա զարգացումը, կազմում է կենտրոնը, ունի մեծ յերաշխիքներ. բայց նա արդեն մեռնում է և մասամբ էլ յետ է մնում կյանքից և չի գտնվում այն խնդիրների մակարդակի վրա, վոր առաջադրված են մեզ։ Մյուս կողմից գլուխ է բարձրացնում նոր շերտը, վորը ցանկանում է արագ կերպով մտնել ավելի մեծ հարցերին և ավելի պատասխանատու աշխատանքին և վորը յերբեմն ունի լիակատար իրավունք այդ անելու, յերբեմն էլ հարկ յեղած պատրաստությունը բոլորովին չունի։ Կուսակցության ամենակարևոր խնդիրներից մեկն է անհրաժեշտ միջին ճանապարհը գտնել 25 տարվա պատմությունը ներկայացնող հիմնական շերտի և քաղաքացիական պատերազմի ժամանակ կուսակցության կողմից կոփված նոր շերտի միջև։ Անհրաժեշտ է վորոշ համեմատություն պահել, վոր ամբողջ 25 տարվա փորձը կուսակցության համար իզուր չկորչի, իսկ մյուս կողմից, վոր դրա հետ միասին ծերունիների այդ խումբը չկտրի կուսակցության այն յերիտասարդ անդամների ճանապարհը, վորոնք ցանկանում են ակտիվ մասնակցություն ունենալ կուսակցության մեջ։

ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ

Պետք է գիտենալ, վոր Ռուսաստանի բանվորական դասակարգը կուսակցություն ստեղծեց խիստ դժվար պայմաններում։ Բանվորներն ապրում եյին գաղտնի տեղերում, բանտերում,—ահա նրանց գլխավոր համալսարանը, ուր նրանք գրքեր եյին կարդում, ահա թե ինչ պայմաններում նրանք պիտի աշխատեյին։ Յերիտասարդությունը ծնվեց այդ պայմաններում, ծնվեց ավելի ուշ,— դա նրա բախտն է։ Նա չապրեց, չըտեսավ պայքարի դժվարությունը, վոր կրել եր բանվորը։ Նրա համար կառավարությունը կարող է հիմնել համալսարաններ, ուր սովորելով 1—2 տարի, նա կմտնենա կուսակցական աշխատանքին, կդառնա կուսակցական կազմակերպությունների անդամ, խմբակներ կհիմնի կուսակցության վերահսկողություններով։

Համարեք դա բախտավորություն, սովորեք հարգել կուսակցությունը, մի շտապեք բռնել պատասխանատու տեղ, վորովհետև կարդացել եք «Կապիտալի» առաջին հատորը միայն, են էլ լավ չեք մարսել։ Համեստ յեղեք, ինչպես համեստ եր հեղափոխականների հին սերունդը, վորը չեր ասում, թե ինչու ինձ չեն տալիս պատասխանատու պաշտոն։ Կուսակցությունը կգնահատի ըստ ծառայությունների և առաջ կքաշի ում պետք է։

Ահա ինչ պիտի ասենք յերիտասարդներին։ Յես կարծում եմ, վոր յերիտասարդությունը քաղաքականապես և կուսակցորեն այնքան կուլտուրական ու դաստիարակված է, վոր կասի, թե ինքը կօգնի մեզ խմբակներում և կուսակցական կազմակերպությունների մեջ, և չի մտածի այն մասին, վոր իրեն առաջ քաշեն և պատասխանատու տեղ տան այն ժամանակ, յերբ նա դեռ սովորում է։

Կուսակցությունը կսովորեցնի, կուսակցությունը կդաստիարակի, յեթե ինքը սխալ անի՝ կուղղի,—ահա ինչպես պիտի մտածի յերիտասարդության առողջ մասը։

Ահա ինչու յեմ ասում, վոր կուսակցության կազմի հարցը ըստ հասակի հիվանդոտ հարց է։ Կուսակցությունը աճեց յուրահատուկ, յուրահատուկ և առանձնահատուկ կերպով։ 25 տարում նա ստեղծվել է և մի փոքրիկ խմբից դարձել է մի հսկայական հոսանք, վորի մեջ են մտել մի քանի հարյուր հազար զանազան պատրաստություն և փորձ ունեցող մարդիկ։ Պետք եր այդ բոլորին մարսել տալ կուսակցական վոգին, վորպեսզի հնարավոր լինի ստանալ անհրաժեշտ մարդկային մատերիալը։

Յերիտասարդությունը հեղափոխության ամենաթանկագին շերտն է, վորը մեծ օգուտ կբերի։

ՄԵՆՔ ՆՎԱՃԵՑԻՆՔ ՄԱՍՍԱՆԵՐԻ ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆԸ

Բանվորների վստահությունը դեպի կուսակցությունը մենք ձեռք ենք բերել։ Յեթե խոշոր տնտեսական սխալներ չանենք, այդ դեպքում բանվորների վստահությունը կնվաճենք վերջնականապես.

Այն գործադուլները, վոր տեղի ունեցան ամառը տնտեսական պատճառներով, սխալ եյին։ Մենք պետք է ուղղենք այդ։ Ասում են, թե կենտրոնական կոմիտեն մեղավոր է, վոր բանվորները դժգոհ են փոխառության օբլիգացիաների պատճառով

ՄԵՆՔ ՊԵՏՔ Ե ՊԱՀԵՆՔ ՄԵՐ ՉԵՐՎՈՆԵՑԸ

Բայց, ընկերներ, մենք պետք է պահենք մեր վոսկե չերվոնեցը։

Մեզ պատմում եր ընկ. Կրասինը, թե նա նստել եր Բեռլինում կանադյան պարոնների և Շայդեմանի հետ և նրանց ցույց եր տվել չերվոնեցը։ Տեսնելով չերվոնեցը այդ պարոնների բերնի ջուրը գնացել եր, իսկ Շայդեմանն ասել եր «պահեք չերվոնեցը ձեր գրպանում. թե չե կկորչի» (ծիծաղ)։

Բոլոր ընկերները շատ լավ հասկանում են, վոր չերվոնեցը հեղափոխության հիմնական նվաճումն է։ Մենք պետք է այն պահենք աչքի լույսի պես։ Մենք, վոր շատ քիչ ենք ուսումնասիրել ֆինանսների գործը, ա-

ձևնից ավելի աշխատում ենք չկորցնել այդ չերվոնեցը, վորը հեղափոխության հիմնական նվաճումն է։

Մենք շատ լավ գիտենք, վոր յերբ տալիս ենք վոսկու փոխատվությունը կարող են առաջ գալ թերևս գործադուլներ։ Բայց այլ կերպ չենք կարող վարվել, վորովհետև բոլոր մեր տնտեսական գործերը ի չիք կդառնան։

ՀԱՄԱԿՐԱՆՔՆ ԱՃՈՒՄ Է

Գյուղական բջիջներ փոքր ինչ ինքնադրվեցին և գտնվում են ավելի լավ դրության մեջ, քան առաջ։ Ինչ վերաբերում է բնակչության այլ խավերին, այդ կողմից ել մենք նորություններ ունենք։ Համակրանքի մասսայական հոսանք է առաջացել դեպի Խորհրդային իշխանության գաղափարները, ինչպես ստորին, նույնպես և վերին ինտելիգենցիայի և համարյա ամբողջ սովորող յերիտասարդության մեջ, վորոնք դուրս են յեկել վոչ միայն մեր, այլ և ուրիշ դասակարգերից։

Ահա այս նորությունն է, վորը բնորոշում է ներկա մոմենտը։

Դա չկար յերկու յերեք տարի սրանից առաջ։

Սովորող յերիտասարդության մեծ մասը գալիս է մեր յետևից։ Ուսուցչությունն ել է նույնը անում։ Վերջերս ինձ հայտնեցին Ուկրայինայան ընկերները, վոր այնտեղ ուսուցչությունը բուռն ձգտումն ունի մեր կուսակցությունը մտնելու և պահանջում է ընդունել։ Դա մասսայական յերևույթ է։ Չպիտի մոռանալ այն, վոր այդ ուսուցիչները մոտիկ անցյալում պետլյուրովշչինայի հիմքն եյին կազմում Ուկրայինայում և մանր բուրժուական ինտելիգենցիայի հիմնական գրուպպան են։

ՄԵՆՔ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄ ԵՆՔ ԱՅԴ ԴԱՐՁԸ

Ընկերներ, թե կա մասսայական դարձ դեպի մեզ, դա անկասկած է։ Մենք պետք է կարողանանք ոգտագործել այդ դարձը և մենք պետք է դրա մեջ տեսնենք յերկու կողմ։ Դրանում կան շատ դրական կողմեր։ Այդ մարդիկ կարող են լավ հիմքերի վրա դնել մեր դպրոցը, պրոֆեսորությունը կոգնի կազմակերպել բարձրագույն դպրոցներ, կոգնի մեզ վճռել այն խնդիրը, վոր առաջարկել է Տրոցկին իր նամակում՝ պատերազմի բախտը կըվճռի քիմիան և ավիացիան։

Մեզ պետք է քիմիան։ Ի հարկե, մենք ուրախ կլինենք և նույնիսկ շատ ուրախ, յեթե հնարավոր լինի գազային ռումբերի և առհասարակ ռումբերի կարիք չունենալ։ Բայց քանի վոր այդ պետք է, այդ դեպքում, պրոֆեսորներ, ոգնեք պրոլետարիատին զինվել նաև քիմիայով հակառակորդի դեմ կռվելու համար։

Հոկտեմբերյան հեղափոխության ընթացքում չեր յեղել այնպիսի ժամանակ վոր ամբողջ ինտելիգենցիան, ամբողջ սովորող յերիտասարդությունը, ամբողջ ուսուցչությունը, (յեթե վոչ ամբողջը, գոնե խոշոր մասը) գային մեր կողմը։

ՍԱ ՅԵՎ ՊԼՅՈՒՍ Է, ՅԵՎ ՄԻՆՈՒՍ

Պլյուս է այս յերևույթը, վորովհետև մենք ոգնություն ենք ստանում բնակչության կուլտուրական և կիսակուլտուրական խավերից, վորոնք կտան մեզ այն, ինչ մենք չունենք։ Իսկ մինուս է դա, վորովհետև նրանք մեզ կխճճեն իրենց ազդեցությունների ցանցում, մեր կուսակցության մեջ կըմտցնեն իրենց ազդեցությունը հազարավոր ճանապարհներով, վոր անտեսանելի յեն հասարակ աչքի համար։ Հենց դրա համար ել մենք մաքրում ենք, վոր այդ յերևույթները տեսնենք, յերբ նրանք սկիզբ կառնեն։

ԹՈՒՅՆ ՅԵՎ ՀԱԿԱԹՈՒՅՆ

Մենք ասում ենք, ահա նոր յերևույթներ, նայեք ինչպես եկրանի վրա։ — Ինտելիգենցիան, սովորող յերիտասարդությունը, ուսուցչությունը մասսայականորեն թեքվում են մեր կողմը, մի բան, վոր վկայում է մեր ուժի մասին։ Կարող ենք նրանց ոգտագործել մեր նպատակների համար, բայց ի նկատի ունեցեք, վոր այդ յերևույթը բերում է իր հետ բացասական կողմեր։

Լավ նայեք։

Միջոցներ ձեռք առեք, թույնի ամեն մի սրվակի դեմ ունեցեք տաս սրվակ հակաթույն։

Մեր ընկերների մի մասը հարկ յեղած պատրաստությունը չունի, վոր կարողանա իսկապես դիմադրել այնտեղ, ուր պետք է դիմադրել։ Այն ընկերները, վորոնք շփվում են խոշոր սպեցների հետ, հազվադյուտ դեպքում այդ շփումն անցնում է անպատիժ։ Մի վորև է կողմով նրանք յենթարկվում են սպեցներին։

Ահա, ընկերներ, այն հիմնական բանը, վոր յես ուզում եմ ձեզ ասել։

Յես կարծում եմ, վոր մենք չպետք է թույլ տանք, վոր սխալված դիսկուսիան ընդունի այն ձևերը, վոր յեղավ կուսակցության 10-րդ համագումարից առաջ, յերբ ընկ. Լենինը ստիպված եր գրել, թե կուսակցությունը դողերոցքի մեջ է. պետք է իջեցնել նրա տեմպերատուրան։

Այդ այժմ չի կարելի թույլ տալ վոչ մի դեպքում։

ԱՅԴՊԻՍԻ ՇՔԵՂՈՒԹՅՈՒՆ ԱՅԺՄ ՄԵՆՔ ՉԵՆՔ ԿԱՐՈՂ ՄԵԶ ԹՈՒՅԼ ՏԱԼ

Առաջին, վորովհետև դա պետք չէ։ Մենք կնդունենք հասուն վորոշումներ կուսակցական աշխատանքի կենդանացման, ներքին կուսակցական դեմոկրատիայի մասին։ Այն բոլորը, ինչ վոր կարելի յե և պետք է անել, մենք կվճռենք և կանցկացնենք։ Յերկրորդ, մենք չենք կարող այդ շքեղությունը մեզ թույլ տալ, վորովհետև միջազգային դրությունը շարունակում է մնալ ծայր աստիճան պատասխանատու, լարված։ Ամեն մի շաբաթ կարող է իր հետ նոր սյուրպրիզ բերել։

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԶ ՀԱՄԱՐ ՉԻ ԳԱ ՍՅՈՒՐՊՐԻԶՆԵՐՈՎ

Այդ մենք պետք է նկատի ունենանք։ Այնուհետև կան ներքին կուսակցական բնույթ կրող պատճառներ էլ։ Մենք այն ժամանակ, 10-րդ համագումարից առաջ, գործը լուրջ սրման հասցրինք։ Բայց մեր մեջ այն ժամանակ կար մի դեմք, վորի կարծիքն ամբողջ կուսակցության համար վճռական նշանակություն ուներ։

ԴԱ ԸՆԿԵՐ ԼԵՆԻՆՆ ԵՐ

Այժմ նա այնպիսի դրության մեջ է, վոր չի կարող մասնակցել մեր վճիռներին։ Դա մեզ բոլորիս վրա դնում է էլ ավելի ծանր պատասխանատվություն։

Մեր կուսակցության կենտկոմը, վոր կազմված է ընկ. Լենինի մի խումբ աշակերտներից, ամենածանր պայմաններում պիտի ընդունի ամենապատասխանատու վորոշումներ։ Վորոշում կայացնելով, մենք տարաբախտաբար հնարավորություն չունենք ստուգել դրա ճշտությունն այն մարդու մոտ, վորին մենք բոլորս անսահման հավատում ենք և գիտենք, վոր նա շատ հազվագյուտ դեպքերում է սխալվում։ Այժմ մենք ստիպված ենք վորոշումներ ընդունել առանց այդ ստուգման։

Դա տասնապատկում է մեր պատասխանատվությունը։ Կենտկոմն այժմ կարող է աշխատել և կատարել պատասխանատու ֆունկցիաներ, շատ ամուր ղեկը, ուր պետք է, ուղղել մեր շարքերը, բոլոր կողմերից բուրժուազիայով շրջապատված միջազգային ֆրոնտում մանյովրներ կատարել միայն այն դեպքում, յերբ նա իրեն զգա մեր կուսակցության հիմնական վճռական խավերի լիակատար վստահության մթնոլորտում։ Ահա ինչու այդպիսի պայմաններում վոչ մի դեպքում մենք չենք կարող թույլ տալ, վոր կուսակցությունը դառնա դիսկուսիոն ակումբ։

Մենք չենք կարող կուսակցությունը դարձնել մի այնպիսի հիմնարկություն, ուր ներկայացված լինեն բոլոր գրուպպաները։

ԿԵՆՏԿՈՄԸ ՊԻՏԻ ԼԻՆԻ ՇՏԱԲ ՅԵՎ ՎՈՉ ԹԵ ՊԱՐԼԱՄԵՆՏ

Կենտկոմը կուսակցության կոլեկտիվ կազմակերպիչն է։ Նա բանաձևում է կուսակցության հասարակական կարծիքը, նա ճանապարհ է ցույց տալիս նրան։

Միայն այդպիսի շտաբը կարող է կուսակցությունը ղեկավարել պրոլետարիատի դիկտատուրայի շրջանում։

ՄԵՐ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՀՍԿԱՅԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՆԵՆԱՆ

Այն, ինչ վոր յես ասում եմ, քննվում է մեր կուսակցության մի շարք կազմակերպությունների մեջ։

Պետրոգրադի կազմակերպության տեսակարար կշիռը յեղել է հսկայական և մնում է նույնը։ Մեզ մոտ է առաջ յեկել այն աշխատավորների փառահեղ խումբը, վորոնք այժմ վորոշ չափով կառավարում են ամբողջ պետությունը։ Նրանք կոփվեցին մինչ-հեղափոխության տարիներում և հեղափոխության ժամանակ Պետրոգրադի կազմակերպության մեջ, և նրա կոմիտեն յեղել է և է կուսակցական լավագույն լաբորատորիաներից մեկը։ Յես կարծում եմ, վոր աշխատավորների այն խումբը, վոր առաջ է յեկել վերջին տարիներում, նույնպես վատ չի լինի։

Մեր վորոշման տեսակարար կշիռը հսկայական նշանակություն կունենա ամբողջ կուսակցության համար։ Մեր վորոշումը բոլոր շանսերն ունի դառնալու ընդհանուր կուսակցական վորոշում։

Ահա ինչու մենք պետք է 20 անգամ այստեղ քննենք ու կշռենք այդ վորոշումը և արտահայտենք այն մաքսիմալ միահամուռությամբ և այն մաքսիմալ միաձայնությամբ, վոր բնորոշ է մեր կազմակերպության համար (բուռն և յերկարատև ծափահարություններ)։

ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ

ՄԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԸՆԿԵՐՆԵՐ,

Ամենից առաջ ես պետք է հայտնեմ, որ հանդես եմ գալիս այստեղ անհատապես և ոչ կուսակցության Կենտկոմի կողմից։ Եթե հաճելի է ձեզ լսել այդպիսի մի զեկուցում, ես պատրաստ եմ։ (Ձայներ. խնդրում ենք)։ Այդ բնավ չի նշանակում, թե իմ և Կենտկոմի միջև տարաձայնություններ կան այս խնդրի շուրջը։ Իմ կողմից եմ հանդես գալիս լոկ այն պատճառով, որ կուս. ներքին կացությունը բարեկարգող Կենտկոմին կից կազմված հանձնաժողովը իր աշխատանքների արդյունքի զեկուցումը դեռ օրերս է մ[իայն] այն ներկայացնելու Կենտկոմին։ Այդ արդյունքները դեռևս ներկայացված չեն և այդ պատճառով ես դեռևս ֆորմալ իրավունք չունեմ հանդես գալ Կենտկոմի կողմից, թեև ես համոզված եմ, որ այն, ինչ ես զեկուցելու եմ հիմա, ըստ հիմնականի արտահայտիչն է լինելու Կենտկոմի դիրքի այդ խնդիրների շրջանակում։

ԴԻՍԿՈՒՍԻԱՆ—ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒԺԻ ՆՇԱՆՆ Է

Առաջին խնդիրը, որ ես ցանկանում եմ դնել այստեղ, դա տեղի ունեցող այն դիսկուսիաների իմաստի խնդիրն է, որ մենք նկատում ենք մամուլի և բջիջների մեջ։ Ի՞նչ է ասում այդ դիսկուսիան և ինչ է նշանակում նա։ Մի փոթորիկ չէ՞ նա արդյոք, որ ներխուժել է կուսակցության խաղաղ կյանքի մեջ և ապացույց չէ՞ արդյոք, ինչպես ոմանք ասում են, կուսակցության տարրալուծման, քայքայման, կամ՝ ինչպես ուրիշներն են կարծում՝ կուսակցության կերպարանափոխման ապացույցը։ Ես կարծում եմ, ընկերներ, որ չկա ո՛չ մեկը ո՛չ մյուսը.—ոչ կերպարանափոխում և ոչ էլ տարրալուծում։ Խնդիրն այն է, որ վերջերս կուսակցությունն աճել, զորեղացել է, նա բավականաչափ զտվել է ավելորդ բալլաստից, դարձել է պրոլետարական։ Դուք գիտեք, որ յերկու տարի առաջ մենք ունեյինք 700,000 անդամից ավելի, դուք գիտեք, որ կուսակցությունից դուրս են յեկել և դուրս են գցվել մի քանի հարյուրը նախկին անդամներից։ Այնուհետև, իր կազմի տեսակետից կուսակցությունը բարելավվել է և այդ նույն ժամանակաշրջանում որակապես բարձրացել է շնորհիվ բանվոր դասակարգի նյութական պայմանների բարվոքման, նկատի առնելով այն հանգամանքը, որ բարձրացել է արդյունաբերությունը՝ նախկին վորակավորյալ բանվորների գյուղից վերադառնալու պատճառով, ինչպես և շնորհիվ այն հանգամանքի, որ կուլտուրական նոր մի ալիք է բարձրանում

արդյունաբերական բանվորների մեջ։ Մի խոսքով, շնորհիվ այս բոլոր պայմանների, կուսակցությունն աճել, զորեղացել է, որակապես բարձրացել է, նրա կարիքները, պետքերը և պահանջները մեծացել են, նա դարձել է ավելի պահանջկոտ, նա ցանկանում է ավելի շատ իմանալ, քան թե գիտե մինչև այժմ և նա ցանկանում է ավելի շատ խնդիրներ լուծել, քան լուծել է մինչև այժմ։

Սկսված դիսկուսիան ապացույց է ոչ թե կուսակցության թուլության և առավել ևս՝ ոչ թե նրա տարրալուծման կամ կերպարանափոխման, այլ նշանն է նրա ուժի, ամրության, ապացույցն է նրա որակական կազմի բարելավման և նրա ակտիվության բարձրացման։

ԴԻՍԿՈՒՍԻԱՅԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Յերկրորդ խնդիրը, որ ծառանում է մեր առջև, դա այն է, թե ինչու հատկապես հիմա, ներկա թվի աշնանը, կուսակցության ներքին քաղաքականության խնդիրը սուր կերպարանք ստացավ։ Ինչով պետք է բացատրել այս։ Որո՞նք են պատճառները։ Ես կարծում եմ, ընկերներ, որ այստեղ մենք յերկու պատճառ ունենք։ Առաջին պատճառը,—դա գործադուլների և խմորումների այն ալիքն է, որ անցավ մեր հանրապետությունների մի քանի շրջաններում սույն թվի օգոստոս ամսին, կապված լինելով աշխատավարձի հետ։ Բանն այն է, որ գործադուլների այդ հորձանքը մերկացրեց մեր կազմակերպությունների թերությունները, մեր մի քանի թե կուսակցական և թե խորհրդային կազմակերպությունների պոկված լինելը՝ ձեռնարկություններում կատարվող անցքերից և որ շնորհիվ այդ գործադուլների մերկացավ մեր կուսակցության մեջ գոյություն ունեցող որոշ անլեգալ և ըստ եյության՝ հակակոմունիստական կազմակերպությունների փաստը, կազմակերպությունների, որոնք աշխատում էյին քայքայել կուսակցությունը։ Յեվ անա բոլոր այդ թերությունները, որ բացվեցին գործադուլային հորձանքի շնորհիվ, այնպիսի փայլով և զգաստացնող շողով խփեցին կուսակցությանը, որ նա պահանջ զգաց կուսակցական ներքին փոփոխությունների։ Յերկրորդ պատճառը, որ սուր բնավորություն տվեց կուսակցական ներքին քաղաքականության խնդրին հատկապես հենց այդ ժամանակամիջոցին, դա այն մասսայական արձակուրդներն էյին, որ թույլ տվին մեր կուսակցական ընկերները։ Այդ արձակուրդներն, ի հարկե, շատ հասկանալի յեն, սակայն շնորհիվ նրանց մասսայական բնավորության, նրանք տվին այն արդյունքը, որ կուսակցական կյանքի ընթացքը թուլացավ հենց այն ժամանակ, յերբ գործարաններում խմորումներ էյին տեղի ունենում, որպիսի հանգամանքն զգալի կերպով դյուրացրեց կուտակված թերությունների մերկացման գործը հատկապես այդ շրջանում, ներկա թվի աշնանը։

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՆԵՐՔԻՆ ԿՅԱՆՔԻ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Յես ասացի մեր կուսակցության կյանքի թերությունների մասին,

որոնք միրկացան այս տարվա աշնանը և հարց հարուցին կուսակցական ներքին կյանքի բարեկարգման մասին։ Որոնք են ապա կուսակցական ներքին կյանքի թերությունները։ Ա՞յն է արդյոք, ինչպես կարծում են մեր ընկերներից ոմանք, թե կուսակցության գիծը սխալ է, թե՞ այն, որ կուսակցության գիծը շիտակ էր և ուղիղ, սակայն գործնականում այդ գիծը շեղվում էր շիտակից, հեղձվում՝ շնորհիվ սուբյեկտիվ և օբյեկտիվ որոշ պայմանների։

Յես կարծում եմ, որ մեր կուսակցության ներքին կյանքի հիմնական թերությունը հենց այն է, որ կուսակցության շիտակ գիծը հաստատված և արտահայտված լինելով մեր համագումարների կողմից, գործնականի վերածվելով տեղերում (ոչ ամենուրեք, այլ որոշ շրջաններում) դարձել է սխալ։ Մեր կուսակցության շիտակ պրոլետարական դեմոկրատիկ գիծը տեղերում գործնականի վերածվելով, տվել է այդ գծի բյուրոկրատիկ խեղաթյուրման փաստեր և փորձեր։

Այտեղ է հիմնական թերությունը։ Կուս. X, XI և XII համագումարների կողմից ուրվագծած հիմնական գծի և մեր կազմակերպությունների պրակտիկայի միջև գոյություն ունեցող հակասության այդ գիծը կիրառելու պահին—ահա այն հիմնականը, որ մենք նկատում ենք կուսակցական ներքին կյանքի թերությունների մեջ։

Կուսակցական գիծն ասում է, որ մեր կուսակցական պրակտիկայի կարևորագույն խնդիրները, ի բաց առյալ, իհարկե, այն խնդիրները, որոնք չեն կարող սպասել, կամ այն խնդիրները, որոնք ռազմական դիվանագիտական գաղտնիք են կազմում,—պետք է անպայման ծեծվեն կուսակցական ժողովներում։ Այսպես էր ասում կուսակցական գիծը։ Իսկ կուսակցական տեղերի պրակտիկան, գործնականը, թեև, իհարկե, ոչ ամենուր, գտնում էր, որ իսկապես բնավ հարկ և անհրաժեշտություն էլ չկա, որ կուսակցական ներքին պրակտիկայի մի շարք խնդիրները քննվեն կուսակցական ժողովներում, քանի որ կենտկոմը և այլ կազմակերպություններն իրանք կլուծեն այդ խնդիրները։

Կուսակցական գիծն ասում է, որ մեր կուսակցության պաշտոնակատար անձնավորություններն անպայման պետք է ընտրվեն որչափ որ անհաղթելի արգելքներ չկան, ինչպես, օրինակ, կուսակցական ստաժն ևայլն։ Դուք գիտեք, նահանգկոմի քարտուղարի համար, ըստ մեր կուսակցության կանոնադրության մինչհոկտեմբերյան ստաժ է հարկավոր, գավկոմի քարտուղարի համար—յեռամյա, բջիջի քարտուղարին՝ միամյա։ Սակայն կուսակցական պրակտիկան շատ անգամ գտնում էր, որ յեթե հարկավոր է ստաժ, ապա ուրեմն հարկավոր չեն իրական ընտրություններ։

Կուսակցական գիծն անհրաժեշտ է համարում կուսակցական մասսաներին միշտ իրազեկ պահել տնտեսական մարմինների, ձեռնարկությունների և տրեստների գործունեության, որովհետև մեր կուսակցական մասսաները բնականաբար բարոյական պատասխանատվություն են կրում անկուսակցական մասսաների առջև ձեռ-

նարկությունների թերության համար։ Այնուամենայնիվ, կուսակցական գործնականը, պրակտիկան համարել է, թե քանի որ կա կենտկոմ, որն և ղեկավար ցուցմունքներ է տալիս տնտեսական մարմիններին և քանի որ տնտեսական այդ մարմինները կապված են այդ հրահանգներով, ապա ուրեմն այդ հրահանգները կկիրառվեն և՛ առանց կուսակցական մասսաների ներքևից հայտաբերած հսկողության։

Կուսակցական գիծը գտնում է, որ աշխատանքի բոլոր ճյուղերի պատասխանատու աշխատավորները,—լինեն նրանք կուսակցական գործիչներ, տնտեսական գործիչներ, պրոֆեսիոնալիստներ, ռազմական աշխատակիցներ,—անկախ այն մասնագիտացումից, որպիսին նրանք ձեռք են բերում իրանց աշխատանքի բնավորությամբ, այնուամենայնիվ կապված են իրար, որովհետև նրանք բոլորն էլ միևնույն պրոլետարիատի գործի վրա յեն աշխատում, որը չի կարելի մաս-մաս անել։ Իսկ կուսակցական պրակտիկան գտնում է, որ այն չափով, ինչ չափով մասնագիտացումն գոյություն ունի, ինչ չափով որ կա աշխատանքի բաժանումն զուտ կուսակցական, տնտեսական, ռազմական և այլ աշխատանքների ասպարեզում, ապա կուսակցական գործիչը պատասխանատու չէ տնտեսվարի համար, տնտեսվարը պատասխանատու չէ կուսակցական գործչի համար և որ, ընդհանրապես, կապի թուլացումը և նույնիսկ վերացումը նրանց միջև անխուսափելի յէ։

Սրանք են, ընկերներ, այն հակասությունները, որ գոյություն ունենն մի կողմից կուսակցական գծի, որպիսին վավերացրած է մեր X—XII համագումարների մի շարք որոշումներով, և մյուս կողմից՝ մեր կուսակցական պրակտիկայի մեջ։

Յես հեռու յեմ մեր տեղային կազմակերպություններին՝ կուսակցական գիծը խեղաթյուրելու մեջ մեղադրելու մտքից, որովհետև յեթե սառը դատենք, մենք կտեսնենք, որ այստեղ ոչ այնքան մեղք կա, որքան մեր տեղային կազմակերպությունների դժբախտությունը կա։ Վո՞րն է այդ դժբախտությունը և ինչպե՞ս է յեղել, որ գործն այդպես է շուռ յեղել, յես կխոսեմ հետո, բայց յես կուզեյի արձանագրել այդ փաստը, որպեսզի բացատրեմ հակասությունը և հետո փորձեմ առաջարկել բարելավման միջոցներ։

Նմանապես հեռու յեմ յես և կենտկոմը բոլորովին անմեղ համարելու մտքից։ Նա յել ունի իր մեղքերը, ինչպես և յուրաքանչյուր՝ այլ հիմնարկություն և կազմակերպություն,—այստեղ ևս կա մեղքի և դժբախտության մասնիկը,—թեկուզ հենց այն, որ կենտկոմը ժամանակին այս կամ այն պատճառով չի մերկացրել այդ թերությունները և միջոցներ ձեռք չի առել նրանց հաղթահարման համար։

Սակայն այժմ այդ չէ խնդիրը։ Խնդիրն այժմ թերությունների պատճառների պարզաբանությունն է, որոնց մասին յես հենց նոր ասացի։ Յեվ, իրավ, որտեղից բուսեցին այդ թերությունները և ինչպես նրանց վերացնել։

ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Պատճառներից առաջինն այն ե, վոր կուսակցական մեր կազմակերպությունները դեռ չեն ազատվել ռազմական շրջանի մնացորդներից, անցած մի շրջանի, բայց մի շրջանի, վորը մեր աշխատակիցների գլուխներում կուսակցական ռազմականության հետքերը դեռ պահպանել ե։ Յես կարծում եմ, վոր այդ մնացորդների մի արտահայտությունն ե այն կարծիքը, վորով կուսակցությունը հանդես ե գալիս վոչ վորպես ինքնագործող մի որգանիզմ, վոչ վորպես պրոլետարիատի ռազմական մի մարմին, այլ վորպես հիմնարկների մի սիստեմ, վորտեղ կան պաշտոնյաներ ստորին և պաշտոնյաներ վերին։ Այս կարծիքն, ընկերներ, խորապես սխալ ե, վոր վոչ մի առնչություն չունի մարքսիզմի հետ. մի կարծիք, վոր փոխանցվել ե մեզ, վորպես մի մնացորդ այն ժամանակաշրջանից, յերբ մենք միլիտարիզացիայի եյինք յենթարկում կուսակցությունը ռազմական շրջանում, յերբ կուսակցության մասսաների ինքնագործունեության խնդիրն ակամայից գամվում եր վերջին շարքերը և յերբ ռազմական հրամանները վճռական նշանակություն ունեյին։ Յես չեմ հիշում, վոր այս տեսակետը յերբևե ամփոփված կերպով արտահայտված լինի, սակայն այս տեսակետը, կամ նրա տարրերը դեռ ևս ծանրանում են մեր աշխատանքի գլխին։ Այս տեսակետների դեմ, ընկերներ, մենք պետք ե պայքարենք բոլոր ուժով, վորովհետև նրանք են իրական այն սպառնալիքները, վոր նպաստավոր պայմաններ են ստեղծում կուսակցական մեր շիտակ գծի իրականության մեջ խեղաթյուրելու համար։

Յերկրորդ պատճառն այն ե, վոր պետական մեր ապարատը—ըստ եյության բյուրոկրատիկ ապարատը,—ճնշում ե գործադրում կուսակցության և կուսակցական աշխատավորների վրա։ 1917 թվին, յերբ մենք վերելքն եյինք բարձրանում, Հոկտեմբերի նախորեյին, մենք այնպես եյինք պատկերացնում, թե մեզ մոտ կոմմունա կլինի, թե այդ կլինի աշխատավորների մի միություն, թե հիմնարկներում բյուրոկրատիզմին մենք վերջ կտանք և թե պետությունը, յեթե վոչ մերձավոր շրջանում, ապա յերկու—յերեք վոչ յերկարատև ժամանակաշրջանից հետո մեզ կհաջողվի վերածել աշխատավորների մի ասոցիացիայի։ Իրականությունը սակայն ապացուցեց, վոր սա մի գործ ե, վորը մեզանից դեռ շատ հեռու յե և վոր պետությունը բյուրոկրատիզմից ազատագրելու և խորհրդային հասարակությունը աշխատավորական ասոցիացիայի վերածելու համար անհրաժեշտ ե ազգաբնակչության գերազանց կուլտուրականություն, անհրաժեշտ ե շրջապատի կատարելապես ապահովված խաղաղ միջավայր, վորպեսզի հարկ չլինի հսկայական զորական ուժեր պահելու, վորոնք մեծ միջոցներ և ծանրաշարժ գրասենյակներ են պահանջում և իրանց գոյությամբ իսկ արդեն իրենց կնիքն են դնում պետական բոլոր այլ հիմնարկների վրա։ Պետական մեր ապարատը բյուրոկրատիկ ե և նա դեռ յերկար ժամանակ բյուրոկրատիկ ե լինելու։ Այդ ապարատում աշխատում

են մեր կուսակցության ընկերները, և այստեղ միջավայրը—յես կասեյի՝ այդ բյուրոկրատիկ ապարատի մթնոլորտը—այնպես ե, վոր նա դյուրացնում ե մեր կուսակցական ընկերների և մեր կուսակցական կազմակերպությունների բյուրոկրատացման գործը։

Թերությունների յերրորդ պատճառն, ընկերներ, այն ե, վոր մեր վորոշ բջիջները բավարարաչափ ակտիվ ու գործոն չեն, հետամնաց են և յերբեմն կատարելապես անգրագետ են, մանավանդ ծայրամասերում։ Այդ րայոններում բջիջները սակավ ակտիվ են, քաղաքականորեն և կուլտուրապես հետամնաց են և այդ հանգամանքն, անշուշտ, նույնպես բարենպաստ հող ե ստեղծում կուսակցական գծի խեղաթյուրման համար։

Չորրորդ պատճառը—դա կուսակցականորեն պատրաստված ընկերների զգալի պակասն ե տեղերում։ Նորերս յես լսեցի Կենտկոմում Ուկրայինական մեկ կազմակերպության ներկայացուցչի զեկուցումը։ Զեկուցում եր վերին աստիճանի ընդունակ և հուսատու մի ընկեր։ Նա ասում եր, վոր 130 բջջից 80 բջջի քարտուղարները նշանակված են նահանգկոմի կողմից։ Այն նկատողությունը, թե այդ կազմակերպությունը տվյալ դեպքում սխալ ե վարվում, այդ ընկերն սկսեց հենվել այն հանգամանքին, թե բջիջներում գրագետ մարդիկ չկան, կուսակցական ստաժ նրանք չունեն և վոր բջիջներն իրանք են խնդրում, վոր իրանց քարտուղար տան և այլն։ Յես կարող եմ թույլ տալ, վոր այդ ընկերը մի 50 տոկոսով չափազանցեց, վոր այստեղ խնդիրը միմիայն այն չե, թե բջիջներում պատրաստված մարդիկ չկան, այլ և այն, վոր նահանգկոմը ըստ հին սովորության չափից վեր ե աշխատել։ Սակայն յեթե նահանգկոմը իրավացի յե 50 տոկոսով, ապա միթե պարզ չե, վոր յեթե նման բջիջներ կան Ուկրայինայում, ապա առավել ևս պիտի լինեն նրանք ծայրամասերում, վորտեղ կազմակերպությունները դեռ յերիտասարդ են, վորտեղ կուսակցական կադրերը դեռ քիչ են և գրագիտությունն ավելի պակաս ե, քան Ուկրայինայում։ Այս ևս մեկն ե այն պատճառներից, վորոնք անբարենպաստ պայմաններ են ստեղծում, վորպեսզի մեր ըստ եյության շիտակ կուսակցական գիծը խեղաթյուրվի գործնականում և իրականում։

Վերջապես, չորրորդ պատճառն այն ե, վոր մեր ինֆորմացիան չափազանց թույլ ե։ Մենք ենք ինֆորմացիա տալիս և—Կենտկոմն առաջին հերթին—գուցե և այն պատճառով, վոր նա չափազանց ծանրաբեռնված ե աշխատանքով։ Վատ են մեզ տեղեկացնում տեղերից։ Սրան վերջ պետք ե տալ։ Այս ևս լուրջ մի պատճառ ե, վոր մեզանում, կուսակցության ներքին կյանքում թերություններ են կուտակվել։

ԻՆՉՊԵՍ ՎԵՐԱՑՆԵԼ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԿՅԱՆՔԻ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինչպիսի միջոցների պետք ե դիմենք այդ թերությունները վերացնելու համար։

Առաջին մեր գործն ե—բոլոր միջոցներով և անդուլ աշխատանքով պայքար մղել մեր կուսակցության ռազմական շրջանի մնացորդների և սո-

վորքների դեմ, ինչպես և ընդդեմ այն կարծիքի, թե իբր մեր կուսակցությունը հիմնարկների մի սխեմ է և վոչ թե պրոլետարիատի ռազմական մի կազմակերպություն՝ ակտիվ մտածող, ինքնագործող, կենդանի կյանքով ապրող, հինն ավերող և նորը կերտող:

Յերկրորդն—անհրաժեշտ է բարձրացնել կուսակցական մասսաների ակտիվությունը, նրանց առջևը դնելով հետաքրքրող բոլոր հարցերը, վորչափ այդ հարցերը կարող են ազատ քննության յենթարկվել, ապահովելով կուսակցական ատյանների ամեն և բոլոր յենթադրությունների ազատ քննադատության հնարավորությունները: Վորովհետև միմիայն այս ճանապարհով է հնարավոր կուսակցական դիսցիպլինը վերածել իրապես յերկաթե դիսցիպլինի և վորովհետև լոկ այս ճանապարհով է հնարավոր բարձրացնել կուսակցական մասսաների քաղաքական, տնտեսական և կուլտուրական փորձը, և այս միջոցով միայն հնարավոր է նախապատրաստել այն պայմանները, վորոնք անհրաժեշտ են շարքին խավերից կուսակցական նոր և ակտիվ աշխատակիցներին առաջ քաշելու համար:

Յերրորդն—անհրաժեշտ է իրականում արդեն անցկացնել կուսակցական բոլոր կազմակերպությունների և պաշտոնակատար անձնավորությունների ընտրողականությունը, վորչափ վոր չկան այնպիսի անհաղթելի պայմաններ, ինչպես, օրինակ, կուսակցական ստաժը և այլն: Պրակտիկից պետք է դուրս վանել կազմակերպությանց մեծամասնության կամքի անտեսառումը՝ պատասխանատու դիրքերում ընկերների թեկնածությունները վորոշելիս պետք է այնպես անել, վոր ընտրողական սկզբունքն իրականում կիրառվի:

Չորրորդն—անհրաժեշտ է, վոր Կենտկոմին, Նահանգկոմին և Շրջկոմներին կից գոյություն ունենան բոլոր ասպարեզներում գործող պատասխանատու ընկերներից կազմված մշտական խորհրդակցություններ: Անհրաժեշտ է, վոր այդ խորհրդակցությունները կանոնավոր կերպով կազմվեն, վոր խորհրդակցություններում քննության դրվեն բոլոր այն հարցերը, վոր նա (խորհրդակցությունը) անհրաժեշտ է գտնում, վոր կապը տարբեր տեսակի գործիչների միջև չխզվի, վոր բոլոր աշխատակիցներն զգան, վոր իրանք կուսակցական միևնույն ընտանիքի անդամներն են և աշխատում են բոլորի համար միևնույն նպատակի օգտին պրոլետարիատի գործի համար, վորպիսին անմասնլի յե, և վերջապես, վոր Կենտկոմի շուրջը, ինչպես և տեղային կազմակերպությունների շուրջն ստեղծվի այնպիսի իրադրություն, վորը հնարավորություն կտա աշխատանքի բոլոր ճյուղերում գործող մեր պատասխանատու ընկերների կատարած աշխատանքի փորձին տեղյակ լինել և օգտվել այն:

Հինգերորդն—անհրաժեշտ է արտադրական մեր բջիջներին իրազեկ պահել բոլոր այն հարցերում, վորոնք կապված են ձեռնարկությունների և տրեստների գործերի ընթացքի հետ: Գործը պետք է այնպես տանել, վոր այդ բջիջներն իրազեկ լինեն մեր ձեռնարկների և միավորությունների աշխատանքներին, վոր նրանք կարող լինեն ազդեցություն ունենալ այդ աշ-

խատանքների վրա: Վորպես բջիջների ներկայացուցիչներ, դուք շատ լավ գիտեք, թե վորքան մեծ է մեր արտադրական բջիջների բարոյական պատասխանատվությունն անկուսակցական մասսաների առջև—ձեռնարկությունների տարվող աշխատանքների ընթացքի համար: Վորպեսզի բջիջը կարողանա ղեկավարել և իր հետ տանել անկուսակցական մասսաներին գործարանում, վորպեսզի նա կարողանա կրել այդ պատասխանատվությունն աշխատանքների ընթացքի համար,—իսկ այդպիսի պատասխանատվություն նա անպայմանորեն կրում է անկուսակցական մասսաների առջև,—նա պետք է իրազեկ լինի գործերի ընթացքին, նա պետք է հնարավորություն ունենա այսպես թե այնպես ազդել այդ գործերի վրա: Անհրաժեշտ է ուրեմն, վոր բջիջները զբաղվեն ձեռնարկության հետ կապված տնտեսական խնդիրների քննության մեջ, վոր ժամանակ առ ժամանակ տրեստի մեջ մտնող հիմնարկների բջիջների ներկայացուցչական կոնֆերանսներ գումարվեն՝ տրեստի գործերի հետ կապված խնդիրները քննելու նպատակով: Սա մեկն է այն շատ ճանապարհներից, վորն անհրաժեշտ է թե կուսակցական մասսաների տնտեսական փորձի հարստացման և թե կազմակերպությունը ներքևից կոնտրոլի յենթարկելու համար:

Վեցերորդն—անհրաժեշտ է վորակապես բարձրացնել մեր կուսակցական բջիջների կազմը: Ընկեր Զինովևի հոդվածում արդեն ասված էր, վոր տեղ-տեղ մեր կուսակցական բջիջները վորակապես յետ են մնացել շրջապատող անկուսակցական մասսաներից: Այդ հայտարարությունն անշուշտ չի կարելի ընդհանրացնել և տարածել բոլոր բջիջների վրա: Ավելի ճիշտ կլիներ այսպես ասել, օրինակ,—կուսակցական մեր բջիջները կուլտուրապես շատ ավելի բարձր կլինեին կանգնած, քան այժմ է անկուսակցականների շրջաններում շատ ավելի հեղինակություն կվայելեին, յեթե միայն մենք այդ բջիջներից չվերցնեինք այն մարդկանց, վորոնց հարկադրված ենք կանգնեցնել տնտեսական, վարչական, արհեստակցական և այլ տեսակի աշխատանքների: Յեթե միայն մեր բոլոր բանվոր ընկերները, կամ այն կադրերը, վոր մենք այս վեց տարվա ընթացքում խլել ենք բջիջներից, վերադառնային իրանց բջիջները, ապա միթե պետք է ապացուցել, վոր բոլոր այդ բջիջները մի քանի գլուխ բարձր կլինեին բոլոր անկուսակցական բանվորներից, թեկուզ և հենց շատ զարգացած բանվորներից:

Հենց այն պատճառով, վոր կուսակցությունն ուրիշ կադրեր չունի իր պետական ապարատը բարելավելու համար, հենց այն պատճառով, վոր կուսակցությունը հարկադրված է ապագայում էլ օգտվել այդ աղբյուրից,—հենց այդ պատճառով էլ մեր բջիջներն ապագայում էլ պետք է փոքր ինչ կաղան իրանց կուլտուրական մակարդակի տեսակետից, յեթե մենք հարվածային միջոցներ ձեռք չառնենք՝ նրանց վորակային կազմի բարելավման համար: Ամենից առաջ անհրաժեշտ է մաքսիմալ չափով ուժեղացնել բջիջներում կուսլրթական աշխատանքը: Դրանից զատ, անհրաժեշտ է հրաժարվել և այն ավելորդ ֆորմալիզմից, վորպիսին յերբեմն հանդես են բերում մեր կազմակերպությունները՝ բանվորական շարքերից կու-

սակցության մեջ նոր անդամներ ընդունելու պահին։

Յես կարծում եմ, վոր ֆորմալիզմով տարվելու կարիք չկա—կուսակցությունը կարող է և պետք է մեղմացնի բանվոր դասակարգից կուսակցության մեջ նոր անդամներ ընդունելու պայմանները։ Տեղային կազմակերպություններն արդեն սկսել են այդ գործը։ Կուսակցությունն այդ գործը պետք է վերցնի իր ձեռքը և կազմակերպված մի կամպանիա սկսի, վորպեսզի այդպիսով դյուրացնի ստանոկներից յեկած բանվորների մուտքը կուսակցության շարքերը։

Յոթներորդն—անհրաժեշտ է ուժեղացնել աշխատանքն անկուսակցական բանվոր մասսաների մեջ։ Սա ևս մի միջոց է, վոր կարող է բարելավել կուսակցական ներքին դրությունը և բարձրացնել կուսակցական մասսաների ակտիվությունը։ Յես պետք է ասեմ, վոր մեր կազմակերպությունները դեռ ևս շատ քիչ են ուշադրություն դարձնում անկուսակցական բանվորներին խորհրդային մեր մարմինները գրավելու գործի վրա։ Վերցնենք թեկուզ հենց այժմ տեղի ունեցող Մոսկվայի Խորհրդի ընտրությունները։

Յես կարծում եմ, վոր այդ ընտրությունների մեծագույն թերություններից մեկն էլ հենց այն է, վոր անկուսակցականներից շատ քիչ մարդ է անց կենում։ Ասում են, թե իբր կազմակերպության մի վորոշում կա, վորով պետք է անցկացվի այսինչ քանակությունը, կամ այսինչ %-ը անկուսակցականներից։ Բայց յես տեսնում եմ, վոր իրականում շատ ավելի քիչ է անց կենում։ Ասում են՝ իբր թե մասսաներն անպատճառ ուզում են կոմունիստներից ընտրել։

Յես այստեղ շատ եմ կանգնում, ընկերներ։

Յես կարծում եմ, վոր յեթե մենք գոնե վորոշ նվազագույն վստահություն չընծայենք անկուսակցականներին, ապա՝ ի պատասխան դրան՝ մենք կարող ենք արժանանալ ավելի խոշոր անվստահության անկուսակցականների կողմից։ Այդ վստահությունը դեպի անկուսակցականներն անպայման անհրաժեշտ է, ընկերներ։ Պետք է հարկադրել կոմունիստներին հանել իրանց թեկնածությունները. հարկավոր չէ ճառեր արտասանել այն մասին, թե պետք է ընտրել միմիայն կոմունիստներին, այլ պետք է խրախուսել անկուսակցականներին, նրանց ևս գրավել պետական աշխատանքների մեջ։

Դրա փոխարեն մենք միմիայն պլյուսներ կստանանք և ի պատասխան ձեռք կբերենք նրանց վստահությունը դեպի մեր կազմակերպությունները։

Մոսկվայի ընտրությունները—մի նմուշ են, թե ինչպես են մեր կազմակերպությունները պարփակվում իրանց կուսակցական խխունջների մեջ, փոխանակ իրանց գործունեության շրջանակներն ընդլայնելու և քայլ առ քայլ իրանց շուրջը համախմբելու անկուսակցական մասսաներին։

Ութերորդ—անհրաժեշտ է ուժեղացնել գյուղացիների մեջ տարվող աշխատանքները։ Յես չգիտեմ, թե ինչու չի կարելի, օրինակ, մեր գյուղական բջիջներին, վորոնք տեղ տեղ նվազում են, վորտեղից մարդիկ յերբեմն փախչում են, վորոնք վոչ մի վստահություն չեն վայելում գյուղա-

ցիների մեջ (այդ պետք է ընդունել),—ինչու չի կարելի, օրինակ, վոր այդ բջիջները իրանց առաջ յերկու գործնական խնդիր դնեն. առաջինը—պարզաբանողը և մեկնողը դառնան խորհրդային օրենքների, վորոնք կապված են գյուղացիական կենցաղին և յերկրորդը—ագիտատոր և տարածող դառնան յերկրագործական տարրական գիտելիքների, թեկուզ հենց այն մասին, վոր հարկավոր է ժամանակին դաշտերը վարել, սերմացուն մաքրել, զտել և այլն։

Դուք գիտեք, ընկերներ, վոր յեթե յուրաքանչյուր գյուղացին սերտ արեց վորոշ և չնչին աշխատանք թափել սերմացուն մաքրելու վրա, ապա կարելի յե առանց ջրաբաշխության և նոր մեքենաների՝ 10 անգամ շատացնել մի դեսյատինից գանձվող բերքը։ Իսկ այդ նշանակում է 10 փթի ավելացում մեկ դեսյատինից։ Այդ նշանակում է մեկ միլիարդ փթի ավելացում ընդհանուր բերքի քանակում։ Յեվ այս բոլորը կարելի յե կատարել ուղղակի խաղ ու պարով։ Յեվ ինչու չպետք է սրանով զբաղվեն մեր գյուղբջիջները։ Միթե սա պակաս կարևոր է, քան խոսակցությունները լորդ Քըրզընի քաղաքականության մասին։ Գյուղացին այն ժամանակ կհասկանար, վոր կոմունիստներն այլևս դատարկախոսությամբ չեն զբաղվում, վոր նրանք գործի վրա յեն և այն ժամանակ մեր գյուղբջիջները մեծագույն վստահությունը կվայելեյին գյուղացիների մեջ։

Յես էլ չեմ խոսում այն մասին, թե վորքան անհրաժեշտ է կուսակցական կյանքի բարելավման և կենդանացման տեսակետից կուսկրթական և լուսավորական աշխատանքի ուժեղացումն յերիտասարդության շարքերում, վոր նոր կադրեր է տալիս մեզ, կամ կարմիր բանակի, կին-պատգամավորուհիների և ընդհանրապես ամեն տեսակի անկուսակցականների մեջ։

Չեմ յերկարացնում խոսքս նաև այն մասին, թե վորքան անհրաժեշտ է ինֆորմացիայի ուժեղացումը վերից-վար և վարից-վեր։

Այս են, ընկերներ, բարելավման այն միջոցները, այն կուրսը—դեպի կուսակցական ներքին դեմոկրատիան, վորպիսի միջոցները դեռ սույն թվի սեպտեմբերից են նշված Կենտկոմի կողմից և վորպիսիք անհրաժեշտ է կիրառել վերևից մինչև ներքև։

Այժմ յես կուզեյի կանգ առնել յերկու ծայրահեղության վրա. յերկու փոքրության վրա բանվոր դեմոկրատիայի խնդիրների առիթով, վորպիսիք նշմարվեցին «Պրավդա»-յում լույս տեսած վորոշ հոդվածների մեջ։

Առաջին ծայրահեղությունը վերաբերում է ընտրողականությանը։ Դա այն է, վոր վորոշ ընկերներ աշխատում են կիրառել ընտրողականությունը «մինչև վերջը»։ Յեթե ընտրողականություն է, ապա ընտրել մինչև ծայրը։ Կուսակցական ստաժը։ Ինչի՞ յե պետք։ Ընտրիր ում վոր սիրտդ ուզում է։ Այս տեսակետը, ընկերներ, սխալ է։ Կուսակցությունն այդ կարծիքին լինել չի կարող և չի ընդունի։ Ի հարկե, այժմ մենք պատերազմներ չունենք, մենք ապրում ենք մեր խաղաղ զարգացման շրջանը։ Բայց մենք ունենք ՆԷՊ։ Յեվ այդ մի մոռացեք, ընկերներ։ Վոչ թե պատերազմի ժամանակ, այլ պատերազմից հետո յեր, վոր կուսակցությունը ձեռք զարկեց

զոման աշխատանքներին։ Ինչևէ, Վորովհետև պատերազմի ժամանակ պարտության անը միավորում և միաձուլում եր ամբողջ կուսակցությունը, և քայքայող վորոշ տարրերը կուսակցության ներսում հարկադրված եյին ընդհանուր մի գիծ առաջ տանել կուսակցության մեջ, վորը կանգնած եր կենաց և մահու խնդրի առջև։ Այժմ մենք այդ շուրջկալ յերկաթներից ազատ ենք, վորովհետև պատերազմ չկա այլևս։ Այժմ մեզանում ՆԷՊ է, մենք թույլատրել ենք կապիտալիզմը, վերածնվում է բուրժուազիան։ Ճիշտ է, այդ բոլորը տանում է մեզ դեպի կուսակցության զտումը, նրա ամրապնդումը, բայց, մյուս կողմից, մեզ պարուրում է աճող և ծավալվող բուրժուազիայի նոր մթնոլորտը, վորն այնքան ուժեղ չէ, բայց վորն արդեն կարողացել է հաղթել մեր մի քանի կոոպերատիվները և առևտրական մարմինները՝ մեր ներքին առևտրի գործում։ Հատկապես ՆԷՊ-ից հետո չէ, վոր կուսակցությունը ձեռք է զարկել զոման, հասցնելով կուսակցության զտումը մինչև նրա կազմի կեսը։ Հատկապես ՆԷՊ-ից հետո չէ, վոր կուսակցությունը վորոշել է մեր կազմակերպությունները ՆԷՊ-ի ազդեցությունից և նրա հովերից ազատելու համար դժվարացնել մուտքը կուսակցության մեջ վոչ պրոլետարական տարրերի և այդ իսկ պատճառով կուսակցական ստաժ կազմել կուսակցության պաշտոնատար անձանց համար։ Շիտակ է գործել արդյոք կուսակցությունը, ստեղծելով կանխակալ այդ միջոցները, վորով սահմանափակվում է «ծավալվող» դեմոկրատիան։ Յես կարծում եմ, վոր շիտակ է գործել։ Ահա թե ինչու յեմ կարծում յես, վոր դեմոկրատիան հարկավոր է, ընտրողականությունն անհրաժեշտ, բայց և սահմանափակող այն միջոցները, վորոնք ընդունված են XI և XII-րդ համագումարների կողմից, գոնե նրանց հիմնական միջոցները, դեռևս պետք է պահպանեն իրանց ուժը։

Յերկրորդ ծայրահեղությունը վերաբերում է դիսկուսիաների խնդրին։ Դա այն է, վոր վորոշ ընկերներ աշխատում են անսահմանափակ դիսկուսիա ունենալ, յենթադրելով, վոր կուսակցության աշխատանքների սկիզբն ու վախճանն հարցերի ու խնդրի քննության մեջ է և մոռանալով, վոր կա այդ աշխատանքների և մի ուրիշ կողմը, այն է՝ նրա գործնական կողմը, վորպիսին պահանջում է կյանքի մեջ կիրառել այդ վորոշումները։ Գոնե այդպիսի տպավորություն թողեց ինձ վրա ընկ. Ռուդզինի հոդվածը, վորն աշխատում եր հիմնավորել անսահմանափակ դիսկուսիայի սկզբունքը, հենվելով ընկ. Տրոցկու կարծիքի վրա, վորն իբր թե ասել է, թե «կուսակցու-
թյունը համախոհների կամավոր միություն է»։ Յես փնտրեցի ընկ. Տրոցկու
գործերի մեջ այդ ֆրազը և չգտա։ Յեվ հազիվ թե ընկ. Տրոցկին ասած լինի այդպիսի խոսքեր՝ վորպես ավարտված մի ֆորմուլ, կուսակցությունը բնորոշելու նպատակով, իսկ յեթե ասել է, ապա հազիվ թե այդտեղ էլ վերջակետ է դրել։ Կուսակցությունը վոչ միայն համախոհների միություն է, այլև դրանից զատ՝ համագործակիցների ռազմական մի միություն, վոր պայքարում է ընդհանուր գաղափարական հենարանի վրա (ծրագիր, գործելակերպ)։ Այդ փորձը—հենվել ընկ. Տրոցկու կարծիքի վրա, յես համա-

րում եմ սխալական, վորովհետև ընկ. Տրոցկուն յես ճանաչում եմ վորպես Կենտկոմի այն անդամներից մեկին, վորն ամենից ավելի ընդգծում է կուսակցության գործոն կողմը։ Այդ իսկ պատճառով, յես կարծում եմ, վոր ընկ. Ռուդզինի բնորոշումը պետք է թողնել նրա պատասխանատվության վրա։ Սակայն ինչ է ասում այդ բնորոշումը։ Յերկու հնարավորություններից մեկը.—կամ այն, վոր կուսակցությունը վեր է ածվում մի աղանդի, փիլիսոփայական մի դպրոցի, վորովհետև լոկ այդպիսի նեղլիկ կազմակերպություններում է հնարավոր լիակատար համախոհությունը, կամ թե, վոր նա վեր է ածվում անընդհատ դիսկուսիոն մի ակումբի, շարունակ դատող, շարունակ քննող—մինչև իսկ ֆրակցիաների բաժանվող, մինչև իսկ բեկումների հասնող։ Այդ հնարավորություններից վոչ մեկն էլ ընդունելի չէ մեր կուսակցության համար։ Ահա թե ինչու յես կարծում եմ, վոր խնդիրների քննությունն անհրաժեշտ է, դիսկուսիան պետք է, բայց անհրաժեշտ են սահմաններ այդ դիսկուսիաներին, վորոնք կարող են պաշտպանել կուսակցությունը—պրոլետարիատի այդ ռազմական զորագունդը—դիսկուսիոն ակումբի վերածվելու վտանգից։

Վերջացնելով իմ զեկուցումը, յես պետք է նախազգուշացնեմ ձեզ, ընկերներ, այդ յերկու ծայրահեղություններից։ Յես խնդրում եմ, վոր յեթե մենք հետ վանենք մեզանից այդ ծայրահեղությունները և ազնիվ ու վճռական միջոցներով վորոշենք կիրառել կյանքում այն կուրսը դեպի կուսակցական ներքին դեմոկրատիան, վորը նշված է Կենտկոմի կողմից դեռ սույն թվի սեպտեմբերից, ապա հաստատապես կարող ենք ասել, վոր մենք հաջողությունների և բարեկարգման կհասնենք կուսակցության մեր աշխատանքներում (ծափեր)։

ՌԿԿԿԿՈՄԻՏԵՅԻ ՅԵՎ ԿԵՆՏ. ՎԵՐԱՀՍԿԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ԲԱՆԱՁԵՎԸ

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(Ընդունված միաձայն Կ. Կ. Քաղաքական Բյուրոյի և Կ. Վ. Հ. Նախագահության միացյալ նիստում, դեկտ. 5 ին, ի կատարումն Կ. Կ. և Կ. Վ. Հ. հոկտեմբերյան ժողովների վճռի)

1. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՈՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

ա) Տնտեսական նոր քաղաքականությունը, ազդակ ծառայելով արտադրական ուժերի աճման, արդարացրեց իրեն իբրև անհրաժեշտ յերկարատև փոխանցման ժամանակաշրջան՝ կապիտալիզմից սոցիալիզմին գնալու ճանապարհին։ Նա նպաստեց ժողովրդական տնտեսության բարձրացմանն ընդհանուր առմամբ, ու գյուղացիական տնտեսության, պետական արդյունաբերության, պետական առևտրի ու կոոպերացիայի բարձրացմանը։ Աշխատավարձն աստիճանաբար ավելանում է, վորակյալ պրոլետարիատը վերադառնում է քաղաքները, պրոլետարական լայն մասսաների կուլտուրական մակարդակը բարձրանում է, մանավորապես կազմակերպվում է պրոլետարական գյուղացիական ինտելիգենցիա՝ շնորհիվ այն հանգամանքի, վոր բանվորներն ու գյուղացին ուսանում են կրթական բարձր հաստատություններում։

բ) Արդեն կուսակցության XII-րդ համագումարը հաստատելով յերկրի տնտեսական կյանքի աչքի ընկնող կենդանացումը, դրա հետ միաժամանակ մատնանշեց, թե անհրաժեշտ է տնտեսական զարգացման ամեն մի փոխանցման ժամանակաշրջան գնահատել սոցիալիստական շինարարության տեսակետից։

Պրոլետարիատի դիկտատուրան, վոր չի կարող զարգանալ ու ծավալվել առանց յերկրի նյութական բարեկեցության, չի կարող նույնպես յերկար գոյությունը պահպանել, յեթե բարեկեցու-

թյան այդ աճումը գերակշիռ դրության մեջ դնի մասնավոր կապիտալը պետական կապիտալի հանդեպ։

Ներկայումս յերկրի տնտեսության ապրած արտակարգ դժվարությունները արտահայտվում են ամենից առաջ նրանում, վոր մեր պետական արդյունաբերության մթերքները բավականաչափ չեն սպառվում։ Յեթե սպառումը վերջին տարում մեծ դժվարությունների յեր հանդիպում, դա բացատրվում է գլխավորապես մթերքների անսովորական բարձր ինքնարժեքով, չափազանց խոշոր առևտրական վերադիր ծախսերով, գների չափազանցված հաշվառության անթույլատրելի մեթոդներով՝ ի վնաս սպառողի։ Այդ դժվարությունների հիմքում պետական տնտեսության զանազան տարրերը չեն համակերպվում իրար միջև և շուկայի հետ, իսկ արդյունաբերական ու առևտրական ձեռնարկությունները դրված են և նրանց գործունեությունները կատարվում են վոչ ռացիոնալ կերպով, մանավորապես մեր ամենավերին բյուրոկրատական առևտրական ու կոոպերատիվ կազմակերպությունները չեն կարողանում ճանապարհ հարթել իրենց համար դեպի գյուղացիական շուկան։

Կենտրոնական խնդիրը առաջվա նման հանդիսանում է պետական արդյունաբերության կապակցությունը գյուղացիական տնտեսության հետ, այսինքն առաջին հերթին հարկավոր է կանոնավոր փոխհարաբերություններ սահմանել մեր պետական արդյունաբերության մթերքների և մեր գերազանցապես գյուղացիական շուկայի պահանջների և տարողության միջև։

Սակայն այդ խնդիրը կարող է լուծվել այն չափով, վոր չափով կանոնավոր ու սիստեմատիկ ապահովվում է պետական տնտեսության զանազան գործոնների ու տարրերի կապը իրար հետ։

Այդ ամենից կուսակցությունը՝ վերից վար՝ պետք է իր համար այն յեզրակացությունն անե, թե տնտեսական հետագա կենդանությունը, վոր ավելի կամ պակաս մոտավոր ապագայում կհաղթահարի այժմյան ճգնաժամը, սոսկ այն չափով կծառայե սոցիալիստական շինարարության գործին, վոր չափով մենք իսկապես կարողենք համաձայնեցնել պետական տնտեսության տարրերն իրանց իսկական փոխազդեցությամբ, ինչպես իրար միջև, այնպես և շուկայի հետ։

Այստեղից էլ հետևում է Պետական Պլանի—սոցիալիստական պետության տնտեսական շտաբի և տեղական բոլոր տնտեսական-

պլանային կազմակերպությունների աշխատանքի կարևորությունը։ Անհրաժեշտ է, պահպանել նրանց համար այն տեղը, վորը վերջին նախանշված է XII-րդ համագումարի բանաձևի մեջ։

Վերջին ժամանակ ֆաբրիկատների գները իջեցնելու և նրանց արտադրանության համար ձեռք առնված միջոցները արդեն վորոշ կենդանություն են մտցրել առևտրական շրջանառության մեջ ու բարձրացրել են նրանց գները։ Սակայն, սպառողի ճգնաժամի հիմնական պատճառների դեմ պայքարը պահանջում է կուսակցությունից բարդ ու սիստեմատիկ աշխատանք՝ զարգացնելու XII րդ համագումարի ցույց տված ուղիները՝ ինքնարժեքության կրճատելու, արդյունաբերական ու առևտրական ապարատը կանոնավոր կազմակերպելու, գործառնության վերին մեխանիկական մակարդակը բարձրացնելու և ի միջի այլոց գործառնական վարկն ավելացնելու միջոցով՝ նրան համաշխարհային շուկայի պայքարին համարժեքնելու վերաբերմամբ և այլն։ Այդ խնդիրները ներկայումս ծառացել են կուսակցության առաջ կապակցված գործերի, վոր կուսակցությունը համերաշխորեն ջանքեր գործ կդնի նրանց իրականացման համար։

դ) Անցողական ժամանակաշրջանի տվյալ ստադիայի օբյեկտիվ հակասությունները, վորոնք բխում են տնտեսական ամենատարբեր ձևերի միաժամանակ գոյությունից, շուկայական հարաբերությունների առկայությունից, այն հանգամանքից, վոր պետական հաստատությունները անհրաժեշտաբեն պետք է կիրառեն գործնական աշխատանքի կապիտալիստական ձևերն ու մեթոդները և վոր անհրաժեշտ է հենվել այդ աշխատանքում պրոլետարիատին սակավին սատար աշխատավորների վրա, և այլն,— այդ օբյեկտիվ հակասություններն ազդում են մի շարք բացասական տենդենցների վրա, վորոնց դեմ ուղղված պայքարը պետք է դրվի օրակարգի մեջ. Այդօրինակ տենդենցների թվումն են կուսակցության անդամների նյութական դրության խիստ տարբերությունն իրարից՝ նրանց ֆունկցիաների տարբերության հետ զուգընթաց և այսպես ասած «չափազանցությունները», բուրժուական տարրերի հետ ունեցած կապի աճումը և այդ վերջինների գաղափարական ազդեցությունը, տեսաշրջանի վարչական սեղմումը, վոր պետք է տարբերել անհրաժեշտ մասնագիտացումից և այդ հողի վրա ծագող՝ աշխատանքի զանազան ճյուղերի կոմունիստների միջև յեղած կա-

պի թուլացումը սոցիալիստական շինարարության իր ամբողջությամբ և համաշխարհային հեղափոխության հեռանկարները կորցնելու վտանգը, տնտեսական ու քաղաքականության բացասական ազդեցությունը յերկրում աշխատավորների այն մասի վրա, վորոնք ըստ իրանց գործունեության անհամեմատ մասամբ են շփված բուրժուական միջավայրի հետ, կուսակցական ապարատների բյուրոկրատիզմը և դրանից ծագող այն վտանգը, վոր կուսակցությունը կարող է կտրվել մասսաներից։

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՎՈՐ ՄԱՍՍԱՆԵՐԸ

Պրոլետարական մասսաների համակրությունը դեպի կուսակցությունն աճել է։ Դա արտահայտվում է խորհուրդների ընտրությունների, մենշևիկների և էսէռների կուսակցությունների քայքայման և անկուսակցական բանվորների շարքերը կազմակերպվելու մեջ, վորոնք ակտիվ աջակցում են կուսակցությանը։ Միևնույն ժամանակ գործոն բանվոր-կոմունիստները, վորոնք բնականաբար պետք է կապ ծառայեն կուսակցության և անկուսակցական մասսայի միջև, համարյա ամբողջովին կլանվում են վարչական ու տնտեսական աշխատանքով և այդպիսով անխուսափելիորեն կտրվում են արտադրությունից։ Այդ պատճառով տվյալ շրջանում հիմնական խնդիր է հանդիսանում կուսակցության համար գործարանային բանվորներից անդամ ընդունելու հարցը։ Կուսակցական կազմակերպությունների անելիքը կայանում է նրանում, վոր հենց այդ աշխատակիցներին նվիրեն առանձին ուշադրություն, ամեն հնարավորը անեն, վորպեսզի նրանց չկտրեն արտադրական աշխատանքից, ավելին՝ նրանց բարձրացնելու կուլտուրական մակարդակը և ամեն հնարավորություն տան նրանց՝ իրապես մասնակցելու կուսակցության բոլոր գործերին։ Կուսակցության պրոլետարական շարքերն ավելացնելու աշխատանքը մոտ ապագայում պետք է դառնա բոլոր կուսակցական կազմակերպությունների ամենահիմնական խնդիրներից մեկը։ Առանձին կազմակերպությունների նախաձեռնությունը, վորոնք արդեն սկսել են ծավալել իրանց աշխատանքն այդ ուղղությամբ, պետք է աջակցություն գտնի մեր կուսակցության բոլոր արդյունաբերական մարմինների կողմից։ Կուսակցությունը պետք է դյուրություն տա արդյունաբերական բանվորներին խմբերով մտնելու կուսակցական կազմակերպություն-

ների մեջ և թեկնածությունից անցնելու անդամության։ Հատկապես անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել պրոլետարական յերիտասարդության մեջ աշխատելու վրա։

Գյուղացիության մեջ, ուր նորից ստեղծվում են մշակ և կիսամշակ խավեր, անհրաժեշտ է ամեն կերպ բարելավել գյուղացիական բջիջների վորակը, նրանց աշխատանքը դարձնել դեպի կուլտուրական ու քաղաքական գործունեության հունը, մասնավորապես ուժեղացնել նրանց աշխատանքը հողագործական գիտելիքներ ձեռք բերելու մեջ, կոոպերացիայի և գյուղատնտեսական վարկ կազմակերպելու շրջանում, և այլն։ Ընդսմին անհրաժեշտ է ամեն կերպ աջակցել գյուղական չունևոր խավերին, և մասնակից անել մշակ տարրերին, ինչպես մեր կուսակցական կազմակերպություններին, այնպես և հողի ու անտառի աշխատավորների համառուսական միությանը։

Մինչդեռ Գերմանիայում միջին խավերն աղքատանում են, մեզ մոտ ինտելլիգենցիայի մեջ, ինչպես ընդհանուր պատճառների, այնպես էլ նրա դրության բարելավման հետ զուգընթաց, նկատվում է ընդհանուր թեքում խորհրդային իշխանության կողմը։ Առանձնապես կարևոր է բեկումը գյուղական ուսուցչության և ագրոնոմների տրամադրության մեջ, վորոնք կարող են դառնալ հիմնական շաղկապ քաղաքի ու գյուղի միջև։ Սակայն ինտելլիգենցիայի լայն խավերի դարձը խորհրդային իշխանության կողմն իր հիմքում չափազանց դրական յերևույթ լինելով հանդերձ՝ կարող է ունենալ և բացասական հետևանքներ, վորովհետև դա կոմմունիստների իդեոլոգիական շրջապատումի վտանգը մեծացնում է։ Ուստի կուսակցության գաղափարախոսական մաքրության համար մանրբուրժուական և սմենովեխյան քաշքշուկի դեմ պայքարը նույնպես կուսակցության հերթական խնդիրներից մեկն է անպայման։

3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆ

Վերջին ամիսների բացասական յերևույթներն՝ ինչպես բանվոր դասակարգի կյանքում՝ այնպես և կուսակցության ներսում, պարտադիր են դարձնում այն յեզրակացությունը, թե կուսակցության շահերը՝ ինչպես նրա հաջող պայքարի տեսակետով նոր տնտեսական քաղաքականության ազդեցությունների դեմ՝ այնպես և աշխատանքի բոլոր ճյուղերում նրա ունեցած ռազմունակության իմաստով՝ պահանջում են լրջորեն փոխել կուսակցության ուղղությունը—բանվորական

դեմոկրատիայի սկզբունքներն իրապես ու սիստեմատիքաբար կիրառելու։ Ելակետ ընդունելով այդ՝ ԿԿ և ԿՎՀ-ի միացյալ ընդհանուր ժողովը վորոշեց։

«ԿԿ և ԿՎՀ ընդհանուր ժողովը լիովին հավանություն է տալիս քաղաքական բյուրոյի ժամանակին ընդգծած ուղղությանը՝ ներկուսակցական դեմոկրատիայի նկատմամբ, նաև քաղաքական բյուրոյի առաջարկությանը՝ ուժեղացնելու պայքարն «ավելորդությունների» և տնտեսական նոր քաղաքականության՝ կուսակցության առանձին անդամների վրա ունեցած քայքայիչ ազդեցության դեմ»։

Բանվորական դեմոկրատիան նշանակում է ազատություն՝ կուսակցության բոլոր անդամների համար բացարձակ քննելու կուսակցական կյանքի կարևորագույն հարցերը, ազատորեն մտքերի փոխանակություն նրանց մասին, այլև ընտրականություն պաշտոնատար անձանց և կոլլեգիաների վարից վեր։ Սակայն, բանվորական դեմոկրատիան բնավ ազատություն չի նախատեսնում ֆրակցիոն խմբակցությունների, վորոնք ծայր աստիճան վնասակար են ղեկավար կուսակցության համար, վորովհետև միշտ սպառնում են յերկվություն ու ցրվածություն առաջացնել կառավարության և ամբողջ պետական ապարատի մեջ։

Ինքնըստինքյան պարզ է, թե կուսակցության ներսում, վոր իրանից ներկայացնում է վորոշ գաղափարի ու աշխատանքի վրա կանգնած մարդկանց հոժարակամ միացություն, անհանդուրժելի յեն այնպիսի խմբակություններ, վորոնց գաղափարական բովանդակությունն ուղղված է ընդհանուր առմամբ կուսակցության և պրոլետարիատի դիկտատուրայի դեմ (ինչպես օրինակ՝ «Րաբոչայա Պրավդան» և «Րաբոչայա Գրուպպան»)։

Միայն մշտական, կենդանի գաղափարական կյանքը կարող է պահպանել կուսակցությունն այնպես, ինչպես նա կազմվել է հեղափոխությունից առաջ ու նրա ժամանակ, մշտապես կրիտիքաբար ուսումնասիրելով իր անցյալը, ուղղելով իր սխալներն ու հավաքական ուժերով քննելով կարևոր խնդիրները։ Աշխատանքի այդ մեթոդները միայն ընդունակ են յերաշխիքներ տալու առ այն, թե պատահական տարաձայնությունները չեն փոխվի ֆրակցիոն խմբակցությունների՝ վերոհիշյալ բոլոր հետևանքներով։

Դրա առաջն առնելու համար պահանջվում է, վոր ղեկավար

կուսակցական մարմիններն ունկնդրեն լայն կուսակցական մասսաների ձայնին, չհամարեն ամեն մի քննադատություն ֆրակցիոն արտահայտություն և դրանով չմղեն բարեխիղճ ու կարգապահ կուսակցականներին դեպի մեկուսացում ու ֆրակցիականության ուղին։

Կուսակցությունը ոչ մի դեպքում չի կարելի համարել հաստատություն կամ վարչություն, բայց նա չի կարող համարվել նաև դիսկուսիոն ակումբ բոլորի ու ամեն տեսակ ուղղությունների համար։ 10-րդ համագումարը սահմանեց բոլշևիկյան դեմոկրատիայի սկզբունքները, բայց միևնույն 10-րդ համագումարը, իսկ հետո 11-րդ և 12-րդ համագումարները, մի շարք սահմանափակումներ մտցրին բոլշևիկյան դեմոկրատիայի սկզբունքները գործադրելու գործում.— Ֆրակցիաներ չպետք է լինեն (տես 10-րդ համագումարի բանաձևը «Կուսակցության միության մասին» և 11-րդ համագումարի համապատասխան բանաձևը), կուսակցությունը պետք է զտել, պետք է սահմանափակել ոչ պրոլետար տարրերի ընդունելությունը կուսակցության մեջ, կուսակցության պաշտոնատար անձերի մի շարք կատեգորիաների համար կուսակցական ստաժ պետք է սահմանել, քարտուղարներին հաստատելու յե բարձր կուսակցական կազմակերպությունը (տես կուսակցության կանոնադրությունը)։ Անխուսափելի համարելով պահպանել և այսուհետև տնտեսական նոր քաղաքականության պայմաններում այդ սահմանափակումները, ընդսմին անհրաժեշտ է արդեն ուժեղացած, մանավանդ ստորին կազմակերպությունների, փորձառության հիման վրա ստուգել այդ սահմանափակումներից մի քանիսի նպատակահարմարությունը, օր՝ նաև՝ քարտուղարներին հաստատելու կուսակցական բարձր ինստանցիաների իրավունքը։ Համենայն դեպս չի կարելի թույլ տալ քարտուղարներին հաստատելու իրավունքը վերածել իրապես նրանց նշանակելու իրավունքի։

4. ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԱ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՁԵՌՔ ԱՌՆԵԼԻՔ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Կուսակցական ուղեգիծն աղավաղելու դեմ պայքարելու նպատակով իրապես բանվորական դեմոկրատիա կազմելու և կուսակցության անդամների ամբողջ զանգվածին կուսակցական ամբողջ քաղաքականության ուղղության վրա սիստեմատիկ կերպով ազդելու հնարավորությունն ապահովելու համար, անհրաժեշտ է ամենից առաջ կիրառել հետևյալ միջոցները։

ա) Հսկել պաշտոնատար անձերի խիստ ընտրություն կատարելու վրա՝ այն սահմանափակումներով, որոնք մատնանշված են վերև. անթույլատրելի համարել այդ անձերին զոռով ուրիշների վզին կապելը կազմակերպության կամքի հակառակ. մասնավորապես ուշադրությամբ հետևել բջիջների քարտուղարների ընտրություն կատարելուն։

բ) Կուսակցական քաղաքականության բոլոր հիմնական հարցերն անպայման ներկայացնել բջիջների և կուսակցական զանգվածի ամբողջության քննությանը, եթե այդ բանին արգելք չեն լինում որևէ բացառիկ հանգամանքներ. ընդարձակել կուսակցական՝ մտքեր փոխանակելու՝ ակումբների ցանցը. «կուսակցական դիսցիպլինայի» անհիշտ ցուցումների չդիմել, երբ հարցը վերաբերում է կուսակցության անդամների իրավունքին և պարտականություններին, իրանց հետաքրքրող հարցերը քննելու և վճիռներ կայացնելու։

գ) Ուշադրություն դարձնել ստորևից, առաջին հերթին բանվորներից, նոր աշխատավորներ առաջ բերելու խնդրի վրա։

դ) Առանձին ուշադրություն դարձնել կուսակցական զանգվածի հետ անմիջորեն շփվող ընկերների կողմից կուսակցական ուղիղ քաղաքականության յուրացման վրա։

ե) Գործնական դարձնել կուսկազմակերպությունների պարտադիր հաշվետվությունն իրանց ընտրող կոլեկտիվներին և կուսակցական լայն զանգվածին։

զ) Ուժեղացնել կուսակցական դաստիարակչական աշխատանքը՝ ամեն կերպ խուսափելով պաշտոնական ձևերից՝ ինչպես կուսակցական ամբողջ զանգվածի մեջ, այնպես էլ առանձնապես կոմսոմոլիստների և կանանց մեջ։

է) Ուշադրություն դարձնել աշխատանքի տարբեր ճյուղերի աշխատավորների փորձառությունն իրար մեջ փոխանակելու վրա. պարտադիր է կազմակերպել, ինչպես ԿԿ-ում, այնպես էլ շրջկոմներում, նահկոմներում և գավկոմներում աշխատանքի բոլոր ճյուղերի պատասխանատու աշխատակիցների պարբերական խորհրդակցություններ։

ը) Կուսակցության անդամների ինֆորմացիան ուժեղացնել ժամանակին և ԿԿ-ի, ԿՎՀ-ի, շրջանային և նահանգական կոմիտեների

անդամների և կոմիսարիատների կոլեգիաների անդամների և ու-
րիշների՝ տեղերը շրջելու միջոցով։

թ) Ուժեղացնել կուսակցական կյանքի բաժինները պարբերա-
կան մամուլում։

ժ) Մերձակա կուսակցական համագումարին առաջարկություն
անել՝ նահանգային և ընդհանուր կուսակցականների կոնֆերեն-
ցիա գումարել տարին յերկու անգամ։

Վորպեսզի ապահովենք վերը նշած բոլոր միջոցների իրական
կիրառումը բանվորական դեմոկրատիա ստեղծելու համար, անհրա-
ժեշտ է խոսքից գործի անցնել՝ առաջարկելով ստորին բջիջներին,
գավառային, շրջանային և նահանգային կուսկոնֆերենցիաներին
հերթական ընտրությունների ժամանակ սիստեմատիկ կերպով նո-
րոգել կուսակցական ապարատը վերից, պատասխանատու պաշ-
տոնների վրա դնելով այնպիսի աշխատակիցների, վորոնք ընդու-
նակ են իրապես ապահովելու ներկուսակցական դեմոկրատիան։

5. ՎԵՐԱՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ա. Կուսակցության առաջ արդեն դրված է մեր պետական
ապարատը լավացնելու կարևորագույն հարցը։ Այդ աշխատանքը
մեծ ժամանակ է պահանջում, վորպեսզի կարողանա տալ իրական
և զգալի հետևանքներ։ Պետական ապարատը լավացնելու և զտելու
գործում վերաստուգիչ հանձնաժողովների և ԲԳՏ-թյան աշխատանք-
ների աջողության հիմնական պայմանն այն է, վոր այդ աշխա-
տանքներին նպաստեն ամբողջ կուսակցությունն ու նրա կազմա-
կերպությունները և այդ աշխատանքին լծեն հենց աշխատավոր
զանգվածներին։ Անհրաժեշտ է ավելի սերտ կապ վերաստուգիչ հանձ-
նաժողովների և համապատասխան կոմկուսների միջև և վերաստու-
գիչ հանձնաժողովների ու ԲԳՏ-թյան գործունեության ավելի
գործոն արտաբերում կուսակցության և աշխատավոր զանգվածների
հասարակական կարծիքի ասպարեզը։

բ. Վերջին ամիսների փորձը ցույց է տվել, վոր բացի կենտ-
րոնական Վերաստուգիչ Հանձնաժողովից, պետական ապարատի հար-
ցերով պետք է զբաղվեն նաև տեղերի, նահանգների և շրջանների
վերաստուգիչ հանձնաժողովները, և այդպիսով տեղական վերաստու-
գիչ հանձնաժողովների ֆունկցիաների ընդլայնումի հարցը պետք
է օրակարգի մեջ դրվի։

գ. Իբրև պետական ապարատն ուսումնասիրելու և բարելա-
վելու գործին աշխատավորներին մասնակից անելու ձևեր կարող են
լինել ձեռնարկությունների և պետական հաստատությունների նը-
պաստիչ բջիջները, վորոնք կազմակերպում են վերաստուգիչ հանձ-
նաժողովն ու Բանվորա-Գյուղացիական Տեսչությունն արհմիու-
թյունների հետ միասին։ Ձեռնարկությունների կուսակցական բը-
ջիջները պետք է սերտորեն կապված լինեն ԲԳՏ նպաստիչ բջիջ-
ների հետ և ղեկավարեն նրանց աշխատանքը ֆաբզավկոմների միջոցով։

դ. Վերաստուգիչ հանձնաժողովների առանձնապես կա-
րևոր անելիքն է ներկայումս կուսակցական ապարատի
և կուսակցական պրակտիկայի բյուրոկրատական խեղա-
թյուրումների դեմ պայքարելը և պատասխանատվության յեն-
թարկել կուսակցության այն պաշտոնատար անձերին, վորոնք խա-
չընդոտ են հանդիսանում իրագործելու բանվորական դեմոկրա-
տիայի սկզբունքը կուսակցական կազմակերպությունների գործու-
նեության մեջ (ժողովներում արտահայտվելու ազատության ճըն-
շում, կանոնագրքով չնախատեսված ընտրողական սահմանափա-
կումներ և այլն)։

ե. Ներկա պայմաններում առանձին նշանակություն ունի վե-
րաստուգիչ հանձնաժողովների պայքարը պետական ապարատի և
նրա զատ-զատ ղեկավարների կողմից թույլատրվող, այսպես կոչ-
վող «ավելորդությունների» դեմ։ Նման բացասական կողմերի այ-
լասեռող ազդեցությունը մեր կուսակցության անդամների վրա և
մասնավորապես առանձին-առանձին պատասխանատու աշխատակից-
ների վրա մեր ամբողջ կուսակցության կողմից պետք է վճռական
դիմադրության հանդիպի։

զ. Անհրաժեշտ է ստուգել կուսակցական ծայրահեղ ռեպրեսիա-
ների (կուսակցությունից հեռացնելու) կիրառումները։ Դազգահի
վրա բանող արտադրիչ բանվորների վերաբերմամբ, պետք է ի
հայտ բերել առավելագույն ուշադրություն և ծայրահեղ միջոցները
(կուսակցությունից հեռացնելը) պետք է այստեղ կիրառվեն սակ
հիրավի անհրաժեշտ դեպքերում, այսինքն, յերբ կուսակցական
ներգործության մյուս միջոցները սպառված են։

Վերջապես անհրաժեշտ է, վոր առաջները կուսակցությունից
վտարվածները, մանավանդ արտադրիչ բանվորներն ընկերական
վերաբերմունքի հանդիպեն, յերբ դիմում են կուսակցության մեջ

կրկին ընդունվելու համար և յերբ դրա հետ հիմք կա հուսալու, վոր նրանք ճշտիվ կկատարեն կուսակցական պահանջները։

6. ԿՈՒՍԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՏՆՏԵՍԱՇԽԱՏԱՆՔ

Մեր մեծագույն և անգնահատելի առավելությունն է այն իրողությունը, վոր մեր կուսակցության շարքերում մենք ունենք տնտեսական աշխատանքի բոլոր ճյուղերի մասնագետներ, սկսած գործարանի վրա աշխատող պրոլետարից և վերջացրած նրա առավել պատասխանատու ղեկավարներով։ Այս բոլոր գործավորները պարտավոր են՝ և գործի ուղիղ հիմքի վրա դնելու կարող են՝ իրանց արտակարգ բազմակողմանի կոլեկտիվ տնտեսական փորձառությունը մուծել տնտեսական աշխատանքի իրական կուսակցական ղեկավարության մշակման գործի մեջ։ Անհրաժեշտ է տնտեսավարների իրենց աշխատանքի ընթացքում ապահովել բավականաչափ ինքնաքննադատություն և կուսակցության լիակատար պաշտպանություն։ Կուսակցական սիստեմատիկ ղեկավարությունը բնավ չպիտի թուլացնի նրանց պատասխանատվությունը և [illegible] նրանց կապը քաշել։

Այս նպատակներով անհրաժեշտ է, վոր կոմբջիջները մոտենան արտադրությանը. կոմունիստ-տնտեսավարների հաշվետվությունները ու ինֆորմացիաները պետք է կանոնավոր պարբերական դառնան. զեկուցումները պետք է լավ նյութի քննության յենթարկվեն. անհրաժեշտ է տնտեսական միավորում (որինակ՝ տրեստի) մեջ գտնվող ձեռնարկությունների բջիջների և կուսակցական [illegible] կոնֆերենցիաների կոմունիստների սիստեմատիկ խորհրդակցություններ կազմակերպել, բջիջների ներկայացուցիչները պարտավոր են զեկուցումներ անել իրանց բջիջներում այդ կոնֆերենցիաների մասին։ Անհրաժեշտ է շատ ավելի սիստեմատիկորեն ընդհանրացնել առանձին բջիջների փորձն ու ցուցումները։

7. ԱՇԽԱՏԱՆՔԸ ՋԱՆԳՎԱԾՆԵՐՈՒՄ ՅԵՎ ՋԱՆԳՎԱԾՆԵՐԻՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԼԾԵԼԸ

Ջանգվածներին գործնական շինարարության լծելու աշխատանքը պետք է ուժեղացվի հենց պետական ապարատը մասսաներից կտրվելու վտանգի պատճառով։ Ուստի հաշվետվությունն

ու ինֆորմացիան տնտեսավարների կողմից պետք է կիրառվեն նաև ջանգվածների վերաբերմամբ (բանվորների պատգամավորների և ընդհանուր ժողովներ, ֆաբզավկոմներ, ակուսակցական բանվորների և գյուղացիական կոնֆերենցիաներ և այլն)։

Առանձին ուշադրություն պետք է դարձնել նաև, վոր արհմիությունները մոտենան արտադրությանը։ Անհրաժեշտ է ուժեղացնել արհմիությունների ազդեցությունը տնտեսական պաշտոնների համար նոր մարդիկ ընտրելու և առաջ քաշելու գործում, տնտեսորգանների աշխատանքների վերահսկողության գործում ([illegible] հարցին նշանակություն ունի նաև աշխատավարձի ժամանակին վճարելու, նաև համապատասխան ձևի [illegible] վերահսկողությունը), արհմիությունները պետք է գումարեն [illegible] (տրեստների) արտադրական կոնֆերենցիաներ՝ ֆաբզավկոմների ներկայացուցիչների և ձեռնարկությունների ղեկավարների մասնակցությամբ. արհմիությունները պետք է իրանց աշխատանքի [illegible] արհեստակցական մասում, վորը պետք է բարելավել և ամրապնդել։

Ամեն միջոցով պետք է ուժեղացնել բանվորական թղթակիցների ինստիտուտը, թղթակիցների, վորոնց անհրաժեշտ է խնամքով պաշտպանել ամեն մի կողմնակալությունից և բյուրոկրատիզմից։ Կուսակցական և խորհրդային մամուլին պետք է պարտավորեցնել [illegible] ուշադիր ականջ դնելու մասսայի կողմից յեկող պահանջներին ու առաջարկներին։

Բանվորական և գյուղացիական խորհուրդների ընտրություններին պետք է ուշադրություն դարձնել նոր մարդիկ առաջ քաշելու վրա, կուսակցականների հետ միասին ընտրել անկուսակցական [illegible] գործի աշխատանքի մեջ բանիմաց բանվորների, [illegible] բանվորների և գյուղացիների (քաղխորհրդի անդամների աշխատանք, [illegible] ԲԳՏ ներկայացուցիչներով Գործկոմների ու բաժանմունքների և այլն) նպաստել [illegible] խորհրդակցության։

Անկուսակցական լայն կոնֆերենցիաների գործադրությունը պետք է ուժեղացնել. ամեն տեսակ կամավոր ինքնագործուն միությունների — կուլտուր-լուսավորչական, մարզանքային և այլ — [illegible], վորոնք անմիջորեն [illegible] նպաստել, մանավանդ այնպիսիներին, [illegible] ընտանեկան-հասարակական շրջապատում են՝ բանվորական [illegible] կենցաղը՝ ապահովելով նրանց ուղիղ զարգացումը կարելիությունը։

Անհրաժեշտ է լայնորեն սփռել բջիջներում բաց ժողովների [illegible]. Անհրաժեշտ է լայնորեն բաց ժողովների հիման վրա ջոկել մեր գործադրությունը և այդ բաց ժողովների հիման վրա [illegible] գործոն ոգնականների կազմ։ կուսակցության անկուսակցական գործոն ոգնականների կազմ։

ԲԱՆԱՁԵՎԵՐԻ ՊՐՈՅԵԿՏՆԵՐ

I) ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ։

Ա) ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ

(Բանվորական դեմոկրատիա ևայլն)։

(ՌԿԿԿ-ի թեզիսների պրոեկտ)։

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԱԽԱԲԱՆ

1. Հեղափոխական մարքսիզմի կուսակցությունը արմատապես ժխտում է հեղափոխական պրոցեսի կուսակցական կազմակերպության, այլև նրա աշխատանքի մեթոդների՝ հեղափոխական պրոցեսի բոլոր աստիճանների համար պիտանի, բացարձակապես ուղիղ ձևի վորոնումները։ Ընդհակառակն, աշխատանքի կազմակերպումը և մեթոդների ձևն ամբողջապես վորոշվում է տվյալ կոնկրետ պատմական հանգամանքի առանձնահատկություններով և այն խնդիրներով, վորոնք անմիջապես բղխում են այդ հանգամանքից։

2. Այս տեսակետից հասկանալի յէ, վոր աշխատանքի ամեն մի կազմակերպչական ձևը և համապատասխան մեթոդները հեղափոխության զարգացման օբյեկտիվ պայմանների փոխվելովը, կուսակցական կազմակերպության զարգացման ձևերից կարող են այդ զարգացման համար շղթաների վերածվել, և ընդհակառակն, անպետք դարձած կազմակերպչական ձևը կարող է նորից դառնալ անհրաժեշտ և միակ նպատակահարմարը համապատասխան օբյեկտիվ պայմանների վերածնության դեպքում.

3. Մի կողմից նոր ստեղծվող դրության պահանջների, և մյուս կողմից կազմակերպության և նրա աշխատանքի մեթոդների հաստատված ձևի միջև հակասությունն ընդհանրապես նկատվում է ավելի վաղ, քան վերջնականապես կճանաչվի կուրսի փոփոխության անհրաժեշտությունը։ Այս կուրսը պետք է փոխվի այն ժամանակ միայն, յերբ ընդհանուր առմամբ իրագործված է այն խնդրի գլխավորը և հիմնականը, վոր առաջադրել է կազմակերպու-

թյան նախորդ տիպը և նրա համապատասխան աշխատանքի մեթոդը։

4. Չի կարելի մեքենայորեն փոխադրել այս կամ այն պատմական մոմենտում կիրառվող՝ կուսակցական կազմակերպության աշխատանքի ձևերն ու մեթոդներն ուրիշ կազմակերպությունների, օրինակ—խորհուրդների, կամ վարչական, տնտեսական բնույթ ունեցող օրգանների։ Այդպիսի փոխադրությունը հեն-ված կլինի բանվոր դասակարգի (կուսակցության) առաջապահի կազմակերպության և ուրիշ կազմակերպությունների մեջ տարբերության, դասակարգերի միջև աշխատավորների տարբեր խմբակցությունների միջև այդ խմբակցությունների առաջադրած տարբեր խնդիրների և այլ տարբերության լիակատար մոռացման վրա։

II. ՌԱԶՄԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ ՅԵՎ ՄԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

5. Հեղափոխության զարգացմամբ նախընթաց ժամանակաշրջանը բնույթագծվում էր համաշխարհային զինված իմպերիալիզմի հարձակումով Խորհրդային Հանրապետության վրա, անողոք պայքարով ճակատներում, ամենից առաջ արտաքին ճակատներում, յերբ սպառնալիքի տակ էր գտնվում հենց ինքը հանրապետության գոյությունը և յերբ հանրապետությունը պետք է թշնամիների հարձակումը հետ մղելով ապահովեր իր համար տնտեսական բնույթ ունեցող հիմնական կենսական աղբյուրները — ածուխ, նաֆթ, հացաբեր տերիտորիաներ ևայլն։

6. Ուստի անմիջական, հիմնական, հարվածային խնդիրն է յեղել ռազմա-մարտական գործողության խնդիրը։ Այդ խնդրի առաջ պետք է տեղի տային մնացած բոլոր խնդիրները, ի միջի այլոց նաև կուսակցության դաստիարակչական խնդիրը։ Ամբողջ հանրապետությունը վերածվել էր զինված բանակի, և պրոլետարիատի կուսակցությունը պետք է հարմարվեր հիմնական խնդրին, վորպեսզի ի վիճակի լիներ լուծելու այն։

7. Ուստի կուսակցության կազմակերպչական ձևն այդ ժամանակաշրջանում պետք է լիներ կուսակցական կազմակերպության միլիտարիզացիան։ Ինչպես վոր պրոլետարական դիկտատուրայի ձևը ձեռք էր բերել ռազմա-մարտական դիկտատուրայի բնույթ, այնպես էլ կուսակցական կազմակերպության ձևն ընդունեց — և

պետք է ընդունել հեղափոխական նպատակահարմարության տեսակետից — այդպիսի պարագաներում համապատասխան բնույթ։ Դա արտահայտվեց ընդհանուր և ամբողջական առմամբ կուսակցական կազմակերպության ծայրահեղ կազմակերպչական կենտրոնականացումով և կոլլեկտիվ մարմինների դերով։

8. Կուսակցական աշխատանքի մեջ դերը նույնպես բղխում էին մարտական գործողությունների անհրաժեշտությունից և համապատասխանում էին կազմակերպչական ձևերին։ Նրանք ընդհանուր և ամբողջական առմամբ հանգում էին դեպի մարտական հրամանների սիստեմը, որ տալիս էին ղեկավար կուսակցական հիմնարկությունները և որ անպայման իրագործում էին առանց քննադատության կուսակցության շարքային անդամները։ Տիպիք աշխատանքներ էին անընդմիջվող մոբիլիզացիաները, ամենից առաջ ռազմական ճակատ, և այդ հիմնական տեսանկյունից՝ կուսակցական ուժերի վերաբաշխումը։

9. Կուսակցության այդպիսի սարքավորության շնորհիվ միայն աջողվեց հաղթահարել հակառակորդների դիմադրությունը, հաղթական դուրս գալ պայքարից։ Ռազմական ժամանակաշրջանի համար այդ սարքավորման ձևը նպատակահարմար էր։

III. ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

10. Այդ ժամանակաշրջանի հիմնական հակասությունն այն հանգամանքն էր, որ կուսակցության քանակական արագ աճման հետ՝ աշխատանքի բնույթը խանգարում էր կուսակցության անդամների առաջ դրված կոմունիստական դաստիարակությանը, մանավանդ՝ նոր մտնող անդամների։ Միևնույն ժամանակ կուսակցության համարյա բոլոր անդամների մոբիլիզացիայի միջոցով գործուն աշխատանքի մեջ մտնելն արագորեն առեղծեց նույնիսկ նրանց ամենահետամնաց խավերի մեջ ինքնագործունեության և կուսակցական կյանքի հարցերի գործուն լուծումների պահանջ, որ հակասություն դարձավ կուսակցական կազմակերպությունների պրակտիկայի մեջ մտած գործած մարտական հրամանների սիստեմի և ծայրահեղ ցենտրալիզմի դեմ։

11. Պատերազմի վրա կատարված ահագին նյութական ծախսերը և դրանց հետևանքը յեղող յերկրի միությունն՝ առանձնապես

հարվածային վարչությունների և աշխատավորների (դրանց թվում նաև կուսակցական աշխատավորների) խմբակների պահպանումի անհրաժեշտության զարգացումի հետ զուգահեռաբար էին ընթանում։

Այդպիսով դրա անխուսափելի — բավականաչափ հասարակայնորեն անհրաժեշտ — հետևանքն էր կուսակցության անդամների նյութական անհավասարության աճումն ընդհանուր աղքատացումի հետ միասին։

12. Հին դասակարգային խմբավորումների քայքայումը (մանավանդ ինտելիգենցիայի քայքայումը), այլև սոցիալիստական ընդդիմադիր կուսակցությունների (մենշևիկների, էսէռների) քայքայումը այդ տարրերին մեր կուսակցության շարքերը մտնելու հնարք ստեղծեց, և այդ ժամանակ այդ խմբավորումներն՝ իրանց նախկին աշխատանքի փորձով արդեն ուժեղացած, — կուսակցության անդամների համար զանգվածի մեջ կատարվող դաստիարակչական աշխատանքի համեմատական կրճատումի և գործուն ու փորձված աշխատակիցներ ծայրահեղ կարիքի պայմաններում — կարող էին արագորեն առաջ ընթանալ հերարխիական, խորհրդային, ռազմական, պրոֆեսիոնալ և կուսակցական սանդուղքով։

13. Այս, այդ նույն աղքատացումի ժամանակ, զանգվածների խիստ հետամնաց կուլտուրական մակարդակի բացառում կազմակերպված վերին աստիճանի կենտրոնականացած ապարատի ուպահանջները բերին հասցրին բյուրոկրատական ապարատի ուռեցմանը և նրա առանձնացումի տենդենցիա ստեղծեցին։

14. Այդպիսով պատերազմական ժամանակաշրջանն ստեղծեց մի կողմից ընդհանուր առմամբ նպատակահարմար կազմակերպություն, իսկ մյուս կողմից հենց ինքը ծնեց հակասությունների մի շարք։ Բայց, որովհետև այդ հակասություններն առաջ էին գալիս քայքայման հիմունքի վրա և կազմակերպչական ուժերի պակասությունից, ուստի ցենտրալիզացիան ստեղծում էր տենդենցիա, որ նա փոխարկվի բյուրոկրատիզացիայի և կտրվի զանգվածներից, ռազմական հրամանների սիստեմն ընդունում էր հաճախ անկարևոր ճնշում մի ապարատված ձևեր, անհրաժեշտ արտանությունները իբրև հող էին ծառայում զանազան տեսակ չարաշահությունների համար. կուսակցական օրգանների անհրաժեշտ ուղեդարձը (свертывание) տանում էր դեպի կուսակցության հո-

գեր կյանքի թուլացումը և այլն, վոր ընդհանուր առմամբ հասցրեց կուսակցական ներքին ճգնաժամին։

IV. ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ, ՆՐԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՅԵՎ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

15. Ընթացիկ մոմենտը բնութագծվում է ամենից առաջ ռազմական ճակատների համարյա լիակատար լիկվիդացիայով։ Մյուս կողմից նա բնութագծվում է ներքին հակասականությունների ծայրահեղ սրվածությամբ յերկրի մեջ, հակասություններ, վոր ուժեղացնում և սրում են պրոլետարիատի բոլոր թշնամիները—տնտեսական ճգնաժամը, պրոլետարիատի և գյուղացիության միջև ուժերի անբարենպաստ փոխհարաբերությունը, պրոլետարական զանգվածների հոգնածությունը և պատերազմական ժամանակաշրջանի ամբողջ հակասությունների յերևան գալը, վորոնք անխուսափելիորեն պիտի արտահայտվեյին, հենց վոր թուլացավ զինվորական առանձնահատուկ դիսցիպլինի կեղևը։ Այս բոլոր յերևույթներն անդրադառնում են կուսակցության մեջ իբրև մի շարք ընդհարումներ, թշնամական տարբեր խմբավորումներ են առաջ գալիս և կուսակցական սեղմվածությունն ընկնում է և այլն։ Այդպիսով ընթացիկ պահն ինքն է կրում հակասական բնույթ, վորքան վոր խաղաղ գոյության անցնելը միևնույն ժամանակ՝ տվյալ պատմական պայմաններում՝ տանում է դեպի պայքարի նոր ձևեր ներքին ճակատում։

16. Յեթե անցյալ ժամանակաշրջանում կուսակցությունը պետք է գլուխ հաներ անմիջական մարտական խնդիրներում ի հաշիվ կրթական խնդիրների, այժմ կուսակցության անդամների ամբողջ կի բարձրացումը՝ համայնքի կցական կյանքում զարթուն մասնակցության հիման վրա եւս ակտիվ դառնում կենտրոնական խնդիր և դառնում։

Անհրաժեշտ է, ավելի քան յերբևիցե, կուսակցության բացարձակ միությունը. դրա համար պետք է հասնել նոր հիմունքով, կուսակցության անդամների բարձրացած մակարդակի հիմունքով, ինչքան էլ վոր դժվար լինի այդ բարձրացումը, կուսակցության բոլոր անդամներին նրա գործուն կյանքին մասնակից անելու հիմունքով, կուսակցության անդամների բազմահարուստ փորձերի համապատասխանման հիմունքով, այն անդամների,

վորոնք պատերազմական ժամանակաշրջանում աշխատել են զանազան ասպարեզներում։ Մեզ հարկավոր է նոր նորից համախմբ-կազմել կուսակցությունը, վոր պատերազմի ժամանակաշրջանում առանձին-առանձին մասերի յեր բաժանվել։ Մեզ հարկավոր է մոտեցնել «վերևերն» ու «վարերը», զինվորական ու քաղաքացիական աշխատավորներին, պրոֆեսիոնալիստներին ու խորհրդայիններին, կուսակցության հին և նոր անդամներին, «ջահելներին» ու «ծերերին»։ Առանց այդ հիմնական խնդիրը լուծելու չի կարող կատարվել պրոլետարական առաջապահի հրակայական շինարարա-տնտեսական դերը։

17. Այդ խնդիրը չի կարելի լուծել կազմակերպչական հին ձևը պահպանելով։ Մոմենտի հերթական պայմանները պահանջում են կազմակերպչական նոր կերպ։ Այդ ձևը բանվորական դեմոկրատիայի ձևն է։ Դեպի բանվորական դեմոկրատիան ուղղելու կուրսը պետք է վերցնել նույնպիսի վճռականությամբ և նույնպիսի կորովով կիրառել, ինչպես անցյալ ժամանակաշրջանում կիրառվել է կուրսը դեպի կուսակցության միլիտարիզացիան, վորքան վոր դա չի հանդիպում խոչընդոտների՝ հակահեղափոխության ուժերի դեմ մղվող անմիջական պայքարի պահանջներում։

18. Բանվորական ներկուսակցական դեմոկրատիա ասելով հասկացվում է կազմակերպչական այնպիսի ձև, վորն ապահովում է կուսակցության բոլոր անդամներին՝ մինչև ամենահետամնացները՝ կուսակցության կյանքի մեջ, նրա առաջ դրված բոլոր հարցերի քննության մեջ, այդ հարցերի լուծման մեջ գործոն մասնակցություն, վորպես նաև գործոն մասնակցություն կուսակցական շինարարության մեջ։ Բանվորական դեմոկրատիայի ձևը բացառում է ամեն մի նշանակովիություն՝ վորպես սիստեմ, այլ իր արտահայտությունը գտնում է բոլոր հիմնարկների լայն ընտրովիության մեջ վարից-վեր, նրանց հաշվետվության և վերահսկողության յենթակա լինելու մեջ և այլն։

19. Աշխատանքի մեթոդներ են հանդիսանում ամենից առաջ բոլոր կարևորագույն հարցերի լայն քննության մեթոդները, այդ հարցերի վերաբերյալ դիսկուսիաները՝ ներկուսակցական քննադատության լիակատար ազատությամբ, համակուսակցական

ցական վորոշումների կոլեկտիվ մշակումի մեթոդները, քանի դեռ այդ պահանջների վերաբերմամբ կուսակցական ընդհանուր—պարտադիր վորոշումներ չեն կայացված։ Այդ մեթոդները ներկայումս նույնպիսի անհրաժեշտ բնույթ և նույնպիսի կարևորություն են ստանում, վորպես և մարտական հրամանների և քաղաքացիական կռվի սրվելու շրջանում նրանց անպայման իրագործումի մեթոդները։ Ինքնըստինքյան հասկանալի է, վոր վորոշում անելուց հետո այդ վորոշումները պարտադիր են և պետք է իրագործվեն մաքսիմալ կերպով արագ և կետառկետ։ Ճիշտ այդպես էլ ինքնըստինքյան հասկանալի է, վոր կուսակցությունը պետք է օժտված լինի բավականաչափ ճկունությամբ, վորպեսզի անհրաժեշտության դեպքում արագ կերպով անցնի ռազմական հրամանների սիստեմին։

20. Այսպիսով ավելի ընդհանուր ներկուսակցական խնդիր է հանդիսանում վոչ թե կուսակցական շարքերի քանակական ընդլայնումը, այլ նրանց վորակական բարելավումը, կուսակցության բոլոր անդամների գիտակցության, կոմմունիստական դաստիարակության, գործունեության, ինքնագործունեության և նախաձեռնության բարձրացման խնդիրը, այն այս հիմունքով դեպի բոլոր կուսակցական շարքերի բացարձակ միությունը յեղած ձըգտումը։

V. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՁԵՌՔ ԱՌՆՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՋՈՑՆԵՐ

21. Շնորհիվ այն բանի, վոր կուսակցության մեջ մուտք է գործել մանր—բուրժուական և կոմմունիստական վոգով չմշակված, սպեցիֆիկ ինտելիգենտական տարրերի մի մաս, շնորհիվ այն բանի, վոր կոմմունիստ-բանվորների ահագին մասը համարյա ամբողջապես կլանվում է խորհրդային ծավալվող շինարարության պահանջներով և հարկադրված է խոշոր չափով ֆաբրիկաներում և գործարաններում ունեցած անմիջական աշխատանքներից կտրվելու վիճակին—ծայրահեղ անհրաժեշտություն է առաջանում, վոր կուսակցական քաղաքականության լծակը դարձվի վճռականապես գործավորներ ընտրելու և վոչ-կոմմունիստական տարրերից կուսակցությունը մաքրելու կողմը՝ Ռ.Կ.Կ. յուրաքանչյուր առանձին անդամի՝ պաշտոնին վերաբերյալ իր կատարած աշխատանքի համաձայն,

այլև իբրև ՌԿԿ անդամի ճշգրիտ հաշվետվության միջոցով։

22. Կուսակցության նոր անդամները կուսակցական դիսցիպլինան խախտելու դեպքում և այլն՝ նրանց հանձնարարող կոմմունիստները յենթարկվում են կարգապահական պատժի, նույնիսկ արտաքսվում են կուսակցությունից անհեռատես ու թեթևամիտ հանձնարարությունները կրկնվելու դեպքում։

Վորպես կուսակցությունն իր համար անպիտան տարրերից պահպանելու միջոցներից մեկը՝ անհրաժեշտ է հանձնարարել, վոր հայտարարվեն կուսակցությունը մտնել ցանկացողների անունները։

23. Վոչ-բանվոր ընկերներին պատասխանատու պաշտոնների համար ընտրելիս անհրաժեշտ է հաստատել մինիմում մի տարվա կուսակցական ստաժ։ Այն ընկերները, վորոնք այդպիսի ստաժ չունեն, պետք է ամենից առաջ դրվեն անմիջական ագիտացիոն և պրոպագանդիստական գործի վրա զանգվածների մեջ։ Բացառություն է արվում նրանց համար միայն, վորոնք կուսակցության մեջ մտնելուց տալիք պաշտոնից վոչ ավելի պակաս պաշտոն են յեղել վարելիս։

24. Մյուս կողմից՝ համագումարը պարտականություն է դնում ԿԿ-ի և նրա Կազմբյուրոյի վրա խնամքով հետևել առաջացող բանվորներին և սիստեմատիկաբար ու անշեղորեն մտցնել նրանց պատասխանատու աշխատանքի մեջ կենտրոնում ու տեղերում։ Կուսակցական կյանքի ամենախոշոր բացերից մեկն է համարում համագումարը այն հանգամանքը, վոր մինչև այժմ մենք չենք կարողացել համապատասխան պաշտոնների գլուխ դնել մեր ունեցած ուժերին և չենք կարողացել բավականաչափ ազատ ասպարեզ տալ նրանց զարգացմանը։

25. Համագումարը հաստատում է Համառուսական կուսակցական կոնֆերենցիայի 1920 թվի սեպտեմբերի վորոշումները և պարտավորեցնում է Կ Կ-յին և վերստուգիչ հանձնաժողովներին վճռականապես պայքարել կուսակցության անդամների իրանց դիրքն ու նյութական առավելությունները չարաշահելու դեմ։

26. Համագումարը հիմնական խնդիր է համարում կուսակցական վայրերում կատարվելիք աշխատանքները, այլ և անկուսակցականների մեջ կատարվելիք աշխատանքները՝ կուսակցությունը պրոլետարիատի և գյուղացիության լայն զանգվածներին մոտեցնելու նպատակներով։ Դրա համար անհրաժեշտ է, վոր կուսակ-

ցության բոլոր պատասխանատու անդամները պարբերաբար համապատասխան պարտականություններ կատարեն, այսինքն, վոր նույնիսկ կուսակցական ամենազբաղված աշխատակիցների մի մասը շարունակ գործի վրա լինի պրոլետարական կյանքի ամենահոծ տեղը, կազմակերպչա-պրոպագանդիստական աշխատանքի վրա։

VI. ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆ ՅԵՎ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՊԼԱՆԱՅԻՆ ԲԱՇԽՈՒՄԸ

27. Աշխատակիցների բաշխումը պետք է կատարվի գործնական նպատակահարմարության տեսանկյունով, և կուսակցական բարձրագույն օրգանների կողմից բաշխված ընկերները պետք է ըստ կանոնի ուղարկվեն վարիչների տրամադրության տակ վորպես այս կամ այն վորակի գործավորներ, առանց վորևե լրացուցիչ մանդատների, վորոնք հատուկ լիազորվածների մանդատների բնույթ են կրում և այլն։

28. Անհրաժեշտ է սկսել կուսակցության դեռ VIII-րդ համագումարի՝ խորհրդային կամ կուսակցության աշխատանքի վրա յերկար ժամանակ յեղած աշխատակիցներին գավգյուղի և գութանի վրա աշխատելու համար ուղարկելու մասին արած վորոշումների սիստեմատիկ իրագործումը։

29. Կուսակցական լայն զանգվածներին, նաև կազմակերպության առորյա կյանքին և կուսակցության գործադիր մարմինների աշխատանքին ավելի մասնակից անելու համար անհրաժեշտ է վորքան կարելի յե՝ յեթե առանձին շտապողականություն չկա՝ մոբիլիզացիայի կամ այս կամ այն տեղափոխության համար բոլոր աչքի առաջ ունեցածների ցուցակները հրապարակել նախորոք կազմակերպության ընդհանուր ժողովներում բացատրությամբ հանդերձ, թե ինչու ցուցակի մեջ մտել են այս և վոչ թե այն ընկերները։

30. Վարչականության (ВЕДОМСТВЕННОСТЬ) դեմ պայքարելու նպատակով անհրաժեշտ է ընկերներին սիստեմատիկորեն տեղափոխել աշխատանքի մի ճյուղից մյուսը, սակայն այնպես, վոր ըստ կանոնի ամեն մի այդպիսի ընկեր կարողանա վորոշ ժամանակ մնալ միևնույն տեղը և [illegible] ցույց տա իր աշխատանքի արդյունքը և նրա համար պատասխանատու լինի կուսակցության առաջ։

VII. ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆ ՅԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԿՅԱՆՔԸ

Կուսակցական կյանքի մեջ կենդանություն մտցնելու նպատակով անհրաժեշտ է ձեռք առնել հետևյալ միջոցները.

31. Համակուսակցական, համաքաղաքական և տեղական կյանքի բոլոր կարևորագույն հարցերի քննությունը կուսակցության անդամների ընդհանուր ժողովներում, նույնիսկ բջիջներում, անհրաժեշտ է սիստեմատիկ դարձնել և իրագործել վորոշ, պարբերական, կուսկոմի մշակած ծրագրով։ Այդ ծրագրի մեջ տեղ պիտի գտնեն վորպես ընդհանուր հարցերը, վորոնք ունեն առանձին կարևոր նշանակություն տվյալ տեղի համար, նույնպես և այն հարցերը, վոր նոր է առաջադրում կուսակցական-քաղաքական կյանքը, ինչպես կուսակցական օրգանների զեկուցումները, այնպես էլ խորհրդային իշխանության օրգանների զեկուցումները։ Դրա հետ միասին կուսակցության նահանգական կոմիտեները պարտավոր են հոգալ, վոր այդպիսի քննությունը չմնա լոկ քաղաքային կազմակերպությունների սեփականություն, այլ սիստեմատիկաբար ընդգրկի ամբողջ նահանգը, վորի համար անհրաժեշտ է նահանգական քաղաքի պատասխանատու աշխատակիցներին խիստ վորոշ պլանով հերթով գործուղել այս կամ այն րայոնը շրջագայելու։ Հիշած բոլոր հարցերի այսպիսի սիստեմատիկ լուսաբանությունը կբարձրացնի կուսակցության անդամների ամբողջ զանգվածի գիտակցական վերաբերմունքը դեպի այդ հարցերը և դեպի կուսակցական կյանքի ընդհանուր մակարդակը։

32. Նույն նպատակին պետք է ծառայեն և՛ կուսակցության ղեկավար օրգանների բաց ժողովները, վորոնց անհրաժեշտ է սիստեմի տակ դնել՝ խնամքով օրակարգ ընտրելով նրանց համար այնպիսի հաշվով, վոր այդ ժողովներին ներկա լինելը կարողանա կուսակցության շարքային անդամներին մաքսիմալ օգուտ տալ։

33. Վորպեսզի ղեկավար մարմինների աշխատանքի վրա կուսակցության ստորակական կարծիքը մշտական վերահսկողություն ունենա և ղեկավար օրգաններն ու ամբողջ կուսակցությունը մշտական գործնական փոխադարձություն ունենան, ան-

հրաժեշտ է սիստեմատիկ հաշվետվություն համապատասխան կուսկոմների կողմից ոչ միայն բարձրագույն, այլ և ստորին կազմակերպությունների առաջ, այդ իրագործելով նահկոմների պարբերական զեկուցումների միջոցով քաղաքային կամ շրջանային, պատգամավորական կամ ընդհանուր ժողովներում և գավառական կոնֆերենցիաներում, գավկոմների զեկուցումների միջոցով գավառակային ժողովներում։

Շրջանային կոմիտեները քաղաքներում և գավառակայինները գավառներում նույն նպատակներով պետք է պարբերաբար հաշիվ տան իրենց գործունեության մասին խոշորագույն բջիջների ժողովներում։

X ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԲԱՆԱՁԵՎԸ

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԱԽԸՍԵԼԻՔՆԵՐ

1. Հեղափոխական մարքսիզմի կուսակցությունն արմատապես բացասում է կուսակցական կազմակերպության, վորպես նաև նրա աշխատանքի մեթոդների՝ հեղափոխական պրոցեսի բոլոր աստիճանների համար պիտանի, բացարձակորեն ճշգրիտ ձևի վորոնումները։ Ընդհակառակն, աշխատանքի կազմակերպության ու մեթոդների ձևն ամբողջովին վորոշվում է տվյալ կոնկրետ պատմական պարագայի առանձնահատկություններով և այն անելիքներով, վորոնք անմիջականորեն այդ պարագայից են բխում։

2. Այս տեսակետից հասկանալի յե, վոր աշխատանքի յուրաքանչյուր կազմակերպչական ձևն ու նրա համապատասխան մեթոդները հեղափոխական զարգացման օբյեկտիվ պայմանների փոխվելովը կարող են կուսակցական կազմակերպության զարգացման ձևերից վերածվել այդ զարգացման շղթաների. և ընդհակառակն, կազմակերպչական անպետքացած ձևը կարող է դառնալ նորից անհրաժեշտ և միակ նպատակահարմարը համապատասխան օբյեկտիվ պայմանների վերածնության ժամանակ։

3. Մի կողմից նոր ստեղծվող դրության պահանջների, իսկ մյուս կողմից կազմակերպության և նրա աշխատանքի մեթոդների ընդունված ձևի միջև հակասությունը նկատվում է ընդհանուր առմամբ ավելի վաղ, քան թե կուրսի փոփոխության անհրաժեշտություն է զգացվում վերջնականապես։ Այդ կուրսը պետք է փոխվի այն ժամանակ միայն, յերբ իրագործված է կազմակերպության նախորդ տիպի և նրա համապատասխան աշխատանքի մեթոդի առաջադրած խնդրի ընդհանուր, գլխավոր և հիմնական կողմը։

4. Կուսակցական կազմակերպության՝ այս կամ այն պատմական մոմենտում կիրառվող աշխատանքի ձևերն ու մեթոդները չի կարելի մեքենայորեն փոխադրել ուրիշ կազմակերպությունների վրա, օրինակ՝ խորհուրդների, կամ վարչական, տնտեսական բնույթ ունեցող օրգանների։ Այդպիսի փոխադրությունն անելու համար պետք կլինի կատարելապես մոռանալ բանվոր դասակարգի առաջապահի կազմակերպության (կուսակցության) և ուրիշ կազմակերպությունների տարբերությունը, դասակարգերի, աշխատավորների միջի խմբավորումների, այդ կազմակերպությունների իրանց առաջադրած այլազան խնդիրների տարբերությունը և այլն։

II. ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՐՋԱՆԸ ՅԵՎ ՄԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

5. Հեղափոխության զարգացմանը նախորդած շրջանը բնութագծվել է համաշխարհային իմպերիալիզմի զինված հարձակումով Խորհրդային Հանրապետության վրա, ճակատներում մղված կատաղի պայքարով, նախ

և առաջ արտաքին ճակատներում, յերբ սպառնալիքի տակ էր կանգնած Հանրապետության գոյությունն իսկ և յերբ Հանրապետությունը հարկադրված էր թշնամիների հարձակումները վանելով՝ իր ձեռքում պահպանել տնտեսական բնույթ ունեցող կենսական աղբյուրները — ածուխը, նավթը, հացաբեր հողերը և այլն։

6. Այդ պատճառով անմիջական, հիմնական, հարվածային խնդիրն է յեղել ռազմա-մարտական գործողության խնդիրը։ Այդ խնդրին պետք է տեղի տային մյուս բոլոր խնդիրները, որպես նաև կուսակցության դաստիարակչական խնդիրը։ Ամբողջ Հանրապետությունը վերածվել էր մի զինված բանակի, և պրոլետարիատի կուսակցությունը պետք է հարմարվեր այդ հիմնական խնդրին, որպեսզի ի վիճակի լիներ լուծելու այդ։

7. Ուստի կուսակցության կազմակերպչական ձևը այդ շրջանում պետք է լիներ կուսակցական կազմակերպության միլիտարիզացիան։ Ինչպես որ պրոլետարական դիկտատուրայի ձևն ռազմա-մարտական դիկտատուրայի բնույթ էր առել, այնպես էլ կուսակցական կազմակերպության ձևն ստացավ — և այդպիսի պայմաններում պետք է որ ստանար հեղափոխական նպատակահարմարության տեսակետից — համապատասխան բնույթ։ Դա ընդհանուր և ամբողջական առմամբ արտահայտվեց նրանով, որ կուսակցական կազմակերպությունը յենթարկվեց կազմակերպչական ծայրահեղ ցենտրալիզմի յեվ զարծավ կոլլեկտիվ մարմինների։

8. Հենց այդպես էլ կուսակցական աշխատանքի մեթոդները բխում էին մարտական գործողությունների անհրաժեշտությունից և համապատասխանում էին կազմակերպչական ձևերին։ Նրանք ընդհանուր և ամբողջական առմամբ ծանրանում էին դեպի մարտական հրամանների սիստեմը, վորոնք տրվում էին կուսակցական ղեկավար մարմինների կողմից և վորոնք կատարվում էին անհապաղ առանց քննության կուսակցության շարքային անդամների կողմից։ Տիպիկ աշխատանքներ էին չընդմիջվող մոբիլիզացիաները, նախ և առաջ ռազմական ճակատ, և ըստ այդ հիմնական տեսանկյունի՝ կուսակցական ույժերի վերաբաշխումը։

9. Կուսակցության այդպիսի ստրուկտուրայի շնորհիվ միայն աջողվեց հակառակորդների դիմադրությունը հաղթահարել, պայքարից հաղթական դուրս գալ։ Պատերազմական շրջանի համար այդ ստրուկտուրան ամենից նպատակահարմարն էր։

III. ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

10. Այդ շրջանի հիմնական հակասությունն այն հանգամանքն էր, վոր կուսակցության քանակական արագ աճումի հետ՝ աշխատանքի բնույթը խանգարում էր կուսակցության անդամների ամբողջ զանգվածի, մանավանդ նորամուտ անդամների կոմմունիստական դաստիարակությանը։ Միաժամանակ կուսակցության համարյա բոլոր անդամներին մոբիլիզացիայի միջոցով գործոն աշխատանքի լծելն արագ կերպով առաջացրեց [illegible] նրանց ամենահետամնաց խավերում ինքնագործունեության և կուսակցական կյանքի հարցերի լուծումներին մասնակցելու պահանջ, վոր հակառակ դուրս յեկավ կուսակցական կազմակերպությունների գործնականում մեջ մտած մարտական հրամանների սիստեմին և ծայրահեղ կենտրոնացումին։

11. Պատերազմի վրա արած հսկայական նյութական ծախսերը և դրանց հետևանք յերկրի միավորումը զուգահեռաբար էին ընթանում առանձնակի հարված յին վարչությունների և աշխատավորների, վորոնց թվում և՝ կուսակցական աշխատավորների, խմբակների պահպանումի անհրաժեշտության զարգացումի հետ։ Այդպիսով դրա անխուսափելի, բավականաչափ ընդհանրական — անհրաժեշտ հետևանքը յեղավ կուսակցության անդամների նյութական անհավասարության աճումն ընդհանուր աղքատացման հետ միասին։

12. Դասակարգային նախկին խմբավորումների քայքայումը (առանձնապես ինտելլիգենցիայի քայքայումը), այլև ընդիմադիր սոցիալիստական կուսակցությունների (մենշևիկների, էս-էռների) քայքայումն այդ տարրերին մեր կուսակցության շարքերը մտնելու մի հոսանք առաջացրեց, մինչ այդ տարրերն արդեն ուժաված լինելով իրանց առաջվա աշխատանքի փորձով — կուսակցության անդամների ընդհանուր զանգվածի մեջ կատարվող կուսակցական աշխատանքի համեմատական կրճատման և գործոն ու դաստիարակչական աշխատակիցների ծայրահեղ կարիքի պայմաններում — կարող փորձված էին արագ առաջանալ յերարխիական խորհրդային, պատերազմական արհեստակցական և կուսակցական սանդուղքով։

13. Հենց այդ աղքատացման ժամանակ զանգվածները սաստիկ հետամնաց կուլտուրական մակարդակի բազմում կազմակերպված ծայրահեղորեն կենտրոնացված ապարատի պահանջները բերին հասցրին բյուրոկրատական ապարատի ուռեցման և ստեղծեցին նրա առանձնահատկացումի տենդենցիա։

14. Այդպիսով պատերազմական ժամանակաշրջանն ստեղծեց մի կողմից ընդհանուր առմամբ նպատակահարմար կազմակերպություն, բայց մյուս կողմից էլ հակասությունների մի շարք առաջ բերավ։ Իսկ վերջիններս հակասություններն աճում էին քայքայման հիմունքից և այդ բոլոր կազմակերպչական ույժերի պակաս լինելուց, ուստի կենտրոնացումը զարգացնում էր բյուրոկրատականության փոխվելու և զանգվածներից կտրվելու տենդենց. պատերազմական հրամանների սիստեմն ընդունում էր հաճախ անհարկավոր ճնշումի այլանդակ ձևեր, անհրաժեշտ արտոնությունները, իբրև հող էին ծառայում զանազան տեսակ չարագործությունների համար, կուսակցական մարմինների անհրաժեշտ զարծումը դեպի կուսակցության հոգևոր կյանքի թուլացումը և այլն, վոր ամբողջական առումով բերավ հասցրեց կուսակցական ներքին ճգնաժամին։

IV. ՆՈՐ ՇՐՋԱՆ, ՆՐԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՅԵՎ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

15. Ներկա մոմենտը հատկանշվում է մի կողմից ռազմական արտաքին ճակատների համարյա կատարյալ լիկվիդացիայով, մյուս կողմից — հակա-

ռությունների ծայրահեղ սրումով յերկրի մեջ. Դավադրություններ և ապստամբություններ սարքելով՝ ոտարյերկրյա միջամտության նոր ձևը, տնտեսական ծանր ճգնաժամը և դրա հետ կապված պարենային ճգնաժամը, վերջին տարվա անբերրիությունից սաստկացած՝ հարաբերությունների խիստ սրությունը բանվոր դասակարգի և գյուղացիության մեջ, անթիվ թշնամիների դեմ չտեսնված պայքարից հյուծված պրոլետարական լայն զանգվածների հոգնածությունը,—այս բոլոր յերևույթներն ընդունեցին դեմոբիլիզացիայի շրջանում իրանց ամենավառ արտահայտությունը և նորից արտասովոր չափով դժվարացրին Խորհրդային Հանրապետության դըրությունը։

Պրոլետարիատի վրա նրանք անդրադարձան՝ բացի այդ՝ նաև այնպես, վոր թուլացավ կապը պրոլետարական առաջապահի (կուսակցության) և բանվորների անկուսակցական զանգվածի միջև, վորոնք ճգնաժամի պատճառով մասամբ ընկան մանր-բուրժուազիայի ազդեցության տակ, և վոր կուսակցության ներսում իսկ թուլացավ ներքին կապը և ցածրացավ կուսակցական կապակցությունը։

Այսպիսով ընթացիկ նեպիան հենց ինքն է հակասական բնույթ կըրում, վորքան վոր խաղաղ դրության անցնելը միաժամանակ տվյալ պատմական պայմաններում բերում հասցնում և ներքին ճակատում մղվող պայքարի նոր ձևերի։

16. Յեթե անցած ժամանակաշրջանում կուսակցությունը պետք է կենտրոնանար անմիջական մարտական խնդիրների վրա ի հաշիվ դաստիարակչական անելիքների, հիմա յել կուսակցության անդամների մակարդակի բարձրացումը՝ համակուսակցական կյանքում միաժամանակ նրանց գործոն մասնակցության հրավիրելով՝ դառնում է որվա կենտրոնական խնդիր՝ անկուսակցական զանգվածների մերձենալով յեվ կուսակցությունը հակահեղափոխական ուժերի դեմ պայքարելու մարտական պատրաստականության հասցնելով՝ կուսակցության ազդեցությունն այդ անկուսակցական զանգվածների վրա ուժեղացնելու հետ միասին։

Անհրաժեշտ են ավելի, քան յերբևիցե, կուսակցության բացարձակ կապակցություն և բացարձակ միություն, վոչ միայն ձևական ու մեքենայական, այլև գաղափարական-մարտական։ Դրան պետք է հասնել նոր հիմունքով, կուսակցության անդամների՝ վոչ մի ջանք չխնայելով բարձրացրված՝ մակարդակի հիմունքով, կուսակցության բոլոր անդամներին կուսակցության գործոն կյանքին մասնակից անելու հիմունքով, պատերազմական ժամանակաշրջանում զանազան ասպարեզներում գործած՝ կուսակցության անդամների բազմահարուստ փորձի ի մի գումարման հիմունքով։ Հարկավոր է նորից ի մի ժողովել կուսակցությունը, վոր անջատ-անջատ մասերի եր բաժանվել պատերազմի ժամանակ։ Հարկավոր է մոտեցնել «վերերն» ու «վարերը», զինվորական աշխատակիցներին ու քաղաքականներին, պրոֆեսիոնալիստներին ու խորհրդայիններին, կուսակցության հին ու նոր անդամներին, «ջահելներին» ու «ծերերին»։ Առանց այդ հիմնական խնդիրը լուծելու պրոլետարական առաջապահի հսկայական շինարարա-տնտեսական դերը չի կարող կատարվել։

17. Կազմակերպչական հին ձևը պահպանելով՝ այդ խնդիրը չի կարող լուծվել։ Մոմենտի հերթական կարիքները պահանջում են կազմակերպչական նոր ապարատ։ Այդ ձևը բանվորական դեմոկրատիայի ձևն է հանդիսանում։ Դեպի բանվորական դեմոկրատիան ուղղելիք կուրսը պետք է վերցընել նույնպիսի վճռականությամբ և նույնպիսի յեռանդով կիրառել, ինչպես անցյալ շրջանում կիրառվել է դեպի կուսակցության միլիտարիզացիան ուղղած կուրսը, վորքան վոր դա հակահեղափոխության ուժերի դեմ մղվող անմիջական պայքարի պահանջներում խոչընդոտների չի հանդիպում։

18. Բանվորական ներկուսակցական դեմոկրատիա ասելով հասկացվում է կազմակերպչական այնպիսի մի ձև, վորը գործոն մասնակցություն ունենալ է տալիս կուսակցության բոլոր՝ նույնիսկ ամենահետամնաց՝ անդամներին կուսակցության կյանքում, նրա առաջ դրված բոլոր հարցերի քննության մեջ, այդ հարցերը լուծելու մեջ, վորպես նաև գործոն մասնակցություն կուսակցական շինարարության մեջ։ Բանվորական դեմոկրատիայի ձևը չի ընդունում վոչ մի նշանակելիություն իբրև սիստեմ, այլ պահանջում է լայն ընտրականություն բոլոր հաստատությունների վարից ինչև վեր, նրանց հաշվետվության և վերաստուգության յենթակայություն և այլն։

19. **Աշխատանքի մեթոդներ** են հանդիսանում նախ և առաջ բոլոր կարևորագույն հարցերի ընդարձակ քննության մեթոդները, այդ հարցերի շուրջը յեղող դիսկուսիաները՝ ներկուսակցական քննադատության կատարյալ ազատությամբ, համակուսակցական վորոշումների կոլեկտիվ մշակումի մեթոդները, քանի դեռ այդ պահանջների վերաբերմամբ կուսակցական ընդհանուր պարտադիր վորոշումներ չեն կայացված։ Այդ մեթոդները ներկայումս նույնպիսի անհրաժեշտ բնույթ և նույնպիսի կարևորություն են ստանում, վորպես նաև մարտական հրամանների և քաղաքացիական կռվի սրացման շրջանում նրանց անմռունչ իրագործման մեթոդները։ Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր վորոշում անելուց հետո այդ վորոշումները պարտադիր են և պետք է իրագործվեն առավելագույն արագությամբ և ճշտությամբ։ Ինքընստինքյան հասկանալի յե. վոր կուսակցությունը պետք է ունենա այնքան ճկունություն, վոր անհրաժեշտության դեպքում արագ անցնի մարտական հրամանների սիստեմին։

20. Այսպիսով ներկուսակցական ամենից ընդհանուր խնդիրը հանդիսանում է վոչ թե կուսակցական շարքերի քանակական ընդարձակումը, այլ նրանց վորակական լավացումը, կուսակցության բոլոր անդամների գիտակցության, կոմմունիստական դաստիարակության, գործունեության, ինքնագործունեության և նախաձեռնողականության բարձրացումը, այլև կուսակցական բոլոր շարքերի բացարձակ միությունն այդ հիմունքով։

V. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՁԵՌՆՔ ԱՌՆԵԼԻՔ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՋՈՑՆԵՐԸ

21. Վորովհետև կուսակցության մեջ մուտք և գործել կոմմունիստական վոգով չմշակված մեշչանային-ինտելլիգենտական ու կիսա-ինտելլիգենտ և մանր բուրժուական տարրերի վորոշ մաս, վորին դեռ չի սովորել կուսակցությունը հարազատ համարել, վորովհետև կոմմունիստ-բանվորների ահագին մասը համարյա ամբողջովին կլանված է խորհրդային ընդարձակվող շինարարության պաշտոններով և ստիպված է նշանավոր չափով կտրվելու ֆաբրիկաներում ու գործարաններում ունեցած իր իսկ գործից, այլև վորովհետև կուսակցությունը քաղաքացիական կռվի ճակատներում խոշոր կորուստներ է տվել,—ուստի ծայրահեղ անհրաժեշտություն է առաջ գալիս, վոր կուսակցության քաղաքականության լծակը վճռականորեն դարձնվի դեպի բանվորներ ժողովելու կողմը և կուսակցությունը մաքրվի վոչ-կոմմունիստական տարրերից՝ հաշվի առնելով ՌԿԿ ամեն մի առանձին անդամին նրա ի պաշտոնե կատարվող աշխատանքի համեմատ, այլև վորպես ՌԿԿ անդամի։

22. Կուսակցական կարգապահությունը կուսակցության նոր անդամների խախտելու դեպքում նույն այդ նոր անդամներին հանձնարարող կոմմունիստները յենթարկվում են կարգապահական պատժի, իսկ անհեռատես և թեթևամիտ հանձնարարությունները կրկնվելու դեպքում նույնիսկ կուսակցությունից վտարվում են։

Իբրև կուսակցությունն անվստահ տարրերով փտրվելուց պահպանելու մի միջոց՝ անհրաժեշտ է հանձնարարել հայտարարելու կուսակցության մեջ մտնել ցանկացողների անունները։ Հանձնարարողները պետք է մի տարվա կուսակցական ստաժ ունենան։ Վոչ—բանվոր և գյուղացի ընկերների համար թեկնածուական ստաժը հասցնվում է մինչև մի տարի։

23. Համագումարը պարտավորություն է դնում ԿԿ-ի և նրա Կազմբյուրոյի վրա խնամքով ուշ դարձնելու աչքի ընկնող բանվորների վրա և սիստեմատիքաբար ու անշեղ կերպով նրանց մտցնելու պատասխանատու աշխատանքի մեջ թե կենտրոնում, թե տեղերում։ Համագումարը կուսակցական աշխատանքի ամենախոշոր պակասություններից մեկն է համարում այն հանգամանքը, վոր մինչև օրս կուսակցությունը դեռ չի կարողացել համապատասխան պաշտոնների վրա դնել մեր ունեցած ույժերին և նրանց զարգացմանը հարկավոր ազատություն տալ չի կարողացել։

24. Համագումարը հաստատում է 1920 թվի Համառուսական կուսակցական կոնֆերենցիայի վորոշումները և պարտավորություն է դնում ԿԿ-ի և վերստուգիչ հանձնաժողովների վրա վճռականորեն պայքարելու կուսակցության անդամների իրանց դիրքն ու նյութական առավելությունները ի չարը գործադրելու դեմ։

25. Համագումարը հիմնական անելիք է համարում կուսակցական վարերում աշխատելը, այնպես էլ կուսակցությունը պրոլետարիատի և գյուղացիության լայն զանգվածներին մոտեցնելու նպատակով անկուսակցականների մեջ աշխատելը։ Դրա համար անհրաժեշտ է վոր կուսակցության բոլոր պատասխանատու անդամները համապատասխան պարտականություններ կատարեն պարբերաբար, այսինքն վոր կուսակցական նույնիսկ ամենազբաղված գործավորների մի մասը շարունակ գործի լինի պրոլետարական կյանքի ամենահոծ տեղում կազմակերպչական-պրոպագանդիստական աշխատանքի վրա։

VI. ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԱ ՅԵՎ ԳՈՐԾԱՎՈՐՆԵՐԻ ՊԼԱՆԱՅԻՆ ԲԱՇԽՈՒՄԸ

26. Աշխատավորների բաշխումը գործնական նպատակահարմարության տեսանկյունով պետք է կատարվի, վորի ժամանակ կուսակցական բարձրագույն օրգաններն ընկերներին բաշխելիս պետք է ըստ կանոնի նրանց ուղարկեն վարիչների տրամադրության տակ իբրև այս կամ այն վորակի աշխատակիցների՝ առանց վորևէ լրացուցիչ մանդատների, վորոնք հատուկ լիազորվածների մանդատների բնույթ կրելիս լինեն և այլն։

27. Անհրաժեշտ է սկսել սիստեմատիք կերպով իրագործել խորհրդային կամ կուսակցական աշխատանքի վրա յերկար ժամանակ յեղած աշխատակիցներին դազգահի (станок) և գութանի վրա աշխատելու համար ուղարկելու մասին կուսակցության դ՝ ռ VIII համագումարի արած վորոշումները, և այդ նոր գործի վրա ուղարկվողները պետք է դրվեն բանվորների կյանքի սովորական պայմաններում։

28. Կուսակցական լայն զանգվածներին թե կազմակերպության առօրյա կյանքին և թե նրա գործադիր մարմինների աշխատանքին էլ ավելի մասնակից անելու նպատակներով անհրաժեշտ է ըստ կարելույն՝ յեթե առանձին շտապողականություն չկա՝ մոբիլիզացիայի կամ այս կամ այն տեղափոխության համար բոլոր նշանակվածների ցուցակները նախորոք հայտարարել կազմակերպության ընդհանուր ժողովներում բացատրությամբ հանդերձ, թե ինչու ցուցակի մեջ մտել են այս և վոչ թե այն ընկերները. այն դեպքում, յերբ դա անկարելի յե, բացատրություններ տալ մոտակա ընդհանուր ժողովներում։

29. Ցենթակայության դեմ պայքարելու նպատակներով անհրաժեշտ է ընկերներին սիստեմատիք կերպով տեղափոխել աշխատանքի մի ճյուղից մյուսը, սակայն այնպես, վոր ըստ կանոնի ամեն մի այդպիսի ընկեր կարողանա վորոշ ժամանակ մնալ միևնույն տեղը և այդպիսով ցույց տալ իր աշխատանքի արդյունքը և դրա համար պատասխանատու լինել կուսակցության առաջ։

VII. ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԱ ՅԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԿՅԱՆՔԸ

30. Կուսակցական կյանքն աշխուժացնելու նպատակով անհրաժեշտ են հետևյալ միջոցները.

ա) Համակուսակցական, ընդհանուր-քաղաքական և տեղական կյանքի

բոլոր կարևորագույն հարցերի լայն քննությունը կուսակցության անդամների ընդհանուր ժողովներում, նույնիսկ բջիջներում, անհրաժեշտ է դարձնել սիստեմատիկ և իրագործել վորոշ, կուսկոմի կողմից պարբերաբար մշակվող ծրագրի հիմունքով։ Այդ ծրագրի մեջ տեղ պիտի գտնեն վորպես տվյալ տեղի համար առանձին կարևոր նշանակություն ունեցող ընդհանուր հարցերը, այնպես էլ այն հարցերը, վոր նոր կառաջադրի կուսակցական-քաղաքական կյանքը, ինչպես կուսակցական մարմինների զեկուցումները, այնպես էլ Խորհրդային իշխանության մարմինների զեկուցումները։ Այդ ժամանակ կուսակցության կոմիտեները պարտավոր են հոգալու, վոր այդպիսի քննությունը լոկ քաղաքային կազմակերպությունների սեփականություն չլինի, այլ սիստեմատիկ կերպով ընդգրկի ամբողջ նահանգը, վորի համար անհրաժեշտ է պատասխանատու աշխատակիցներին խիստ վորոշ ծրագրով հերթով գործուղել այս կամ այն րայոնները շրջագայելու։ Միայն մատնանշված բոլոր հարցերի այդպիսի սիստեմատիկ լուսաբանությունը կբարձրացնի կուսակցության անդամների ամբողջ զանգվածի գիտակցական վերաբերմունքը դեպի այդ հարցերը և կբարձրացնի կուսակցական կյանքի ընդհանուր մակարդակը։

բ) Կուսակցության ղեկավարող մարմինների բաց ժողովները, վորոնց անհրաժեշտ է սիստեմի տակ դնել՝ խնամքով որակարգ ընտրելով դրանց համար՝ այնպիսի հաշվով, վոր այդ ժողովներին ներկա գտնվելը կարողանա կուսակցության շարքային անդամներին մաքսիմալ օգուտ տալ։

գ) Ղեկավար մարմինների աշխատանքի վրա կուսակցական հասարակական կարծիքի մշտական վերահսկողությունն և ղեկավար մարմինների ու ամբողջական առմամբ կուսակցության մշտական գործային (деловое), փոխազդեցություն, համապատասխան կուսկոմների սիստեմատիկ հաշվետվության կիրառումը վոչ միայն բարձրագույն, այլև ստորին կազմակերպությունների առաջ՝ նահկոմների կողմից պարբերական զեկուցումներ տալու միջոցով քաղաքային կամ րայոնական, պատգամավորական կամ ընդհանուր ժողովներում և գավկոմների գավառական կոնֆերենցիաներում, գավառակային ժողովներում։ Րայոնային կոմիտեները քաղաքներում և գավառակայինները գավառներում պարբերական հաշիվ են տալիս խոշորագույն բջիջների ժողովներում իրանց գործունեության մասին։

31. Կուսակցական բարձրադիր մարմին թույլատրվում է արձակել ստորին կազմակերպություններն այն դեպքում միայն, յերբ ստորին կազմակերպությունն ակներև կերպով խանգարել է կուսակցական համագումարի վորոշումները, համագումարի վորոշումների վրա հիմնված և այդ վորոշումները զարգացնելու համար յեղած կարգադրություններն ու շրջաբերականները։ Մնացած բոլոր դեպքերում բարձրադիր մարմինը դիմում է համապատասխան կոնֆերենցիա կամ պատգամավորական ժողով, ուր և լուծվում է հասունացած հարցը կամ միջնադեպը։ Նախքան նշած ձևով հարցը լուծվելը՝ կուսակցական բարձր մարմնի վորոշումի կիրառումն ստորին մարմինը չի կասեցնում։

ՀՀ Ազգային գրադարան
NL0188210

ԳԻՆՆ Է 15 ԿՈՊԵԿ